



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3604-3607





R010

Թ. ԶՈՐԴԱՐԵԱՆ

491.99-8

# ՄԵՂՐԱԳԵՏ

ՄԻԶԻՆ ԲՆԹԱՅՔ

Բ. ՏԱՐԻ

ԼՈՒՍՈՂԲԻՒԹ  
Հրատարակչական Ընկերութիւն



Խիւ 5

ՎԿ. ՊԱԼԻՄ

ՏՊԱՐԱՆ ՀԱՐԱԲԱՆ

1913

11931



12272-58

Գպրոցական նախորդ տարեշրջանի սկիզբը մեր  
բաժ յայտարարութեան համաձայն, լոյս կընծայենք  
ահա ՄԵՊՐԱԳԵՑ ներու միջին ընթացքի Ա. Է. Բ. տա-  
րիները, այն լի յոյսով որ այս երկու գրեթերը եւս նոյն  
շերմ ընդունելութեան պիտի արժանանան՝ ինչ ընդու-  
նելութիւն որ գուան տարրական Ա. Է. Բ. տարիները:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐ

Ա. Պոլիս 1913



## ԵՐԱՍԽԻ ՎՐԱՅԷՆ

1

— Հայտէ, սպիտի քշեմ, նստեցէ՛ք . . .

Միայն հայրս կը մնար դուրս : Կանգնած բազմաթիւ գիւղացիներու մէջ՝ կը խօսէր սնննց հետ և հրաժեշտի բարեւը կու տար :

Ամէնքս նստեր, աեղ էինք բաներ այդ մեծ փուրկօնին մէջ, կծկուած տախտակէ կամարին տակ : Կերթացինք, ամբողջ ընտանիքով և լնդ միշտ . կը գաղթէինք գեղէն :


Շարժեցաւ փուրկօնը, հեռացուց մնդ գիւղի տեսքէն :

Առջև փուռւած էին ընդարձակ, ժպառւն դաշտեր՝ լի բազմատեսակ և գոյնզգոյն ծաղիկներով . կը կարկաչէին առուակները, կը ճլուրլազին թուչտները, և մեր փուրկօնը կը վազէր, կը զլորուէր այդ ամէնուն մէջէն :

Մէկ քանի անգամ վար ցատկեցի կտոքէն, ծաղիկներու փունջեր նետեցի ներս, ծառերէն ճիւղեր կտրաեցի, յետոյ նորէն հեծայ փուրկօնին ետեւը՝ իմ առարկիս վրայ, ու պոռացի եղբայրներուս :

— Տէ՛, տղմ'ք, բան մը երգենք . . .

Ասոնք ալ ձայնակցեցան ինձի, ու սկսոնք երգ մը,



բայց շուտով ստիպուեցանք լուռ կենալու , որովհետեւ փուրկօնին ցնցումները կը փշրէին , կը ջարդէին թէ՛ մեր կողն ու սակորը , թէ՛ մեր երգը . . .

Մութին հասանք գիւղ մը . իսկ միւս տուտուն շուտով դարձեալ լեցուեցանք մեր կառքին մէջ , և սկսանք իչնել դէպի տւագուա ու ընդարձակ դաշտ մը՝ անցնեալով կոյս-կոյս րլու բներէ :

Օ՞չ , դաշտ կըսեմ , բայց աւելի ճիշտ կըլար՝ անապատ բուի :

Ո՞չ մէկ ծառ : Նոյնիսկ խռաը քիչ էր , դեղնած ու չորսած : Շուրջու ամբողջ տւազ է , բայց աւելի հող ու անտանելի փոշի : Եւ ինչպիսի փոշի : Ամպ , կատարեալ ամպ էր՝ որ կը չըլապատէր մեր փուրկնը :

Եւ սե բան չի մնայ : Փոշին չերտ կապեց մեր լաթերուն ու մազերուն վրայ . հովը փչեց ու փչեց , տաք , խեղդող հով մը , մինչեւ որ վերջապէս հատան տւազները և կրցանք բանալ աչքերնիս ու բան տեսնել :

Եւ առաջին բանը որ տեսանք , գարմանքէն սպուացինք ամէնքս ալ :

Ճիշտ մեր դիմացը , ծանր ու միծ , կը սահեր-կերթար վերէն վար՝ լայն , շատ լայն գետ մը , պղտոր ու կարմիր ջրերով :

— Երա՛սիւ—լսաւ հայրս . Երասիւ գե՛տն է :

2

Քիչ ետք մեր կառքը կոնդ առաւ ճիշտ գետափին վրայ : Վար իջանք : Իջեցուցին բոլոր բեսները , միծ կարպետ մը վուեցինք գետինը , մայս սփոռոյը բացաւ և նստանք ճաշի :

Գետեղը հոտ ամայի էր : Հողաչէն խրճիթ մը միայն կար , մէջը զինուորներ , որոնք ներս կը մանէին ու դուրս կելլին . հօրմէս ուղեցին անցագիրը , ներս տարին ու ետ բերին տուին :

Գետին միւս ափը պարսկական էր :

Ճաշը վերջացնելէ յետոյ , մէնք՝ մանուկներս , իջանք գետափ և սկսանք զննել եղերքին կպած մնծ նաւ մը :

Այդպիսի նաւ ես երբեք չէի տեսեր պատկերի վրայ : Խոշոր արկղ մըն էր ասիկա , շիտակ սնտուկ , չորս կողմը փայտէ վանդակ շինուած : Երկար ձող մըն ալ , որ թիւկն ըլլալու էր , գուրս կելլէր արկղին մէջէն ու կերթար , կը խրուէր ջուրին մէջ :

— Լա՛ստ է , — հասկցուց մեղի հայրս , որ ինք ալ մեր քով էր եկեր :

Ասո՞վ պիտի անցնէինք գետէն : Այդ ջրոտ , ցեխոտ ու լոլրծուն յատակին վրա՞յ պիտի հաւաքուէինք մննք : Հաստ միր ֆուրկօնը , ապրա՞նքը , ձիե՞րը :

— Կը տեսնէք , — ըստ հայրս ժարտելով . ամէնքն ալ կանցնին : Գայցէ՛ք առայժմ գետափին հեռու : Մի՛ մօտենաք ջրին : Այս տեղ ափերը կը վկն յանկարծ : Իսկ եթէ ջուրն ինկաք , ա՛լ ազատում չունիք : Օ՞ , Երասիւ շատ ու շատ արիւն է խմեր , անթիւ դիակներ է քշեր ու տարեր , այս մերկրին բնակիչներէն հազարաւորներ խեղդեր . . . : Արիւնխում գետ է Երասիւ :

Ու լոեց : Կը սպասէինք որ խօսէր , պատմէր թէ՛ ի՞նչ արիւն էր այդ , ի՞նչ դիակներ , ե՞րբ և ինչո՞ւ :

— Հազրի'կ , — ըսի ես . պատմէ՛ , ինդքեմ : Ի՞նչ դիակներ են . գե՞տն է յորդեր թէ կոիւ է եղեր հոս :

4

Եւ հայրս զնաց, նստեցաւ քարի մը վրայ, ու սկսաւ պատմել:

— Ասկէ շատ ու շատ տարիներ առաջ — կը լայ մօս 300 տարի — այս կողմերը լեցուն էին չեն ու մեծ գիւղեր: Սկսած այս գեղէն մինչեւ շատ հեռու քաղաքները՝ լեցուած էին Հայերով, ծաղկած դաշտեր, հարուստ բնակիչներ...

Բայց ահա Պարսիկները կոիւ սկսան Օսմանցիներուն դէմ, և գացին քարուանդ ընկելու մէկմէկու երկիրներ:

Կոիւը տեղի կունենար Հայերու բնակած տիղերուն մէջ: Երկու կուռող ազգերուն հազարաւոր գօրքերը մորիխներու պէս կիյնացին արտերը, ոսքի տակ կուտային, կը փղնէին գեղ ու քաղաք, կայրէին ու կը քանդէին ամէն բան: Կաշխատէին այնպէս ամայացնել երկիրը, որ դէմէն եկող թշնամին ո՞չ ուտելու բան գտնէր, ոչ ալ բնակելու տեղ:

Սկիզբը, Պարսիկները յաղթեցին ու գացին սռաջ: Բայց յետոյ սկսան յաղթուիլ ու ետ քաշուիլ, որ երթան իրենց երկիրը մանեն, գետին այն միւս ա՛փը ։ Ետ կը քաշուէին, բայց անցած տեղերնին ինչ գիւղ ու քաղաք որ կար՝ քար ու քանդ կընէին, հայ բնակիչներն ալ բանի դուրս կը քէին իրենց տունու տեղէն, և ոչխարներու պէս իրենց առջեւը խառնած՝ մղկացներով կը բերէին, կը հաւաքէին այս տեղ:

Ալ մարդ չի թողուցին, տղայ, աղջկի, կին ու էրիկ մարդ անխնայ տուին մտրակի տակ, ու համար-հազարներով առին ու բերին՝ գետին անցնելու, որպէս զի անոնք Օսմանցիներուն տուն ու հաց չի տան և չօգնեն:

Կը շատապեցնէին, որովհետեւ թշնամին կուգար, կը համնէր:

Չի թողուցին մինչեւ անգամ՝ որ իրենց հետ լախ կամ

ուտելիք առնեն: Ով որ ինչ կրցաւ՝ շուտով կապեց մէջքը եթէ ձի կամ էշ ունէր՝ անոնց վրայ, մեծ մասը ունիքով, մըտքակի ու վայտի հարուածներու տակ՝ կերթային փոշեթաթախր յոգնած:

Եւ գօրքերը անգթօրէն կը սպաննէին ով որ կը յոգնէր ևս կը մնար . . . կը սպաննէին հիւանդները, ակարները:

Մայրերուն ձեռքէն մանուկները խվելով՝ մէկ կողմ կը նետէին. կը մորթէին, քարերէն վար կը նետէին ծերերը և երբ շունչ չէր մնար գիւղերուն մէջ, կրակի կուտային տուն ու խոափ դէղ, արտ ու ամբար . . .

Հազար-հազար կին ու աղջկի, էրիկ մարդ ու մանուկ բերին, հաւաքեցին այս ողտոր ջուրերուն քով և սկսան անցնել զանոնք գետէն:

Անյներ, բայց ինչո՞վ: Հաղիւ մէկ քանի լաստ ու նաւակ կար, Քիչ-քիչ անցնիլը երկար կը քշէր. թշնամին կը հասնէր, պէսք էր շատապել . . .

Եւ ահա թագաւորը հրամացեց որ քչեն, ջուրը լեցնեն ամենքը՝ կին, մարդ թէ մանուկ: Սկսաւ զարհութելի տեսարն մը:

Զօրքերը, ձի հնձած, սուրերու և մորակներու, վայտերու և հրացաններու հարուածներով՝ ժողվեցին այդ հազարաւոր թշնամիները ու քշեցին ջուրը . . . ձիչ, աղաղա՛կ, լաց ու կո՛ծ . . .

Գետը սեւցաւ մէջը լեցուածներով: Կը խեղդուէին, օդնութիւն կը կանչէին . . . Զուրն իր ասկի կանչէր մանուկները, կիները, լողալ չզիացողները: Լողան ալ օգուտ չունէր. ո՞վ կինար դէմ դնել այս ալիքներուն . . . Կը խեղդուէին, չի կար օդնուզ:

Կէսէն աւելին խեղդուեցաւ, ջուրին երեսը ծածկուեցաւ.

գլուխներով . իսկ ափերուն վրայ դիզուեցան դուրս նետուած  
տիակները . հարխւրաւո՞ր , հաղարաւո՞ր դիակներ . . . : Երասխը՝  
կարմիցաւ , և այս բոլոր սարերն ու ձորերը լեցուեցան մեռ-  
մողներու ճիչ ու լացով , յուսահատ աղաղակներով . . . :

Հայրս լոեց և տիսուր ու մտածկոտ գլուխը կախեց  
վուրծքին վրայ . . .

Կէսօրէն վերջ , նախ բեռները անցուցինք գետէն , յետոյ  
մննք անցանք և շարունակեցինք մեր ճամբան :



## ԱՇՈՒՆ

Դաշտ ու այգի դեղին հազան ,  
ծառ ու ծաղիկ մերկացան .

Բովր փշեց հազար բերան .

Ճի կայ ոչ հունձի , ոչ ալ ցան :

Օդը մըռայլ , ցուրտ ու տիսուր ,  
արեւն հիւանդ է վերը .

մեզն է պատեր սար ու բլուր ,  
ա՛լ մարդ չի կայ դաշտերը :

Սեւ ագռաւը ծառին վրայ՝  
ձմբան գոյժն է որ կու տայ .  
մարդ ու գազան տունեն , որչեն  
ծերուկ հիւրին կըսպասեն :



## ՊԱՏԿԵՐԸ

Նկարիչ մը նկարած էր փոքրիկ , գեղեցիկ պատկեր մը և  
այնպէս տեղաւորած էր՝ որ երենայ հայելին մէջ : Այսպէս  
ըրած էր , որովհետեւ խորհեր էր . «Հայելին պիտի կրկնապատկէ  
տարածութիւնը՝ պատկերին ու նայողին մէջ , ու ացդպիսով  
պիտի մեզմացնէ դոյներուն պայծառութիւնը՝ աւելի ուժեղաւ-  
ցնելով պատկերին տապաւորութիւնը :»

Կատուն այս պատկերին համբաւը տարաւ միւս կենդա-  
նիներուն :

Կենդանիները շատ կը յարգեին կատուն , համարելով զայն  
բարեկիրթ և նրբաճաշակ : Այս պատճառով , միշտ ուրախու-  
թեամբ կը լսէին անոր պատմածները :

Եւ երբ որ պատկերին լուրը տարաւ , անոնք նախ ուղե-  
ցին հասկնալ թէ՝ ինչ է այդ «պատկեր» ըսուած բանը :

Կատուն պատասխանեց .

— Հարթ , զարմանալի կերպով հարթ ու ողորկ բան մըն  
է , և սիրուն , շատ սիրուն :

Կենդանիները սաստիկ հետաքրքրուեցան , և յայտնեցին  
թէ ինչ ըսես կուտան , միայն թէ անզամ մը տեսնեն պատկեր  
ըսածդ :

Արջը հարցուց .

— Բայց իսկապէս անոր ի՞նչ բանն է գեղեցիկը :

— Անոր տե՛սքը , — պատասխանեց կատուն :

Կենդանիները քիչ բան կը հասկնացին կատէ և կը  
շարունակէին աւելի ու աւելի հետաքրքրուիլ :

Վերջապէս կովը հարցուց .

— Իսկ այդ «հայելի» ըսածդ ի՞նչ է , որուն անունը  
առուիր :

— Տեսակ մը ծակ է պատին մէջ : Անոր մէջ որ նայիս՝ կը տեսնես պատկերը : Իսկ պատկերը անքան սիրուն, այնքան հիմնալի է և իր անողասմանի գեղեցկութեամբը այնքան կազդէ՝ որ կրնաս խելքդ թռյնել :

Մինչև այդ ատեն՝ էշը լուռ էր . բայց այս անգամ իր կասկածը յայննեց : Իրեն որ հարցնէք, աշխարհքիս մէջ բան մը չի կայ, որուն համար մէկը խելք թռյնէ . ուրիմն, կերւի կատուն սխալեր է . պատկերը իր ըսածին պէս այդքան ալ գեղեցիկ ըլլալու չէ :

Իշուն կասկածները պաղ ջուր լեցուցին կենդանիներուն գլխուն : Եւ կատուն տուն գարձաւ վիրաւորուած :

## 2

Երկու օր, մէկ խօսք չըսին պատկերին վրայ . բայց յիշոյ, հետաքրքրութիւնը նորէն արջնցաւ, և կենդանիները սկսան նախատել էշ՝ որ անտեղի կասկածներով պաղեցուց իրենց սիրու :

Այն ատեն, էշը համգիստ կերպով յայտարարեց որ՝ շատ գժուար բան չէ սոուզելը թէ ո՛վ է իրենցմէ իրաւացին . ինք կերթայ և անձամբ կը նայի պատի ծակին մէջ, որուն «հայելի» կըսեն : Կերթայ և լուր կը բերէ :

Կենդանիները շատ ուրախացան և կը խնդրէին որ անմիջապէս երթայ :

«Վրայ զիստւ», ըստ էշը ու մեկնեցաւ :

Էշը սակայն չի տեսաւ պատկերը, որովհետև չգիտնալով թէ ուր պէտք է կամգնիլ, աեղաւորուած էր պատկերին ու հայելին մէջտեղ :

Եւ վերադառնալով՝ այսպէս յայտարարեց :

— Կատուն սուտ է . ծակին մէջ ևս միմիայն էշ տեսայ :

անոր ըսած հարթ, ողորկ բանին նշովն անգամ չի կայ . . . առջեւս կանգնած էր գեղեցիկ ու վայելչակազմ էշ մը, բայց ուրիշ ոչինչ :

— Աօտ կեցե՞ր էիր արդեօք, լաւ կրցա՞ւ զատել աչքու,

— Հարցուց վիզը :

— Ես այնքան մօտ էի կանգնած, որ զրեթէ փինչս կը դպնար անոր . լաւ տեսնելուն խօսքը կայ :

— Զարմանալի՛ ինան, — ըստ վիզը . առաջ կատուն երբեք սուտ չէր խօսեր : Անհրաժեշտ է որ մէկ ուրիշն ալ երած թայ տեսնէ : Հեղ մը դուն գնա, ա՛րջ, և դարձիր պատոմէ՛ տեսածդ :

Սրջը զնաց, և վերադառնալով ըստ :

— Երկուքն ալ սուտ կը խօսին . ծակին մէջ կանգնած էր արջ մը :

Կենդանիները ապչեցան :

Ամէնքն ալ կուզէին մէկիկ մէկիկ երթալ, նայիլ այդ ծակին մէջ, իմանալու համար թէ ո՛վ է իրաւացին : Փիզը զանք մէկիկ մէկիկ խրկեց «հայելի» ըստած բանին քալ :

Եւ կովը միայն կով անսաւ, վազը՝ վազը, առիւծը՝ առիւծ, բորենին՝ բորենի, ուզուը՝ ուզու :

Այն ժամանակ, վիզը համբերանքը կորսնցուցած, յայննեց թէ ինք կերթայ և կը սառուզէ ճշմարտութիւնը :

Փիզը վերադառնաւ զայրացած . սամիօս անուանեց իր բոլոր համասակները, իսկ կատուն համար ալ ըստ թէ մտքով ու հոգիով կոյք է : Վերջը, քիչ մը հանդարակէ ևսք, յայտարարեց թէ ով որ կոյք չէ՝ պիտի տեսնէ թէ այդ ծակին մէջ փիզէ զատ ուրիշ բան չի կայ . . .

## ՃԵՐՄԱԿ ՔՕՂԸ

Մաճառ կոմսը կը հեծէ բանալին մէջ, չզթաներու բեռին տակ : Իր երկրին դասը պաշապանած է, կուռած է իր հայրենիքին համար . ահա ինչո՞ւ պիտի սպաննեն զի՞նք :

Հազիւ քսան տարեկան է : Խնքվինքը դագաղին մօտ չի զգար, ինչ որ մմախթարութիւն մը պիտի ըլլար, այլ կը զգայ կախաղանին մօտ, որուն վրայ իր մարմինը ճարակ պիտի ձգույ ագռաւներուն :

Կը քնանայ իր յարդէ մահիճին վրայ, մահոգ ու հանդարու, մանկան մը պէս :

Մօրը տուաւ իր վերջին համբոյը լալաղին .

— Մայրի՛կ, տե՛ս մէկ հասիկ զաւակդ. վերջանալու մօտ է անոր կեանքը . իր այնքան փառաւոր անունը պիտի ննջէ խորհրդաւոր գիշերաւան մէջ : Մամակցեցայ շատ պատերազմներու, յաղթանակներ տարի շատ մը յեղափոխութիւններու մէջ . բայց վաղը, մայր, պիտի դողամ կախաղանին առջեւ :

Մայրը ըստ անոր .

— Մի՛ վախնար, զաւա՛կս, ծունդի պիտի գամ կայսերական գահուն առջեւ . անոր վրայ նստողը բռնաւոր մըն է, բայց մօր մը աղերսը պիտի կրնայ յուղել անոր սիրար, երբ քեզ անցնեն մահուան ճամբուն վրայէն, ես պատշգամէս պիտի նայիմ քեզի և պիտի երեցնեմ այս ճերմակ քողը : Նշան է թէ՝ դուն մահուան կը դիմես . արհամարհէ այն տեն մահը, և անոր առջեւ աներկիււը եղիր : Մաճառական արիւն չունի՞ս դուն, տղա՛ս : Բայց, երբ տեսնես որ դէմքս ծածկուած է այս ճերմակ քողով, նշան է թէ՝ կայսրը քեզի ներում չողհած է :

## 2

Ահա ասոր համար է որ կոմսը խաղաղիկ կը քնանայ իր կեանքի վերջին օրը :

Երազին մէջ կը տեսնէ իր մայրը՝ պատշգամն եղած և դէմքը ճերմակ քողով ծածկուած :

Կը հաչէ զանգակը : Փաղացին մէջ ամբոխը կը յառաջանայ՝ հանդարու ու լուսու, հետեւելով դահիճին : Պատուհանները լեցուն են հետաքրքիրներով, որոնք իր անցքին վրայ՝ արցունքներ և հեծեծանքներ կը թափին : Բայց ինք ոչինչ կը տեսնէ . միայն, աչքերը յառած պատշգամին՝ կը նայի ուր իր մայրը կեցած է, դէմքը ծածկուած ճերմակ քողով :

Ու կոմսը, ուրախ և արիացած, կը հետեւի ամբոխին՝ հասաւաս քաղերով . ո՛չ, չի գողգզար ան . և երբ դահիճը կը կեցնէ զի՞նք բարձրաւանդակին վերջին աստիճանին վրայ, կը ժաղակ կեռ . . .

Հազար ճերմակ քողը :

Կատակ մըն է, որ իր մայրը երեակացած է՝ իր անհուն վշակին մէջ, որպէսզի չտեսնէ, մահուան ժամուն, իր զաւիին սարսապիլ :



## ՏԷՄԻՐ-ՂԱՅԱ

Քամին հանդարաւեցաւ : Երեւի, այսօր ալ մննք ճունուն վրայ պիտի գիշերէինք : Երկիւայմանի սրբնթաց նաւը՝ մէկ կողմէն մընուն վրայ կը ճօճէր ծուլօրին : Բացուած էին թաց առագաստները :

Սպիտակ մառախուղը ամբողջովին չըւ-



Չափառեց նաւը : Ո՞չ աստղ կերեւի , ո՞չ երկինք , ո՞չ ծով և  
ոչ ալ գիշեր :

Ծեր , կեզառու ու բոպիկ նաւապետը՝ Աէլիտ-Ալին , մեզմ  
ու լուրջ ձայնով հին պատմութիւն մը կընէ , որուն որսանց  
հաւատալ կուզեմ ես :

1

«Զինքը կը կոչէին Տէմիր-Ղայա . մեր լեզուով կը նշա-  
նակէ երկաթեայ-Ժայռ : Այդ անունը անոր համար էին առեւր  
իրեն , որովհետեւ ո՞չ վիշտ և ոչ ալ ահ կը զգար ան :

«Իր խմբով աւագակութիւն կընէր թէ՛ Ստամբուլի շր-  
ջակաները , թէ՛ պանծալի թեսալիոյ մէջ , թէ՛ ժայռոտ Մակե-  
դոնիոյ մէջ և թէ Պոլիարական տեղածրար արօտասեղինե-  
րուն վրայ :

«Իննիսունը ինը մարդ մեռաւ անոր ձեռքէն , որոնց մէջ  
կային կին , ծեր ու մանուկ :

«Եւ ահա , օր մը , լեռներուն մէջ զինք՝ Հրջագառեց  
պիտիշահին — թող Ալլահը երկա՛ր քնէ անոր կեանքը — ու-  
ժեղ զօրքը : Երեք օր Տէմիր-Ղայան ետ ետ մղուեցաւ , ինչ-  
պէս չուներուն ձեռքն ինկած գայլը : Չորրորդ օրուոյ առ-  
տուն , անիկա պատահց թշնամին շղթան , բայց ... մինակ :  
Քնիերներուն մէկ մասը ինկաւ կատաղի հստակնդման ժամա-  
նակ , մնացածներն ալ զլսաստեցան Ստամբուլի լայն հրա-  
պարակին վրայ :

2

«Անմատչելի քարայրին մէջ , խարոյկին մօտ՝ պառկած էր  
պիրաւոր ու արխնաթաթախ Տէմիր-Ղայան , ու թիրեն առպատ-  
առն էին տուեր լեռնային հովիւները :

«Եւ ահա , կէս գիշերին , իրեն յայտնուեցաւ լուսափայլ  
հրեշտակը՝ բոցեղէն թրով : Տէմիր-Ղայան ճանչցաւ մահուան  
պարեր և երկինքի առաքեալ Ալլահէլը . ու ըստաւ :

— «Թող կատարուի Յլլահին կամքը . ես պատրաստ եմ:»  
«Բայց հրեշտակը պատասխանեց :

— «Ո՞չ , Տէմիր-Ղայա , դեռ քու ժամդ չէ հասեր : Լոէ՛  
Աստծոյ կամքը : Մահուան անկրկնէն ելլելուդ պէս , կեր-  
թաս , գեսնէն կը հանես քու գանձերդ և ոսկիի կը վերածնս  
զանոնք : Յեսոյ , կը քաղիս ուզիլ դէպի արեւելք . կերթաս ,  
այնքան կերթաս՝ մինչև որ հասնիս այն աեզր , ուր եօթը  
ճամբայ իրարու կը միանան : Հոն առւն մը կը շնես զով սեն-  
եակներով , լայն բազկաթռաներով ու մաքուր ջուրի շատրո-  
ւաններով՝ լուայուելու համար , ուտելիք-խմելիքով՝ ճամ-  
բորդներու համար , և անուշաբոյր սուրճով ու հստաւէտ նար-  
կիւով՝ յոզնածներուն համար : Կանչէ՛ այն բոլոր մարդիկը ,  
թէ՛ հետեւակ , թէ՛ ձիաւոր , որմնք կանցնին քու տանդ մօ-  
տէն և ծառայէ՛ անոնց . յետին սարսակի մը նման : Թող քու  
առւնդ ըլլայ նաև անոնցը , քու ոսկիդ՝ անոնց ոսկին , և քու  
աշխատանքդ՝ անոնց հանգստութիւնը : Եւ զիացիր որ կու  
զայ ժամանակ , երբ Ալլահը կը մոռնայ քու մեծ մեղքերդ և  
կը ներէ իր զաւակներուն արխւնը :

— «Ի՞նչ նշանով ցոյց պիտի տայ Տէրը , որ ներած է  
իմ մեղքերուս , — հարցուց Տէմիր-Ղայան :

Հրեշտակը պատասխանեց :

— «Վերցո՞ւր քովդ միսայող խարոյկին աս այրած , սե-  
ցած կիսայրեացը , և ցցէ՛ հողին մէջ : Երբ , անիկա կեղեւով  
ծածկուի , ծիկը արձակէ ու ծաղկի , — այն ատեն , զիացի՛ր որ  
հասեր է փրկութեան ժամդ» :

«Եյլ ժամանակէն անցաւ քսան տարի : Փատիշահին — թող Ալլահը երկա՛ր ընէ անոր կեանքը — ամբողջ երկրին մէջ՝ տարածուած էր՝ եօթի ճամբաներու հիւրանոցին փառքը, որ կը գտնուէր Ճիւռէէն Զմիւռնիա տանող ճամբուն վրայ : Մուրացկանը անկէ կը հեռանայ՝ ուռուպիա մը ձգած իր ճամբորդական պայուսակին մէջ, անօթին՝ կուշտ, յոգնածը՝ աշխուժ, վիրաւորը՝ առողջացած :

«Քսան տարի, քսան երկա՛ր տարիներ՝ Տէմիր-Ղայան կը նայէր, ամէն իրկուն, իր բակին մէջ ցցած այդ զարմանալի փայտի կոճղին . բայց անիկա դեռ սե էր ու չոր :

«Հյաւարեցան Տէմիր-Ղայայի արծուետես աչքերը, կորացաւ անոր ուժեղ իրանը և զիսուն մազերը սպիտակացան նման հրեշտակի թեւերուն :

«Անգամ մը, առաւօտուն չատ կանուխ, լսելով ձիուդոփիւն, դուրս վազեց ճամբան, ու տեսաւ ձիուոր մը՝ որ կը սուրար, արիւն-քրտինք մասած ձիու մը վրայ :

«Տէմիր-Ղայան հասաւ, բռնեց ձիուն սանձը և խնդրեց ձիաւորէն,

— Ո՞վ իմ եղբայրս, հրամէ՛, մտի՛ր իմ տունս : Զովացնուր երեսդ ջուրով, ամրանդէ՛ քեզ ուտելիքով ու խմելիքով, և քաղցրացուր շրթունքներդ անուշարոյր թամալաքիով :

«Իսկ ճամբորդը պոռաց բարկութեամբ .

— «Թո՞ւ զիս, ծերո՛ւկ, թո՞ւ

«Ու թքաց անիկա Տէմիր-Ղայայի երեսը և մտրակի կութով ու հսրուած մը տալով անոր զիսուն, առաջ անցաւ :

«Բորբոքեցաւ Տէմիր-Ղայայի աւազակացին հալարտ արիւնը : Գեանէն վերցուց ծանր քար մը, նետեց անարգողին»

Կտեւէն ու փշրեց անոր գանկը : Երերաց ձիաւորը թամրին վրայ, բռնեց իր զլուէն և ինկաւ ճամբու փոշիին մէջ :

«Սարսափահար, անոր քով վազեց Տէմիր-Ղայան և վշտահար բսաւ անոր .

— «Եղրայր իմ, ևս սպաննեցի քեզ :

«Մեսնողը պատասխանեց :

— «Ո՞չ թէ գուն, այլ Ալլահին ձեռքը սպաննեց զիս : Լսէ՛ : Մեր վիլայէթին փաշան դաժան, ընչափաց և անարդար մարդ մէն է : Բնկերներա անոր զէմ դաւալրութիւն նիւթեցին, իսկ ևս տարուեցայ զրամի հարուստ վարձատրութեամբ : Ես ուզեցի մասնել զանոնք : Եւ ահա, երբ իր չտապէի երթալ, ամրաստանել զանոնք՝ քու քարդ կանգնեցուց զիս : Այսպէս կուզէ Ասուուած : Մնաս բարով :

«Տէմիր-Ղայան վշտահար վերադարձաւ առնւ : Բարութեան և զզման այն սանդուզը որուն վրայէն ամբողջ քսան տարի արագուէն կը բարձրանար ինք, կապեցաւ իր տակը և, ամառուան սուտուան մը մէջ, վլաւ մէկ ակնթարթէն :

«Յուսահանաւ, ակնարկը դարձուց այն կողմը, ուր միշտ սովոր էր տեսնել սե, ածխացած կոճղը : Եւ յանկարծ — ո՛վ հրաշք — տեսաւ որ, իր աչքին առջև, չոր ծառը ծիկը կարձակէ, բողբօչներ կուտայ և կը ծածկուի նուրբ ու զեղին ծաղիկներով :

«Այն տանն, Տէմիր-Ղայան ծոնդի կկաւ և ուրախութենէն լացաւ . որսվնետն, հասկաւ թէ մեծ և ամենաողորմած Ալլահը, իր անասելի իմաստութեամբ, ներերէ իր կործանած ինխունը ինք կեանքերուն, մէկ մասնիչի մասովը :»



## ԽԵՑԳԵՏԻՆԸ, ԶՈՒԿՆ ՈՒ ԿԱՐԱՊԸ

Խեցգետին ու ձուկ ու կարապ,  
օրուան մէկը, պարապ-սարապ,  
սայլ մը գտան՝ կեցած տեղը,  
ու լծուեցան, ինկան նեղը:

Քաշէ, քաշէ, ինչքան կուզես,  
քաշէ կտրին եզներու պէս,  
բայց անիւներն անխլիրու են,  
չեն երերար իրենց տեղեն:

Թէպէտ սայլը շատ քերեւ էր,  
բայց կարապը վեր կը բռեր,  
խեցգետինը կերպար ետ ետ,  
ձուկն ալ ջուրին միշտ հակամէտ:

Կը փուրար շուտ՝ դէպի գետը,  
տանելով սայլն իրեն հետը:  
Չըսենք ո՛վ և յանցաւորը՝  
ասո՞ր մեղքն է քէ անորը.  
մէկ բան միայն նշարիս էր  
որ սայլն անշարժ իր տեղն էր դեռ:



## Ա Ղ Բ Ի Ւ Ը

### 1

Դաղթականներու խոռոքը, թշնամին փախչեղով՝ իր բնակութիւնն հաստատեց ամուզի տեղ մը:

Ժամանակը գարնանոցին էր. շոտ-շուտ կը տեղային անձրեններ, ուսափ, գաղթականները ուշագրութիւն չի դարձուցին թէ՝ իրենց բնակութեան մօսերը ո՛չ գետ կար, ո՛չ աղբիւր:

Առանցմէ՛ մէկը, որուն անունն էր Հագա, հեռատես մարդ էր, նկատեց այս բանը, և իր բնակուծ տեղին վրայ սկսաւ ջրհոր փորել:

Անոր միամիտ բնկիրները ազատ ժամանակ ունէին, և սրտանց օգնեցին անոր։ Հազիւ բահը մէկ երկու անգամ գետին զարկին՝ ակը բացուեցաւ և ջուրն սկսաւ բզիսիլ առատ տօրէն։

Հագան շատ ուրախացաւ . անոր հետ ուրախ էին նաև  
իր միամիտ ընկերները : Վասահ էին թէ երկինքի անձրես  
տարին տաճներիու ամիս անգակառ պիտի լլայ , իսկ եթէ  
երբեմն ջրի պակասութիւն ալ բլար՝ իրենք վախ պիտի չու-  
նենացին . — որովհետեւ իրենց դրացին ուներ տռատ աղքիւր և  
անշոշա կարօտներուն կը հանէր մաս ու բաժին :

Մահաւանդ որ , կը մտածէին թէ՝ ի՞նչ պիտի բնէ Հա-  
գան այդքան ջուրը , որքան ալ սպառէ , դարձեալ պիտի  
աւելինաց ու աւելինայ : Իսկ ազրիւրին ջուրը շարունակ կը վա-  
զէր ու կերծար :

## 2

Վարեցին , ցանեցին . անձրեներն եկան . արեն ալ իր  
ջերմութիւնը տարածեց գաշտերուն երեսը . և սերմերը ծիւ-  
ցան , բոյսերը կանցան ու քիչ ատենէն ցորենի ցօլունները  
գեանէն բարձրացան մէկ թիզի չափ :

Եղանակը փոխուեցաւ . առաւօտէն մինչեւ իրկուն պարզ  
էր երկինքը : Սրեւ սաստկացուց իր տաքութիւնը . արևելքէն  
չոր հովերը փչելով՝ սկսան դեղնեցնել ցորենի բոյսերը :

Սպիտին տէրը անհոգ էր . տարսու ջուրը , ջրեց իր ար-  
տը և անոր ցորենը ապահով մնաց երաշտէն :

Միւս գաղթականները՝ տեսնելով ջրին այդ բարերար  
զօրութիւնը , նոյնպէս կուզէին ջրել իրենց սրահըր , — բայց  
Հագան անոնց առջեւ պայման մը դրաւ . բսելով . «Եթէ օգնէք  
ինձի որ ջրաղաց մը չինեմ , ո՞չ միայն ջուր կու տամ ձեղի ,  
այլ ամառը ջրաղաց ձեր ցորենն ալ կազայ ու ալիւր կընէ» :

Գաղթականները տեսանելով ջրին այդ բարերար  
զաց պէտք է : Ուստի ուրախ-ուրախ սկսան ջրաղացը մինել :  
Ու անոնց աշխատանքին փոխարէն , Հագան ալ թող  
տռաւ որ ջրեն իրենց արտերը :

## 3

Ամառուան մէջ էր . հասան ցորենները : Երբ գաղթա-  
կանները արտերը հնձեցին , կալը տարին , կամնեցին ու ցորեն  
ունեցան , եկան՝ ըստն Հագային .

— Ջրաղացդ տո՛ւր , ցորեննին աղանք :  
Հագան սպառախանեց :

— Եինեցէ՛ք բնակարանիս չուրջ քարէ ամուր պատ մը ,  
այն ատեն թողում որ ցորեննիդ աղաք ջրաղացքին մէջ :

Եինեցին անոր տան չորս կողմը հաստ ու բարձր քարէ  
պատեր՝ ամուր դռներով , և գաղթականները աղացին իրենց  
առաջին հունձքի ցորենը :

Անցաւ ձմեռը . եկաւ գարուն . գաղթականները նորէն  
վար ու ցանք ըրին :

Հագան անոնց ըստ այն ժամանակ .  
— Վարեցէ՛ք , ցանեցէ՛ք , հնձեցէ՛ք իմ ալ արտերս , թէ  
չէ՝ ո՞չ ջուր կու տամ , որ արտերնիդ ջրէք , ոչ ալ ջրաղաց՝  
որ ցորեննիդ աղաք :

Գաղթականները մտածացին և յօժարեցան կատարելու  
անոր սպահանջը : Վարեցին , ցանեցին և հնձեցին Հագային ար-  
տերը . իսկ Հագան ո՞չ միայն չէր աշխատեր , այլ դեռ անոնց  
գլխուն վրայ ալ կեցած՝ սաստիկ հրամաններ կընէր . առանց  
թագի թագաւոր էր կարեր :

## 4

Քիչ մըն ալ ատեն անցնելէ ետք , Հագան ըստ .

— Արտերուս վրայ աշխատելու համար՝ ամառները ջուր  
կառնէք աղբիւրէս . լա՛ւ . բայց ի՞նչ վարձք պիտի տաք լնձի՝  
տարուան միւս եղանակներուն մէջ ձեր առած ջուրին փոխա-

րէն։ Ահա ձեր վրայ հարկ կը դնեմ. ամէն մէկ կուժ ջրին՝  
այսքան բուռ ցորեն պիտի տաք ինծի, ազա թէ ոչ՝ ջուր չի  
կայ ձեղի . . . :

Եւ փորից իր բակին մէջ ահագին ջրամբար մը, ու ող-  
րիւրին ջուրը հօն վազցոց։

Գաղթականները անջուր միացին։ Բայց ջուրը ամէն օր-  
պէտք է մարդուս, անոր համար, ամէն օր գեղացիները կը  
տանէին իրենց ցորենը ու կուտային Հագացին։ կը կարէին ի-  
րենց բերնին հացը ու կը լեցնէին Հագացին ամբողները։

Քանի Հագացին տունը կը լիանար, այնքան կաղքատ-  
նային անոր դրացիները, և ո՞րքան իր դրացիներուն վիճակը-  
կը դառնանար, նոյնքան Հագան ինքզինք երջանիկ կը համա-  
րէր։

— Ո՞վ մարդ, կըսէին դրացիները. Աստուած իր առաս-  
ջրով օրներ է քեզ, ո՞չ հացդ է պակաս, ո՞չ ջուրդ, ոչ ար-  
մեր պատիւն ու ծառայութիւնը՝ քեզմէ։ Այդ անսպաս ջուրը  
որ ժողվեր ես անյատակ ջրամբարիդ մէջ, երբեք չուզառիր՝ ո՞չ  
քու և ոչ ալ քու զաւակներուդ պէտքին համար։ Ժամանակ-  
ժամանակ մեղի ալ տուր անկէ, մեր բերանները պատպակեցան,  
մեր անասունները կը տանջուին, մեր մարմինը կեղտի մէջ  
փտեցաւ, մեր արտերը կը չորսան, ինչո՞ւ մեղի. մենք որ  
կուշտ ըլլանք, դուն անօթի չես մնար. ինչո՞ւ այսպէս անդութ  
ես եղեր։ Աղքատութիւնը կը մաշէ մեր կեանքը. մեղ-  
քցի՛ր . . .

Հագան, առանց շահի և տոկոսի, ո՞չ կաթիլ մը ջուր-  
կուտար իր ջրամբարէն, ոչ ալ բուռ մը ցորեն իր ամբարէն։  
իր ջուրջը կեցած մարդոց լացը, արտասուքը և պաղատանքը  
կուրախացնէին զինք։

Գաղնան գիշեր մըն էր. Հագային ջրամբարը լեցուն էր  
բերնէ բերան. ամուր փակուած և նիգերով ամբացած էին ա-  
նոր բակին երկաթապատ դոները։ Յանկարծ, ամպերն է գո-  
ռացին, փաղատակեց երկինքը և ոկտու թափիլ յարդ անձ-  
րեւը՝ հեղեղի պէս։

Ջուրն յորդեցաւ ջրամբարէն. և որովհետեւ քարէ ամուր-  
պատերն ու փակ դաները գոցեր էին ամէն անցք, ջուրն ըս-  
կսաւ բարձրանալ բակին մէջ։

Անձրեւ քանի կերթար, կը սաստկանար, և բակին-  
ջուրը աւելի ու աւելի կը բարձրանար։

Տան դոները չի դիմացան հեղեղին ուժին, ծինվները  
թռան տախտակիներէն, բացուեցան դաները և ջուրն ողողեց-  
ամէն կողմ։

Անձրեւ չի դաղիւրեւ և ազրիւրը զրկով կը բզիսար գետ-  
նէն, ջուրը կոխեց ամբարները, մքրջից ցորենը, տաղականեց  
ամէն պաշար ու պարէն, և խեղդեց տարաւ Հագային անու-  
սունները։

Անձրեւ կը հեղեղէր անդադար և ջուրը կը բարձրանար  
միշտ, հասաւ Հագային կրունկին, ծնկան, յետոյ զին . . .  
«Ա՛խ», կը մտածէր Հագան, ինչո՞ւ հրաշքով մը չի բացուիր-  
բակիս դուռը՝ որ ջուրը ազատ ելք գտնէ ու չխեղդուիմ . . .».

Բայց դուռը ինք էր գոցեր, իր ձեռքով. գոցեր էր ա-  
մուր-ամուր ու երկաթէ նիգերով, որ դրացիները ներս չմըս-  
նեն ու չմըրջն իրենց պապակած բնականները։

Եւ բարձրացաւ ու խեղդեց զինք այն ջուրը, որմէ կու-  
թի մը անդամ կը խնայէր խեղճերուն։



# ԻՆՉՈ՞Ի ԱՌ ԵՍ ԳՈՂՈՒԹԻՒՆ ԶԵՐԻ

[ՈԽՍՈԽՅՉԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ]

1

Ժամուն պատին տակ, կիրակի օրերը, կը շարուէլն մեր  
գեղին ծերերը՝ Հո՞ն, կը սպասէին որ հայրս պատարագը վեր-  
ջացնէ, զգեստները հանէ ու դուրս դայ:

Տէրաւերը և կողեցին սեմին վրայ կիրենար՝ չէր երենար,  
բոլոր ալեօր վլուխները կը մերկանային, և գեղացիք մէկիկ  
մէկիկ մօտենալով՝ հօրս աշը կառնէին:

— Օրհնե՞ա, աէ՞ր:

— Աստուած օրհնէ:

Յետոյ, կը նստէին ամէնքն ալ, հանդիսաւ քարի մը  
վրայ հօրս ալ տեղ տալով իրենց մէջ՝ Ասոր քով, պատուաւոր  
տեղը կը բռնէր ուստա Մարտիրոսը: Ուստա կըսէին ո՛չ թէ  
անոր համար որ արհեստով դարբին, հիւմն կամ որմնադիր  
էր. ո՛չ, այլ անոր համար որ ամէն բան կու գար ձեռքէն:

Ուստա Մարտիրոս մէկ քանի տարի քաղաքն ապրած  
ըլլալով, ամէն տեսակ նորութիւններ էր մտցուցեր մեր գեղը:  
Այն միակ երկարկանի տունը, տակը ախոռ, վրան՝ նստելու  
սենեակ պատշգամով, ինք էր չիներ գեղին ծայրը, որ որոշ  
կերպով աչքի կիյնար միւս խրճիթներէն:

Հիմա ալ նոր բան էր սկսեր, որ մեր գեղին մէջ մէկը  
չունէր:

Իր ըլլատակի արտին մէկ մասը փշոտ ցանկասատով էր  
չըլլատակիր, ձորի վատակէն լաւ առու մըն էր հաներ և բերեր  
իրէն համար պարտէղ էր չիներ՝ ցանկով կաղամբ, վարունդ:

ակն, ձմեռուկ ու դդում. իսկ այդ տարին քանի մը պատուղի  
ծառ ալ անկած էր:

— Մեր հողը ան հո՞ղն է որ պարտէղ ու այդի անկուի,  
— կըսէին գեղացիները, ծաղկելով:

— Է՛, ուստա Մարտիրոսի խնէլք է, ի՞նչ պիտի ըսկս...  
Բացց, գալման սկիզբը, կեռասենիներն ու խնձորենին-  
ները չքելօրէն ծաղկեցան. ու ամէնքը կը սպասէին աշնան:

Զէ՛, պառուղ չն բաներ, — կը պնդէին ծերունիները:

Ամառուաց կիրակի օր մը՝ հայրս արդէն բաղմեր էր իր  
քարին վրայ, իսկ ուստա Մարտիրոսն ու գեղացիք ալ՝ իրենց  
սովորական տեղերը:

Հայրս ըստաւ ուստա Մարտիրոսին.

— Թշնամիին աչքը քօ՛ս, ուստա Մարտիրոս'ս. կըսեն,  
աս տարի վարունգդ լաւ է բաներ:

— Բռներ է, ու ան ալ ինչպէս բռներ է... պատաս-  
խանեց ուստա Մարտիրոս՝ գոհ ու հպարտ: Ես մեր աս հողին  
մեռնի՛մ, իսու պարապ տեղը չէ ջրուեր մեր պապերուն քըր-  
տինքովը:

— Սեխդ ու ձմեռուկդ ալ լաւ է, — ըստաւ անդիէն գե-  
ղացի մը:

— Փա՛ռք Աստծու, անսոք ալ աղէկ են, — կրկնեց  
ուստա Մարտիրոս՝ աւելի մեծ գոհունակութիւնամբ:

— Հասկա որ խնձորդ համի, չըսե՞ս, այս աշնան քու-  
հիւրդ ենք, — կատակեց հայրս:

— Գլխուս, աչքի՛ս վրայ, Տէր-Հայր:

.2

Այդ կիւրակին անցեր էր մէկ քանի օր: Ես, Նիկօն ու  
Մոսէսը կերթացինք վատակի ջրվէժին տակ լոգնալու. կանց-

նելնք ուստա Մարտիրոսին պարտէղին քովէն : Տօթ էր : Քի-  
մըս ինկաւ վարունգներուն հոտք :

— Տղա՛ք, վարունգի հոտ կառնէք, հարցուցի ես՝ կե-  
նալով :

Կեցան անոնք ալ. սկսան օդը հոտոտել :

— Այս, համը մի ըլլար, մանա՛յի, զնէ հատ մը քաղէի:

Մօնեցանք դռան : Էաւ ամրցած էր. ցանկապատն ալ  
բարձր ու փշոտ : Կամաց կամաց սկսանք քալել ցանկապատն  
քովէն, ծակ մը վնասուելով : Յանկարծ, աչքիս ինկաւ առուին  
ճամբան . ցամքած առուին յատակէն մինչև ցանկապատն  
տակ՝ ծակ մը կերևէր :

— Տղա՛ք, աստեղէն, աստեղէն, — սկսայ կանչել ըն-  
կերներս, ու չսպասելով՝ իսկոյն առուին փոսէն սողացի ու-  
նոյցայ պարտէջը . Նիկօն ու Մոսէն ալ նոյնը ըրին :

Վախնալով որ աէրը վրայ կը համի, արագ արագ ըս-  
կսանք ցատկրտելով վազել դէպի վարունգները, ու իրար հրե-  
լով, ցօղուները կոխկրտելով, իրարու ձեռքէ խելում՝ քաղել  
վարունգները՝ մեծ ու փոքր : Լեցուցինք ծոցերնիս, ու նոյն-  
պէս արագ, թռւիկերուն վրայէն թռչելով, կոխելով, կոխկրր-  
տելով՝ ձմերուկներն ու սեխերը՝ վերադարձանք նորէն ա-  
ռուին ծակը, ու դուրս սողացինք փշոտ ցանկապատէն :

Հեւ ի հեւ վազեցինք դէպի ջրվէժը ու մանելով կախ ին-  
կած քարի մը տակ, սկսանք գաղտագողի ուտել մեր քաղած  
վարունգները :

### 3

Իրկունը, երբ արեւը մարը մանելու վրայ էր, հայրս  
դուրսի տախտին վրայ կօշիկները հանած, կրթներ էր բարձին,  
մատածկու կը նայէր հեռուն և մէկիկ մէկիկ կը քաշէր ձեռքիւ

համրիչին ծանը հատիկները : Ես ալ, քովը նստած՝ ճիսլու մը  
կը տաշէի, մարակի համար : Մայրս ալ բակը կրակ էր վառեր  
և եփ կը հանէր նոր կթուած կաթը :

Յանկարծ, տանիքին վրայ անկուեցաւ ուստա Մարտի-  
րսափին երկար հասակը . վար իջաւ սանդուղին քարէ աստի-  
ճաններէն և կու գար շիտակ մեր կողմը :

Սիրտս գողաց, բայց, բաի՛ ո՛րտեղէն իմացած պիտի  
ըլլայ : Դանդաղ քայլերով, դէմքը մուաց, մօտեցաւ մեր տախ-  
տին :

— Բարի իրիկուն, աէրտէ՛ր :

— Աստծու բարին, ուստա Մարտիրոս, — պատասխա-  
նեց հայրս, և մէկ կողմ քաշուեցաւ՝ եկողին տեղ տալու հա-  
մար քովը :

Առանց խօսք մը ըսկու, ուստա Մարտիրոս նստեցաւ  
տախտին ծայրը . ձեռքին փայտը դրաւ ծնկանը վրայ, հանեց  
ծխախոտի տուփը և հաստ մատուցներովը սիկարա մը փաթ-  
թեց :

Ես վազեցի դէպի կրակը, վառող ճիւղ մը առի, բերի  
անոր և կպցուցի սիկարը . կաշխատէի հանոյակատար երկնալ :

Ուստա Մարտիրոս վառեց սիկարը, ևտ տուաւ կրակը  
և երեսս անգամ չի նայեցաւ :

Անցաւ մէկ քանի վարկեամ :

— Ե՛, ուստա Մարտիրոս, պարտէղդ ի՞՞նչպէս է, — հար-  
ցուց հայրս իր սիրելի հարցումը :

Ուստա Մարտիրոս անմիջապէս չի պատասխանեց :

— Տղաղ լսրատէ՛, աէրտէ՛ր, ուրիշ անգամ պարտէղը  
չմանէ : ըստ անիկա վերջապէս :

— Ի՞նչ պարտէղ :

— Այսօր մտեր է, վարունգներս ոտքի տակ է տուեր, կաղամբիս թուփիլն է կոտրահր, Տղադի խրատէ՛, տէրտէ՛ր :

— Տղա՛յ, դուն այսօր ուստա Մարտիրոսին պարտէղը մտեր ես, — հարցուց ինձի հայրս՝ յուղուած և խստօրէն :

— Զէ՛, տէր հա՛յր, — ըսի ես :

— Կը տեսնե՞ս, չէ՛ մտեր, — ըսաւ հայրս՝ հանգստացած :

— Կըսեմ՝ մտեր է : Տղադի խրատէ՛, տէրտէ՛ր, մեղք ես, դէշ կը մեծնայ :

— Տղա՛յ, շիտակն ըսէ՛, մտեր ես ուստա Մարտիրոսին պարտէղը, — կրկին հարցուց հայրս ինձի :

— Զէ՛, տէր հա՛յր, չեմ մտեր, — ոճողեցի ես :

— Կըսեմ քեզի որ չէ մտեր :

— Ես ող կրսեմ որ մտեր է, — նորէն վրայ բերաւ ուստա Մարտիրոս : Տղադի խրատէ՛, տէրտէ՛ր . . .

— Հոգիս մեղքի տակ մի՛ ձգեր, տղա՛յ, երես նայի՛ր, ճշմարիսն ըսէ՛ . այսօր ուստա Մարտիրոսին պարտէղը մտեր ես թէ չէ, — դարձաւ նորէն հայրս ինձի :

— Զիմ մտեր՝ կըսեմ, ի՞նչ կուզէ ինձմէ :

— Ուստա Մարտիրոս, — հայրս դիմեց անոր՝ լուրջ և արդէն վիրաւորուած ձայնով . տղաս որ կրսէ՝ «չեմ մտեր», ուրեմն չէ մտեր : Ուրիշներ մտած ըլլալու են : Տղաս երբեք մինչեւ այսօր սուտ չէ խօսեր ինձի :

— Տղադի խրատէ՛, տէրտէ՛ր, — կրկնեց ուստա Մարտիրոս զսպուած զսպոյթով . և ծոցէն հանելով իր կապոյտ թաշկինակը՝ արագ-արագ բացաւ ու մէջէն հանեց կարմիր տպածոյի կտոր մը :

Իմ բաճկոնիս կտորն էր, միայն ես ունէի այդ լաթէն :

հայրս Առաջնորդարան գացած առևն՝ այդ կտորը քաղաքէն բերած էր ինձի համար :

— Հսապա ասի ի՞նչ կտոր է՝ որ առաւին տակ, մացաւին վրաշերուն վրայ էր միացեր : Ա՛խր, կըսեմ քեզի, աղադիրատէ՛, տէրտէ՛ր :

Հայրս գունատեցաւ, մէյ մը ինձի կը նայէր, մէյ մը այդ լաթի կտորին :

Գլուխս վար կախեցի, ուստա Մարտիրոս արագ-արագ կը քաշէր սիկարը ու կը փէշը մուխը : Իսկ հայրս այլևս չէր շխչացներ իր համրիչը : Երբ վայրկեան մը ետքը՝ յօնքերուս տակէն հօրս նայեցայ, տեսայ որ արցունքները վար կը գլորին անոր թառամած այտերէն՝ սպիտակ պեսերուն և երկայն մօրուքին վրայ :

Երանի՛ թէ խօսէր, երանի՛ թէ կշամբէր, նախատէր զիս . երանի՛ թէ նոյնիսկ զարնէր ինձի, միայն թէ լուէր այդպէս, միայն թէ այդ արցունքները չվագէին այդ վշտացած աչքիւթէն . . .

Այդ օրուընէ անցեր են շատ տարիներ, իմ ալ մազերս ճերմելին են և մաքէս շատ բան է չնչուեր, անհատացեր մանկան կութենէն . բայց արցունքի այդ կաթիլիները միշտ հոգիիս մէջ են ու կացին զայն :



## ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՈՒՄԸ

Ես ալ կապրեի փոքրիկ տան մը մէջ՝  
ազատ ու անփոյք.  
աշխարհն ինձ համար կլոր էր անվերջ՝  
կեղեւը կապոյտ:

Բայց յետոյ աչք երբ բացի յանկարծ՝  
փոքրիկ բոյն մըն էր.  
Ըսի՝ աշխարհիր յարդեն է շինուած  
ու մայրս է շիներ:

Օր մըն ալ կամաց գրլուխս հանած  
բոյնեն մայրական,  
տեսնեմ՝ աշխարհիր տերեւէ շինուած  
մեր տունն ալ վլրան:

Հիմա կը բռչիմ ես քեւատարած՝  
օդին մէջ վեր-վա՛ր,  
բայց քէ աշխարհիր ի՛նչեն է շինուած,  
ա՛լ չեմ հասկընար:



ԵՎԻՇՈՑՄԱՆ ԴՐԱՅՈՒԹՅ



Ծոյն

## ԵԶԱԿԱ

ու այլ ճանձ մաս մաշման ու դպրի պիտու միաւու  
պրու բանակ մեման ով միան քաջալու . ին ով զայտակ  
ով ին թիւան ով շղմինչան թիւան պրու մեման ով զայտակ  
մաշման խցառու թիւ . թառ յն միան ով թիւրու յն խան

մայր միան ով է չէք ով նայրան միւն միւն ով . չ զայտ  
ով , զաման զմինչան միան զամանակին միարին  
արագ միշ նայտափ զան զմինչան ով ուն նու միշարան

ո զայդի միացարան միշարան ով և  
զամանան յն միւն աղմանին և աղմանար չանուն  
չան աղմանան և աղմանին ով ուն ուն միշ զայդի զամանա  
մաշման յն միշին ով զաման յարայը և աղման  
միշար միշ ու զարան ով նայարան զան է միշար  
ու աղմանար նայտին յա յան յան . խցառու ու խցառ  
յանուն բանակ

ո զամանան միշար ով ով մայր որ անն  
քայտանախ ով մայր ով զայդան ով ուն  
միշարան ով . նույն զայդան ու ուն ուն  
ուն ուն

զամանան միշար ով ով . զան միշ աղմանար  
զար յն միշար զմինչանար ուն միշար ով յան ու  
միշարան ով . միշար զման ու ուն ուն ուն  
ուն ով զմինչար յա յան մայտան և ուն  
մայտան ուն ուն ուն ուն ուն ուն ուն  
ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն ուն

## Ա Ի Ա Զ Ը

### 1

Աւազին աւելի փոքր ու աննշան բան տեսած կա՞ս աշ-  
մարիքիս մէջ . աչքերը հաղիւ կը աւեման , մատներդ հաղիւ  
կը շօշտին աւազի պլատիկ հատիկները : Երբ հատիկ մը վար  
ինայ՝ ո՛չ աղմուկ կը լսուի , ո՛չ չշուկ . մէկ խօսքով՝ այնքա՞ն  
փոքր է , որ թեթև հավե անգամ կը քչէ , կը տանի դայն :

Այդպիսի միլիոնաւոր աւազի հատիկներ , տանոք , կը  
կազմէին մեծ լիս մը : Հատիկները ամուր փակած էին իրարու-  
ե կը ձեացնէին աւազաքարի շերտեր :

Կանաչ գաշտերու և հալիաներու մէջէն այդ աւազաքար  
ժայռերը գէպի վեր կը ցցուեին բերդերու և ամրոցներու ոլէս:  
Սիրուն , զլղացալ աւուներ կը թափէին այդ ժայռերուն  
վրայէն : Լեռը զարդարուած էր հազար ու մէկ գոյնի ծաղիկ-  
ներով ու խոտերով , տեղ տեղ ալ ծածկուած՝ պաղատու ու  
անսպուղ ծառերով :

Ահա այս լեռն էր մեր աւազին հայրէնիքը :

Ամէն օր , լոյսը զը բայցուէք , խումէ մը աշխատանէք  
բանաւորներ , մարձն ու քլունկը շալկած , կը բարձրանային  
այդ լեռը :

Քարհամաներն էին ասոնք , որ կը կոարէին աւազաքարը  
ու վար կը զլորէին : Վարը , քարտաչները կառնէին այդ կտոր-  
ները և զանազան բաներ կը պատրաստէին :

Մէկը գոներու և պատուհաններու համար կամարներ ,  
սիւներ ու սալեր կը շնէր . միւսը կը տաշէր քառակուսի-  
քարեր , շնէրերու համար . ելբորդը՝ չուրի կամքեր կը պատ-  
քաստէր . չորրորդը՝ գերեզմանաքարեր ու քանդակներ :

2

Քարի այն կտորն ալ, որուն մէջ կը գտնուէր մեր աւագի սա՛ հատիկը՝ իր միլիոնաւոր եղայրներուն հետ, կոտրած էին նոյն լեռնէն,

Այդ քարէն շինեցին ջաղացքաթ մը, բերին, դրին միծջաղացքի մը առջե, նորէն տաշեցին, յդկեցին ու տարին ալլրսունը:

Հազար, հազար տարիներ լեռներուն մէջ անշարժ պառկած տաղանատիկը՝ չէր գիտեր թէ ի՞նչ բան է շարժիլը:

Ու ջաղացքարը սկսաւ դառնալ օր ու դիշեր, խնդիպէս: Ճորմնի, գարիի և հաճարի անթիւ հատիկներ կիյնայինիր տակը, կը տրորուէին, կը փշուէին և ալիւր ու կորկոտ կը դառնալին:

Ջաղացքարը կանգ կառնէր երբեմն. կը յոգնէր երկարաղալին և կը րժանային իր «ակռաները»: Այն ատեն, ջաղացպանը վար կիջեցնէր քարը, և կտուցի պէս սրածացը մործով կը չեշոտէր զայն. ամէն զարնելուն՝ դուրս կը ցատկէր. քարի շերտիկ մը և կիյնար վար:

Երթարով, երթարով՝ կը բարկնար ջաղացքարը, վերջապէս, մործը դպաւ մեր աւաղանատին ալ: Թռաւ, ինկաւ գետինը, հիմա բոլորովին աղաս էր:

Բայց, երկար չի մնաց հոն. ջաղացպանին տղաքը եկանքնիրներով, հաւաքեցին ինկած աւաղները, տարին անակշներու:

Գիշերը սաստիկ անձրեւ եկաւ, փոքրիկ առուակներ կազմուեցան և քշեցին, տարին տերեւ, ծղօտ ու աւագ, հետեւ մեր աւաղանատիկը, և լեցուցին ջաղացքի տուուն:

Զուրերը որ քիչ մը հանգստացան, աւաղը նստեցան. զուրին յասակը:

3

Գարնան, երբ ձիւնը կը հակը և ջրերը վարսրելով՝ հեղեղ կը կազմէին, կառնէին, կը տանէին հոգ ու աւագ վտակէ-վտակ, գետակէ գետակ, հեռու, շատ հեռու: Եւ աւազը կը ճամբորդէր:

Անգամ մը մեր աւազը կիյնար գետին յատակը և միհներով արեւու երես չէր տեսներ. անգամ մը կիլէր գետին ափը ու տարիներ շարունակ կը միար արեւուն տակ: Թրաչունները կուգային, կանյնէին անոր վրայէն. մարդիկ ալ կուգային ու սաղերով աւազը քաղաք կը տանէին:

Քաղաքին մէջ միծ պատասներ կը չինուէին: Աւազը կը խառնէին ճերմակ կիրին հետ ու անկէ ցեխ կը պատրաստէին. այդ ցեխով պատին քարերը իրարու կը միացնէին և կը ծեփէին նորաշէն տունը:

Աւրիչներ աւազը կը տանէին արտերը, կը խառնէին տմուր կաւային հոգի հետ, այսպէսով հողը կը փարանար, տեկորդ ջուրը թագ կը տանար պազարիր:

Բայց, դասնանք մեր աւաղանատիկին: Զուրը քշեց, տարաւ զայն դէպի ծովը: Ծովին աղի ալիքները գրկեցին զայն ու շատ մը տադին անդին ձգձգելէ ետք՝ նետեցին անսահման ու միծ ովկիսնուին մէջ:

Այսակ անիկա պատահեցաւ անթիւ ու անհամար իրեն պէս աւաղանատիկներու, որոնցմէ մէկ քանին իր հայրենիքէն էին, իր ազգականները, իսկ միծ մասն ալ՝ հեռաւոր աշխարհներէ:

Աւազի հատիկները կուտակուեր էին իրարու վրայ ու կազմեր էին աւաղաթումը մը. ծովային կինդանները կը իրացային ու որս կինէին հոն. ծովային խեցեսախններն ու ձկները կիրթային կուգային:

Այդ աւազաթումբը զրօնասեղի էր ջրացին կենդանինեւ ըստ , իսկ պատուհան՝ մարդոց համար : Ամէն անգամ երբ նու մը անոր մօտենալով՝ կը ձգէր խորաչափը և նաւապեսը «աւազաթումբ» է » կը պառար,— բոլորը լեզապատառ , ամէն ճիդ կը թափէին որ կարելի եղածին չափ նեռու միան անկէ :

4

Ալիքները քշելով-քշելով՝ աւազները կը բերէն դէպի աւազնքը : Շատ տեղեր ալ չուրիքը քաշուելով՝ կաղմեր են ուրիշ ծովեր , իսկ աւազը մնացեր է անոնց տեղը :

Այսպէս , անսահման տարածութիւններ ծածկուած են աւազով : Այս տեսակ տեղերը կը կոչուին անազատ . մարդիկ ուղարկ կը ճամբորդէն անոնց մէջն :

Անազատներուն մէջ ո՞չ ծառ , ո՞չ թռւի , ո՞չ ողբիւր և ոչ ալ տուու կայ . մարդ ծարաւէն կը պասպակի : Կը փշէ տաք քամին , յոդնած և թուլցած ուղան ու հեծեալը վար կիյան գետին . իսկ քամին աւազ կը հաւաքէ անոնց վրայ և կը թագէ զանոնք իրենց տակ :

Կը տեմնէք այն աւազահատիկը՝ որ մարդուն հաց կը պատրաստէ և անոր տունը կը չինէ , այդ նոյն աւազի հատիկը կը լայ աւազաթումբ՝ ովկիսնոսին մէջ , և անազատ՝ ցամաքին վրայ :

Ահա մէկ փոքրիկ . անհշան աւազահատիկը ի՞նչեր կը դառնայ :

Բայց , զիսէք որ ապակին ալ շնուռած է աւազէ , հաւյելին ալ , յախճապակիէ պնակին ալ և մեր լամպին շիշն ալ :

Աւազէ շնուռած է ակնոցը՝ որ ծերերուն աչքի լոյս կուտայ , մանրացոյցը՝ որ կը խոշորյնէ ամէնէն փոքր առարկաները , և հեռագիտակը՝ որ կը մօտեցնէ նեռաւոր բաները , լուսինն ու ասազերը :



## Ի՞ՆՉ ԿԸՍԷՒԻՆ ԵՂԵՒՆԻՆԵՐԸ

Պարտէզին մէջ կանգնած էին երկու ալեսոր եղենիներ : Անոնց տակ , նոտարանին վրայ նստած էր պառաւ կին մը : Զիւնի նման սպիտակ մազերը ալիքներով կը թափուէին ուսերուն վրայ :

Կինը բան մը կը կարգար :



Պարտէզին մէջ կը ո՛րէ՛ր խոր լոռութիւն . փոքրիկ լճուին վրայ ալեսոր մը մնգամ չի երենար : Անուբանները կը բռուրէին սասակիկ . և արել , կտրմիր գունափ մը պէս , մարը կը մանէր :

Փշեց մեղմ հովը . փափառուք մը անցաւ երկու եղենիներուն մէջն , անոնցմէ մէկն էր որ կը խօսէր :

Պառաւը վեր վերյուց զլուխը և ականչ դրաւ :

— «Կը յիշե՞ս այն իրկոնը .— կըսէր եղեինը , երբ մեզ

հոս բերաւ ձերմակ մօրսւքով մարդք : Այն ատեն, դուն դեռ  
փոքրիկ աղջիկ էիր և խաղաղով-խնդալով ջուր կը լցնէիր  
մեր արժաներուն : Յանկարծ, դուն հարցուցիր ձերմակ մօ-  
րսւքով մարդուն .— Մեծ-հա՛յր, ո՞վ մեծ է . ևս թէ այս  
փոքրիկ ծառերը» :

Այս՝ այս՝ մասածեց պառաւը և իր աչքերը փաղեցան  
սրախն բերկրանքէն . վաղուց էր որ այդպէս չէին փաղած  
անոնք :

— «Կր յիշե՞ս անկէ մէկ քանի ասարի ետքը , — կը խօ-  
սէր միւս եղենին . դարձեալ իրիուն մէն էր . պարտէզին մէջ  
բացուեր էին վարդերը : Դուն արդէն մեծցեր էիր, օրիորդ  
էիր եղեր, սիրուն ու բարձր հասակ ունէիր : Նստեր էիր այդ  
նոյն նստարանին վրայ և քու քովիտ ալ նշանածդ . . . » :

«Այս՝ այս՝ » հազիւ լսելի ձայնով չչնչեցին պառաւին  
շրթունքները, և արցունքի երկու ծանր կաթիլներ ինկան իր  
ձեռքի թուղթին վրայ :

— «Անկէ յեաոյ , — կը շարունակէր եղենին , դուք կու-  
գայիք հոս՝ ձեր փոքրիկ, քնքուշ մանկիկին հետ : Մանկիկը  
մեծցաւ ու քեզի նման սիրուն, բարձրահասակ հարս մը բերաւ  
տունը : Բայց աարիները շատակեցին ու քու մազերդ ձիւնի  
գոյն ստացան . . . » :

«Այս՝ այս՝ » հազիւ լսելի ձայնով կը չնչէր պառաւը :

Յանկարծ, պարտէզին մէջ հնչեց ուրախ, զիլ ձայն մը,  
ու երեցաւ պառաւ կնոջ թունիլր :

— Մեծ-մայր, մեղի արձակուրդ տուին ամբողջ վեց  
շաբաթ, — գոչեց մանուկը, փաթթուեցաւ մեծ-մօրը պարանո-  
ցին, ու աաք-տաք համբուրեց անոր խորչումած երեսները :



## ՆԱԻԱՎԱՐ

— Էյ, նաւալվա՛ր, առ ի՞նչ կընես,  
ո՞ւր կը նստիս դուն նաւակ .  
կը բարձրանայ սեւ ամպը, տե՛ս,  
դիպի երկինք կապուտակ:

Հորիզոնն ալ մուրով պատած՝  
ամպ կը գոռայ հոն, նեռուն .  
նայի՛ր, ահա կամաց-կամաց  
կը փորի դեմքն ալ ծովուն:

— Էն, մի՛ վախնար երբեք, աղա՛,  
ծովափին եմ ես ծրներ .  
մեծցեր եմ ես ծովուն վլրայ,  
ծովի բերելովն եմ սրներ:

Մանուկ օրեն շատ եմ տեսեր  
քէ՛ փորորիկ, քէ՛ աղես .  
ծովն է ինձ միշտ օրօր ըսեր,  
նոր չեմ ծանօթ ծովուն նետ:

Հայր ունեի՛, ծովը մեռաւ .  
որսի ելած մուր զիշեր .  
եղբայրներս ծովը տարաւ,  
ձկնորս եին անվեհներ:

Կեանքը լսւ է . . . բայց ի՞նչ ընես . . .  
յետոյ, մանեն ի՞նչ փախչիմ .  
ծովը կուտայ կեանք ու հաց մեզ,  
ծովուն տակ ալ կը հանգչիմ . . .



## ԻՄ ՄԵԾ-ՀՕՐՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ավասն որ դուք չէք ճամհնար իմ մեծ-հայրս : Հաղուաշ  
գիւտ մարդ էր ու սմնման որարդ : Շաբաթներով լեռ-ձոր  
խնկած՝ որսի կը պատէր . ո՞չ կը յոզնէր , ո՞չ կը քնանար ,  
ո՞չ կուտէր և ոչ ալ կը խմէր : Եւ անվերջ, անվերջ պատմու-  
թիւններ կրնէր իր որսորդական կեանքէն :

Իրկունները , կը նստէր վառարանին դիմաց ու կը-  
պատմէր :

Անգամ մըն ալ , պատմելու ժամանակ , մեզմէ չարաճը-  
ճիւն մէկը լնդհատեց .

— Հը' , մեծ-հայր , զիտես թէ առ մէկը աւելցուցիր . . .  
Մեծ-հայրս խնդաց :

— Որ այդպէս է , ա'լ չեմ պատմեր :

— Զէ' , մեծ-հայր , պատմէ' , պատմէ' :

— Հապա ես դեռ ի՞նչ զուարճայի պատմութիւնն մը ու-  
նիմ , — ըստ մեծ հայրս . բայց որ պատմեմ , նորէն պիտի-  
ընդհատէք զիս :

— Զենք ընդհատեր , մեծ-հայր , չենք ընդհատեր , —  
կրկնեցինք բոյորս :

— Լա'ւ , որ այդպէս է , պատմեմ : Միտյն թէ խօսքը-  
խօսք , Ով որ չուզեր՝ թող չոէ , իսկ ով որ կը լոէ՝ պէտք չէ-  
ընդհատէ :

Մեծ-հայրս հազար՝ կոկորդը մաքրեց ու սկսաւ .

— Այսօր ես ձեզի բան մը պիտի պատմեմ , որ հին ,  
շատ հին տակնները իմ գլխուս է եկած : Այն ժամանակ ես

դեռ քսանը հինգ տարեկան երիտասարդ էի , ամողջ , ուժով՝  
բարձրահասակ :

Անգամ մը , ինչպէս եղաւ , որսի զացի ու ամրող երեք-  
օր՝ առանց հանգստանալու , թափառեցայ : Ճշմարիտ է , մա-  
զախս որտով լիցուն վերտղորձայ , բայց այնքան էի յոդներ՝  
որ հազիւ կը կենացի թամբի վրայ :

Իմ նժոյգս՝ Այաքսն ալ սարը հազիւ կը քաշէր ետելն-  
ես կը քնանացի թամբին վրայ : Այաքսը , տեսնելով որ սանձը  
թողած եմ , դուքս կու զայ պոլսուալէն , կինայ նեղ շաւիդ  
մը ու բաւական տեղ երթալով , կը կինայ : Կարթննամ , աշ-  
քերու կը չփեմ , չորս կազմ կը նայիմ , — տեսնեմ որ՝ կանգ-  
նած ենք ահազին ճահիճի մը եղերքը :

Տէ' , հիմա եկուր ես դարձիր :

Զէ' , ի՞նչ կուզէ՝ ան թող րլայ — ես չեմ դառնար-  
պէտք է սնցնիմ : Վճռեցի ու առանդ ակեցի ձիս : Այաքսը  
ծառացաւ , թռու ամբողջ թափով , ու , հեղ մըն ալ տես-  
նեմ , մենք կախուած ենք ճահիճին վերեւ , օդին մէջ : Ճիշտ-  
այդ բոպէին միաքս ինկաւ որ Այաքսը շատ յոզնած է : Այդ-  
օրը մենք քսանընինք թէ երեսուն նապաստակի ետեէ ինկեր-  
էինք ու բռնիր . . . Աւ երկար-բարակ չի մտմացի . օդին  
մէջ դարձուցի ձիուս զլուեսը , ու հօգի , դարձեալ կանգնե-  
ցանք ճահիճին ափը , ճիշտ այն տեղը՝ որքէ Այաքսը թռեր էր :

Բոյ՝ աւելի լաւ է ձիս չափով թռցնեմ ճահիճին վրային-  
Անիկա սովորաբար դիւրութեամբ կը թռչէր քսան քայլ լոյ-  
նութեամբ արգելքներու վրայէն . իսկ ճահիճին լոյնքը , աչքի-  
չափով , քսան քայլէն աւելի չէր երենար :

Քիչ մը ես դացի , չոյեցի Այաքսին վիզը ու ասպանդա-  
կեցի , նորէն մենք ճաիրեցինք օդին մէջ :

Սակայն՝ ճահիճը քսան քայլէն աւելի դուրս եկաւ, ու ափին քանի մը քայլ մնացած, երկուքս ալ ինկանք ցեխի մէջ։ Տեսայ որ ոտքերս խրեր են ափզմի մէջ. իսկ Այսքառ ամրողովին թաղուած էր. միայն զլուխն էր որ մնացեր էր դուրս ցցուած . . . :

Սղ երկար ու բարակ մամտալու ատեն չէր. պէտք էր անմիջական ճար մը մտածել ։ Ծնկուլներս ամուր սեղմեցի ձիուն կողերուն, ճախ ձեռքով սանձը պահեցի, աղ ձեռքս տարի՝ բանեցի իմ մաղերէս, քաշեցի, ու ցեխն դուրս հանեցի զիս ալ ու ձխ ալ միսսին։

— Վահ, ինչ տեսակ մարդ ես եղեր, մեծ-հայր . . .

— Հասպա, հնարագէտ, յանդուզն ու վճռական մարդ։ Ինչպէս կը տեսնէք, նեղութեան մէջ գիտէի ես զիս ազատիկ։ Բայց, նեղութեան մէջ ճար գտնելը մեծ չնորհք մը չէ, երբ միջոցներ կան ձեռքիդ տակ. չնորհքը այն տեսակ վիճակէն ազատին է, երբ ձեռքիդ տակ ոչ մէկ միջոց կայ . . . : Դուք հիմա մնացածը տեսէք։

Առաւօտ մը, ննջարանիս լուսամուտէն կը նայիմ. տեսնեմ վայրի բաղերու ամբողջ երամ մը՝ որ կը պատի լճին վրայ։ Իսկոյն, հագայ լաթերս, հրացանս վերցուցի, վաղեցի։ Բայց, աճապարանքէն՝ ճակասս այնպէս ուժով զարկի դուան սեմին, որ աչքերէս կայծ թռաւ։ Սղ ժամանակ չունէի վերքին վրայ մտածելու, վաղելով սկսայ շփկ ճակասս, ու միենոյն տակն նշան բռնել բաղերուն։

Դուն մի՛ ըսեր՝ սասափիկ բաղխումէս հրացանիս կայծքարը վար է ինկեր, ու բիշ բան ալ չի կայ որ հրացանս պարզեմ . . . ինչ ընեմ, ինչ չընեմ. առջես է բաղերը կը լողան. իսկ ես, հրացանը ձեռքիս, կանդնած եմ ու չեմ կինար արձակել։

Բայց, մարդը եթէ մարդ է՝ ամէնէն նեղ վիճակին մէջ ալ հնարը կը դանէ։

Միաքս ինկաւ թէ ինչպէս քիչ մը առաջ որ ճակասս դռան սեմին զարնուեցաւ, կայծեր դուրս թռան աչքէս. և իսկոյն օգտուեցայ իմ այս նոր գիւտէս։ Վեր քաշեցի հրացանիս ոտքը, բայցի վառօդքը, դրի հրացանը երեսիս, որքան ուժուի՝ շրանիք զարկի ճակտիս . . . : Անմիջապէս աչքերէս կայծ դուաւ. մէկ քանիները ինկան վառօդքին վրայ, հրացանն է կրակ առաւ, ու թրախիկ երթամ տեսնեմ որ տասը բադ մէկանց երկնոց են տեղն ու տեղը . . .

Բայց դեռ աս ոչի՞նչ։

## 2

Անդամ մըն ալ դաշտն էի ելեր, որ նոր հրացանս փորձեմ։ Շատ որս պատահեցաւ. ինչ գնդակ որ ունէի՝ հատաւ։ Հեղ մըն ալ տեսնեմ կաքաւի երամակ մը։ Ախորժակ բացուեցաւ. իսի — ինչ կուղէ ըլլայ, ընթրիքի համար մէկ քանի հատ պիտի զարնեմ։ Բայց ինչո՞վ կը զարնես. մէկ գնդակ անդամ չէ մնացեր։ Ա՛ռ քեզի փորձանք։

Այս տեղ, միտքս հրաշալի գաղափար մը եկաւ։ Անմիջապէս լեցուցի հրացանս ու գնդակի տեղ՝ չամփուրը դրի մէջը, նշան առի՝ օդին մէջ թռչող կաքաւներուն. հրացանը բացուեցաւ, չամփուրը ոլացաւ կայծակի արագութեամբ, ու եօթը կաքաւ վրան շարելով ինկաւ վար։ Հէնց այդպէս ալ ուսս զրի ու եկայ տուն։

Բայց դեռ աս ալ ոչի՞նչ։

Անդամ մը նորէն որսի ետև կը պատէի. ճամբան՝ դամ մը գտայ։ Հրացանն ուսս, աս գամն ալ ձեռքս, մտմտալէն՝ կիրթամ անտառին մէջէն։ Հեղ մըն ալ տեսնեմ։

թուխ, թաւամազ աղուէս մը՝ որ եղենի մը տակ մտած՝ քիթը վեր է անկեր ու օդին մէջ կը հստոտէ :

Մտայ մօտի թուփիս տակ, նշան առի որ զարնեմ. յան՝ կարծ յիշեցի թէ քանի մը օր առաջ ալ սաչմայով բոլորովին մնասած էի հիանալի աղուէսի որ մորթին : Զէ՛, մե՛զք է որ այս տեսակ մորթին ծակծկի . պէտք է որիշ միջոց մը գանել :

Աչքս դպաւ գամին : Աչտ քեզի միջոց : Հանեցի հրացանէն գնդակը, անոր տեղ զրի գամը ու արձակեցի . աղուէսը մնաց տեղը : Երթամ տեսնեմ որ ճիշտ գտնուած տեղը՝ կենդանին գամեր եմ ծառին : Խաչտձև կտրեցի դունչի մորթին, բարակ փայտ մը առի ու սկսայ կրխել, ինչպէս որ կուզես : Ազուէսը աշնակ ինքինքն կորսնցուց, որ դուրս ելաւ իր մորթին ու փախաւ . փախաւ, բայց ինչպէս փախաւ . . .

Ես ասի ինչի՞ համար կըսեմ. անոր համար կըսեմ որ՝ տեսնէք թէ ան ոչինչ գամն անդամ, գեալնն ինկոծ տեղը, կընայ պէտքի գալ :

Բայց երբ ձեռքդ գամ մը անդամ չի կայ — հապա աշնակնը ինչ պիտի ընես . այ, ասո՛ր պատասխանը տո՛ւր :

Այս գէպքէն քանի մը օր անցած, որսատեղին տուն կը դառնամ՝ գնդակս ու վառօդս լմոցուցած : Յանկարծ, մացափ մը տակին դուրս ցատկեց վայրի վարազ մը ու յարձակեցաւ վրաս : Հարկաւ, շատ ալ հաճելի բան չէ այս տեսակ կապանին հանդիպիլը, մանաւանդ երբ հրացանդ ու դասարկի է :

Այս տեղ, ինչ պահեմ, քաջութիւնս մէկ կողմ զրի ու սկսայ վազել . բարձրացաց առաջին հանդիպած ծառին վրայ :

Ծառն ալ դուրս եկաւ որ, մատաղատունկ է : Զօրով վրան տեղաւորուեր եմ ու ոտքերս վեր քաշեր : Վարազը հասաւ, ամբողջ լիափով որ ծառին չդարնուեցա՛ ժանիքները ծառին այս կողմէն մտան, այն կողմէն դուրս ելան :

Ալ ժամանակ չի ձգեցի որ գաղանը խեղիք գար, վարցատկեցի, գեսնէն քար մը առի ու ինչպէս որ գամին ծայդերը ետ կը ծռեն, ես ալ ստ ծռեցի ծառին միւս կողմէն դուրս ելած անոր ժանիքները, որ ալ չի կրնայ դուրս քաշել :

Եկայ տուն, հաց կերայ, քնացայ, առտուանց վերելայ, մարդ առի հետ, սայլը լծեցի, հրացանս լցուցի ու գացի :

Գացի, հրացանը քաշեցի — տո՛ւր հաւ տուր, հակտին մէջտեղին : Քերթեցինը, կշռեցինը, եկաւ տասը միւր ու լսւ միտքս չէ, քանի հօխա :

Բայց դեռ աս ալ ոչի՞նչ . . .

Երբ մեծ-հայրս աս տեղ կանգ տաւաւ, որ մնացածը միւս օր շարունակէ, մենք գլուխին է ձգեցինք . ինդալէն մարեք էլի՞ք :

— Վայ որ կը փէս, մեծ-հայր, բաւ մեր Մարտօն, . . .

Մեծ-հայրս ինք ալ կը ինդալը ու ծայն չէր հաներ :



## ԱՇԽԱՆ ՎԵՐՋԸ

1

Աշունը կը մօտենայ իր վախճանին :

Առաջին աշունն էր այս, որուն կը հանգիպէլինք մենք հօրս մահէն յետոյ, երբ պարտատէրը ծախեր-ծախծինը էր մեր բոլոր տունն ու տեղը, և մենք փոխադրուեր էինք մօրեղօրս տունը :

Դաշտերը կառնէին տիսուր ու գունաթափ կերպարանք . կանաչ մարգագետինները օր օրի կը զեղնէին : Անխորձ կը փշէր յուրա քամին և մերկ ծառերէն կը թափէր մնացած տերենները :

Երինքի խոժոս ու մօխրագոյն դէմքին վրայ կը զորուէին մժին ամեղերու ահագին բեկորներ և կարգիլէին արեին թող ճառագայթները : Խիստ տիսուր եղանակով կը լսուէր կոռունիներան խոլ կոխնչը, որոնք բարձր եթերին մէջէն, և ռանկիւնի շարքով, կը դիմէին դէպի օտար աշխարհ : Ծիծեռնակներ երեք չէին երենար . անոնք վազուց էր որ գաղթեր էին :

Միայն, մրջիւնները հասնդով կը կրէին՝ դէպի իրենց բոյնը՝ բնդեղէններու զանազան տեսակներ :

Այդ օրերը պակաս հոգ չի պատճառեցին մօրս : Զմեռը աղքատներու թշնամին, մեղ պատժելու համար կուգար :

2

Մայրս իր հօր առւնը փոխադրուելէն մէկ քանի օր հաքը մերժեց կերպուր ընդունիլ անոնց սեղանէն, և կապրէր անկախ աշխատանքով : Շուտով հաշտուեցաւ իր նոր վիճակին

համ՝ չուզելով ծանրութիւն պատճառել իր եղբայրներուն, ուրնց համար շատ ալ հաձելի չէր լրինց գերղասամնին վրայ եկած նոր բեռը :

Մայրս աղքատութիւն շատ էր կրած, բայց իր տան չքաւորութիւնը օտարին չըր յախնած, չէր բսած թէ ի՞նչ-պէս կապրի կամ ի՞նչ միջոցներով կը պահէ իր դաւակները : Շատ համար կին էր իր բոլոր յոյսը դրած էր իր աշխատով ձեռքերուն ու Աստծու վրայ :

Մէր զիսդին մէջ զովասնուած էր մօրս կարելու և ձեւելու վարպետութիւնը, բայց շատ քիչ կը վարձատրէին իր աշխատանքը : Անոր համար, զիշեր ցորեկ հանգստութիւն չունէր . ասեղը, ճախարակն ու մսանոցը անդաղար կը գործէին, բայց ի՞նչ . . .

Մօրս համբերութիւնը երկաթի ամրութիւն ունէր . բայց երկաթն ալ կը փշուի . . .

Ես երեք չեմ կրնար մոռնալ մօրս արտասուալից աչքերը, երբ աւաշին անգամ՝ զիս ու բոլորս հետն տռնելով, ապասւ մեղ դաշտը, հնձուած արտերէն թափած հասկեր հաւաքելու : Մուրացկանութեան առաջին քայլն է աս, որուն կենթարկուի պատուաւոր աղքատը :





Առեւ մը կ'որ որ մինք արտեր ունէինք, հունձք ունէինք, և մեր հունձքը հաւաքելին յետոյ՝ խորձերէն ինկած հասկերը կը թողէինք Աստծու ազգասներուն ու երինքի թրոշուներուն։ Կորանցու յի՞ւք բոսքը, և հիմա ստիպուած էինք ուրիշի սրտերէն հասկաքաղ բներու . . .

## 3

Սրտերու կարծ խուզուած ստիպարակին վրայ, մախաճի նման վեր ցցուած ցօղուններու սուր ծարերը՝ կը ծակծէին իմ ու քոյրերուս բոլորովին մերկ սոտերը։ Բայց մինք ցաւ չենք դդար։ Մենք շատ ու բախ էինք և միծ համադով կպանք գործի։

Փոքրիկ քոյրերս իրենց մամոռտիկ ձեռքերով կը հաւաքելին ինկած հասկերը և կը խնդային իմ վրաս, որովհետեւ և ծոյլ էի։ Անոնք փունջեր կը կապէին հասկերէն և կը մրցէին թէ ո՞րը շատ կը հաւաքէ։ Իի՞ դժ մանուկներ կարծես կը զգային թէ, ձմեռը անօթի կը մնան, և թէ հիմա սղաշար չպատրաստեն։

Մայրս կը նայէր անոնց վրայ ու կուլար . . .

Իրկունը, մեղմէ ամէն մեկը լր հաւաքածը կապեց շաւակը, դարձանք տուն։ Քայլութեամբ չն գործածեր, թէն մօրս ինսպողութիւնը կը համեր արդէն ժլատութեան։

Նոր հապատութեամբ կը նայէին քեռիիս մանուկներուն, նման անխոնչ մշակներու՝ որ դաշտէն կը դաշնան։

Այսպէս, ամէն օր, առառուն կանուխ կերթայինք դաշտ՝ հասկաքաղ լնելու, և իրկունը կը վերադառնայինք։ Միը խրճիթին դռան առջեւ կազմուեցաւ փոքրիկ դէղ մը՝ հաւաքուած հասկերէն։ Յեսոյ, սկսանք մեր կալը կամինկ։ Բայց, այնքան մեծ չէր որ պէտք լըլար կամով կամինկ։ Մայրս սկսաւ ինք մանրեկ հասկերը՝ հասա փայտով մը, որ շատ ծանր էր և ևս դժուարութեամբ կրնացի աեղէն վերցնել դայն։

Երբ յարդը քամիին տուինք ու մաքուր ցորենը հաւաքեցինք թալարներու մէջ, մեր ձմեռուայ հայի պաշարը արդէն պատրաստ էր։

## 4

Դեռ կը մնար վառելիքը։

կը բերեն առատ, կը բերեն արագ,

կուտեն, կը խմեն ուրա՛խ, անտրառում . . .

ևս ալ կը մաղթեմ բա՛րի վայելում:

Ահա նոյն տան կից՝ խեղճուկ տան մը մէջ, տկար ու  
զօտ ճրագի լոյտով, չոր խոնի վրայ մայր ու զաւակներ՝ բարե-

կենդանի լնթրիքը կրնեն։ Զի կայ ոչ սեղան, ոչ հաւ ու կաքաւ, չի կան գինիներ ու քաղցրաւենի, — այլ հին ու մաշած սփոռոց մր քաշած իրենց ծունգերուն վրայ, նատեր ու կուտեն չոր հաց ու պանիր, կուտեն անշուկ, գլուխինին կախած . . .

Տիուր է խրճիթը, խոնաւ ու անշուք, տիսուր են դէմքերը մօրն ու իր տղոց միայն կատուն է պազած հանդարաւ անոնց դէմ, և իր պոչը կր չարժէ՝ մուայլ, թախծաղէմ . . .

Հ մա ծերու կիս թողէք որ երթամ,

ձեզ ուրիշ բաներ պատմեմ գալ անդամ,

Տէ՛ն, մնաք բարով, դուք, ժիր մանուկներ,

մեծ ու պղտիկներ, խելօք ու չարե՛ր :



## ՀՕՐ ՍՈՒԳԸ

Աղքատ դարբին մր երեք դաւակ ուներ, երեքն ալ աղջիկ :

Հոգեարքի ժամանակ, կանչեց զանոնք իր մնարին քով, ու բառ.

— Եկէք, զաւա՛կներս, քանի չունչս դեռ վրաս է, սուգ բրեք ողբացէք մահս, լսեմ ու միսիթարուած հեռանամ աս աշխարհէս :

Մեծ աղջիկը թաշկինակր ձեռքն առաւ, ու սգաց բարձրածայն.

— Իմ տէօվլէթւո՞ր հայրս, իմ տաւարի՛ տէր հայրս, մեծ անունիդ մնունիմ, ախ, հայրիկ, ախ . . .

Հիւանդր վեր բարձրացուց ձեռքը և բառ.

— Լուէ՛, աղջիկ, աս տեսակ խօսքերը իսծի յարմար չեն գար, ես ո՞չ տէօվլէթ եմ ունեցեր, ոչ ալ մեծ անուն :

Սպասէ՛, միջնեկ աղջիկս թող բանայ բերանը, տեսնեմ ա՞ն ինչպէս պիտի սգայ :

Միջնեկը թաշկինակը ձեռքն առաւ ու բարակ ձայնով այսպէս ողբաց .

— Իմաստուն խօսք ու խօսուածքիդ մատա՛զ, իմ հայրս, երկար ու սիրուն հասակիդ մատաղ, իմ հայրս, անսման աչքերուդ ու գեղեցիկ պատկերիդ մատա՛զ, իմ հայրը . . .

Դարբինը դարձեալ ձեռքը շարժեց ու դժգոհ դէմքով ըստ .

— Աս սուգը ինչի չի յարմարիր. մէկը չի կայ որ ըստ ծիդ հաւատայ, որովհետեւ ես ո՞չ խաստուն եմ եղեր, ոչ գեղեցիկ : Կարգը փոքր աղջկանս է, թող մօտիկ գայ, տեսնեմ ս'ն ինչ պիտի ըսէ :

Կրասեր աղջիկը մօտեցաւ հօրը, ծռեցաւ, համբուրեց ձեռքը ու մնոր կուրծքին վրայ իյնալով՝ սգաց մորմոքիչ ձայնով .

— Վայ իմ հայրս, վայս իմ հայրս, խեղճ օրերուդ մատաղ րլամ, իմ հայրս, չարքաշ կեանքիդ մատա՛զ, իմ հայրս . . . ժամանակ կրլար անձողը կը գտնայիր՝ երկաթը չիր գանար, ժամանակ կրլար երկաթը կը ճարէիր՝ անձողը ձեռքդ չը անցներ . . . վայ իմ լաւ հայրս, վայ իմ աշխատանը հայրս . . .

Հիւանդը հանդիսաւ շունչ մը քաշեց և բառ.

— Հա՛, խօսք չունիմ այդպէս լացին. ինձի պէս խեղճ ու աղքատ մարդուն՝ շիտակ սուգը ա՛ս է ահա: Ապրի՛ս, աղջիկն, կեանքով կտանասա, հօրդ սրտէն ջուր խմեցիր:

Օրնեց դարբինը և աչքերը գոցեց միսիթարուած հողիով :



## ՎԵՐՁԻՆ ԱՊԱՀԻՆ

[ՕՌ ՕՌ]

Ալետանիզ հոգւոյս միտկ մխիքար,  
ծաղկի՛ր վարդի պէս, փքքի՛ր անդադար,  
օրօ՛ր, ի՛մ հոգեակ, քանկագին զաւակ,  
դուն՝ կեանեիրն միակ հօքը աշտարակ:

Կուգայ նոր գարուն, կը ծաղկին դաշտեր,  
այրի մայրիկիդ կը շատնան վշտեր.  
օրօ՛ր, ի՛մ հոգեակ, քանկագին զաւակ,  
դուն՝ սիրուս միակ անգին լիշտառակ:

Արցունեին խաւար աչերս կուլան,  
երբ անցած օրերս իմ միտս կուգան.  
օրօ՛ր, ի՛մ որդեակ, քանկագին զաւակ,  
դուն՝ աչեիս միակ լոյսի աշտանակ:

Մահուան բաժակեն կը բամեմ մրուր,  
կեանեովդ կեանե տուր մայրիկիդ տիսուր.  
օրօ՛ր, ի՛մ հոգեակ, քանկագին զաւակ,  
դուն՝ հոգուս միակ բարի նրեշտակ:



Մ Յ Ա Մ Ո Վ Ծ Ա Զ Ե Ր Դ Ւ

[Ռ Ռ Ջ Ջ]



Անցիւ, սիկաս վառեմ

## ԻՇԽԱՆՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ

### 1

Շատ դարեր առաջ, Անգլիոյ կայսրը գեղեցիկ տղայ մը  
աւնկը, որոն ամէնքը «Երջանիկ Իշխան» կըսէին :

Եւ իրա՛ւ, իշխանը երջանիկ էր, որովհետեւ ամէնքը կը  
սիրէին զինք, ու անիկա կապրէր անհոգ և անպիշտ :

Բայց, երջանկութիւնը երկար չի անեց, կայսեր սիրաւ  
առն որդին, «Երջանիկ Իշխանը», մեսաւ, Անոր մահը ցաւ-  
ցոց բոլորին սիրալ :

Քաղաքափետութիւնը և ժողովրդոցին ներկայացուցիչ-  
ները որոշեցին արձան մը  
շինու «Երջանիկ Իշխանի» յի-  
շատակին, արձան մը՝ որ զար-  
գարուած բար ուկիով ու  
թանկագին քարերով :

Տարի մը չանցած՝ քաղա-  
քի հրապարակին վրայ կանգ-  
նած էր Երջանիկ Իշխանը ար-  
ձանը, որուն թիվնայը զարդա-  
րուած էր ուկիէ տերեններով,  
սուրին երախակալը՝ թանկագին  
յակինթով, իսկ աչքերը՝ անոր-  
ման սուտակներով, որ կը փայ-  
էին ասազերու նման :

— Իշխանը հրեշտակի ոլէս գեղեցիկ է, — կըսէին մա-  
նուկները, հիացած նայելով անոր արձանին :



Անցա՞ն շատ տարիներ :

Անգամ մը, աշնան, այդ քաղաքին վրայէն կը թռչէր և կանցնէր ծիծեռնակ մը: Անոր ընկերները վաղուց արդէն գացերէին Եղիպատոս. իսկ ինք ուշացերէր. անոր համար՝ կաձաւ պարէր որ համնի անոնց եսելէն :

Թռչէր էր ամբողջ օրը. իրկուան՝ մտածեց քնանալ, հանգստանալ, Քաղաքին հրապարակին վրայ տեսնելով Երջանիկ Իշխանին արձանը, իջաւ և կանգ առաւ անոր ոտքերուն առջեւ :

— Ի՞նչ հրաշալի տեղ, — բացականչեց ծիծեռնակը. ո՞ր քսն ազատ և արձակ է շուրջու. կը մնամ ևս այստեղ ու կը հանգչիմ:

Չորս կողմը նայելով՝ տեսաւ իշխանին ոտքերուն վրայի ոսկիէ կապերը և մտածեց. «Հիանալի է, ես ոսկիէ ննջարան կունենամ»:

Ծիծեռնակը գլուխը կոփեց թեկերուն տակ և կը պատրաստուէր քնանալու. յանկարծ, զլիուն վրայ կաթիլ մը ինչ կաւ :

— Զարմանայի՛ բան, — մտածեց ծիծեռնակը՝ շուրջը դիտելով. երկինքը պարու է, աստղերը կը փայլին, բայց անձրեւ կուգայ:

Ծիծեռնակին վրայ ինկաւ երկրորդ կաթիլը:

— Ինչպէս կերեի, արձանը անձրեւն պատապարուած չէ. ալէտք է տանիքի մը տակ երթալ՝ տեղ գտնել, — ըստ ծիծեռնակը :

Թիւերը բացաւ և կուզէր թռչիլ, բայց այդ բոսէին իր զլիուն վրայ ինկաւ երրորդ կաթիլը: Գլուխը վերցուց և

տեսաւ Երջանիկ Իշխանը: Անոր աչքերէն կը հոսէին արցունքի կաթիներ և այսերուն վրայէն կը զլորէին գետին: Լուսի ճառագայթները կը լուսաւորէին անոր երեսը: Այսքան տիսուրէր անիկա և այնքան գեղեցիկ՝ որ ծիծեռնակին սիրալ թընդաց կարեկցութենէն:

— Ո՞վ ես դուն, — հարցուց ծիծեռնակը:

— Ես «Երջանիկ Իշխանն» եմ:

— Երջանիկ, բայց այսպէս դառն կարտասուես՝ որ թթջիցիր զիս քու արցունքներովկ ու պատմէ՛, ինդրե՛մ, ի՞նչ է լացիդ պատճառը:

Եւ երջանիկ Իշխանը այսպէս պատմեց.

— «Երբ ես դեռ մարդկային սիրո ունէի և կապրէի արքայական պալատի մէջ, գաղափար չունէի արցունքի մասին. հոգն ու վիշտը անծանօթ էին ինծի, որովհետեւ այդպիսի գլացումներ մուտք չեն դաներ պալատները: Ցորեկը կը խաղաղի պարտէղը, իրկունները կը պարէի շքեղ գահիններու մէջ: Բարձր պատը կը բաժնէր հօրս պալատը քաղաքէն, և ես չէի գիտեր թէ ի՞նչ կանցնի կը դառնայ պատին այն կողմը: Ես զիս շատ բախտաւոր կը զգայի, և կը կարծէի թէ՝ բոլորն ալ շատ բախտաւոր են, բոլորն ալ ինծի պէս գոն են իրենց կեանքէն: Զիս կանուանէին «Երջանիկ Իշխան», և իրաւ, ես երջանիկ էի...»:

«Եւ անա, առանց գիտնալու թէ ի՞նչ է վիշտն ու տանջանքը, ես մեռայ: Հիմա, այս տեղ, բարձունքէն կը նայիմ շուրջը և կը տեսնեմ մարդոց չքաւորութիւնն ու տանջանքները: Իմ սիրոս, որ հիմա պողպատէ է շինուած, այս պող-

պատէ սիրտու անդամ՝ չի կրնար չարտասուել, տեսնելով այդ  
տաճանքները :

«Ահա, նայի՛ր այնտեղ, այն փոքր ու նեղ փողոցին,  
ուր շնուռած է աղքատիկ անակ մը : Լուսամուտին քով նըս-  
տած է կին մը . անիկա ոսկեթելով կասկագործէ պալատա-  
կան տիկնոջ զգեստը : Նայի՛ր անոր գունատ և յոգնած դէմ-  
քին . նայի՛ր անոր ծակծկուած մասներուն . նայի՛ր վերջապէս  
անոր մասնկանը՝ որ հիւանդ պառկած է աղքատիկ անկողնին  
մէջ : Անոր շրթունքները կայրին տաքութենին . նարինջ մը  
կուզէ մօրմէն . իսկ խեղճ մայրը, ջրէն զատ, ուրիշ բան չի  
կրնար տալ տանջուող մանկան :

«Սիրելի՛ ծիծեռնակ, կը խնդրեմ, բարի՛ եղիր, կտու-  
ցովդ գուրա քաշէ իմ սուրիս վրայէն թանկագին քարը և  
տա՛ր այդ թշուաս ընտանիքին : Ես ինքս կը տանէի, եթէ  
շարժիլ կարողանայի» :

— Ո՞չ, ես ժամանակ չունիմ,— պատասխանեց ծիծեռ-  
նակը . իմ ընկերներս ինձի կը սպասեն Եղիպառոսի մէջ . ա-  
նոնք հիմա կը թռչին Նեղոսի ափերը և կը վայելին գեղեցիկ  
ծաղիկներուն բուրումը . հոս ցուրտ է, ես չեմ կրնար մնալ :

— Ծիծեռնակ, սիրելի՛ ծիծեռնակ, կը խնդրեմ, միայն  
գիշեր մը, մէկ գիշեր մը կեցիր իմ քով : Այս, եթէ դուն  
զգայիր թէ ինչպէս կը տանջուի այն փոքրիկը և որքան աը-  
խուր է անոր մայրը . . .

Ծիծեռնակը նայեցաւ Երջանիկ Խշանին երեսը, և տես-  
նելով անոր տիսուր նայուածքը՝ խղճաց ու ըսաւ . — թէկ հոս  
շատ ցուրտ է և ես մասուկները այնքան ալ չեմ սիրեր, որով-  
հետեւ իծի քար կը նետին, բայց գիշեր մը մնամ և կատարեմ  
քու փափաքդ :

## 4

Ծիծեռնակը կտցահարեց թանկագին յակնիթը և թռաւ  
դէպի աղքատիկ տունը : Համնելով հոն, ներս թռաւ բաց  
օդանցքէն և նայեցաւ շուրջը :

Մանուկը, ջրմի մէջ, կը տքար, այս ու այն կողմ կիյ-



նար տանջանքէն . իսկ մայրը, կարը ձեռքին մէջ, յոգնածու-  
թինէն յաղթահարուած քնացեր էր նստած տեղը :

Ծիծեռնակը դրաւ թանկագին քարը անոր առջեւ, սե-  
ղանին վրայ, և սկսաւ պտոյսներ լնել մանկան մարին վերեւ :  
Պտոյսներ կընէր և իր թեւերով կը հովահարէր մանկան հրա-  
տոչոր մարմինը :

— Օ՞խ, ի՞նչ հով է, ի՞նչ լու է, — շնչից փոքրիկը և  
քնացաւ քաղցր :

Վերագարձաւ ծիծեռնակը, պատմեց իր ըրածը Երջանիկ  
Իշխանին, և ինք ալ անուշ քնացաւ անոր սուքերուն տակ :

## 5

Միւս օրը, ծիծենակը ամբողջ ցորեկը սնունդ կը վնասէք, և իրկունը հկաւ իշխանին քով։

— Անս ևս ճամբայ կիյնամ զէպի Եգիստոս։ մնաս բարմվ։

— Ա՛ս, սիրե՛լի ծիծենակ, ևս կուզէի խնդրել քեղմէ՝ որ զիշեր մըն ալ իմ՝ քովս մնաս։

— Ո՛չ, ո՛չ, չեմ կընար մնալ. լնկերներս շուտավ կերթան Նեղոսի կղզիները, որ սաքէ է, հիմնալի ու զեղեցիկ։ Սնապատէն կուզան առիւծները ջուր խմելու, և անոնց աչքերը կը շողան կոմաչ զմբուխար ոլէս . . .

— Ծիծենակ, ծիծենակ, տե՛ս, հա՞ն, պարտէզին մէջ

կանգնած է աղքատ աղջիկ մը և կու լայ։ Լուցկի ծախող է ան. իր սառած ձեռքերէն վար ինկաւ արկը և բոլոր լուցկիները թափեցան առուն։ Հիմա, եթէ առանց բոցկիի և առանց դրամի՝ տո՛ւն երթայ, հայրը պիտի ծհծէ զինք։ Անոր կիսամերկ մարմինը կը դոզայ ցուրտէն, բաց կը վախնայ առոն երթալ։ Հանէ՛, խնդրե՛մ, աչքիս, և տա՛ր անոր տու՛ր։

— Թո՞ղ քու ըսածդ բլայ, ևս զիշեր մըն ալ կը մնամ, բաց ինչպէս հանեմ աչքերդ. չէ որ կը կու ըսամաս բոլորպին։

— Փոքրի՛կ ծիծենակս, կը խնդրեմ, մի՛ մերժեր խընդիրս, աղատէ՛ փոքրիկ աղջիկը ծհծէ։



## 6

Ծիծենակը ցաւելով կատարեց իշխանին աղաչանքը, հանեց անոր երկու աչքերը, և թռաւ, հասաւ աղջկան, ձարտարութեամբ. ձգեց անոր ափին մէջ թանկագլն քարը, ու դարձաւ ետ։

— Ի՞նչ լաւ ուլունք է. Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ փայլուն է, — բացականչեց փոքրիկը, և մոռնալով իր վիշտը՝ ուրախ ուրախ վաղեց առւն։

Ծիծենակը վերադառնալով իշխանին քով, ըսաւ.

— Հիմա, ուղեմ չուզեմ՝ պէտք է մնամ քու քովդ, որովհետեւ դուն բոլորովին կոյր ետ։

— Ո՛չ, ո՛չ, բա՛րի թունակս, շտապէ՛, թուիր Եգիստոս, դուն կը սառախ հոս։

— Ո՛չ, ես միշտ քու քովդ պիտի մնամ, — ըսաւ ծիծենակը, և փարեցաւ իշխանին ոսքերուն, ու քնացաւ։

## 7

Այսուհետեւ, ծիծենակը շարունակ նստած իշխանին ուսին վրայ, կը պատմէր ալն բոլոր բաները՝ որ անսեր էր օտար երկիրներու մէջ։

Կը պատմէր եգիպտական վարդագոյն արագիլները, որոնք Նեղոսի մէջէն ոսկիէ ձկնիկներ կորսան, ուղտերու քարաւանները, որոնք շարոց-շարոց



կանցնին անսապատէն՝ իրենց ակրերուն հետ զարհուրեկի օձերը, որոնք կը փաթթուին ամենաբարձր արմաւենիներուն և իրենց գոյնով չեն զանազանուիր անոնց տերեներէն։

Կը պատմէր նոյնպէս որ՝ Եգիպտասի հին թագաւորները



կա՞ փարաւոնները , իրենց համար , հսկայական բարձրութեամբ գերեզմանատուններ են շինել տուեր , որոնք բուրգ կը կոչուին . այդ բուրգերուն մէջ դրուած են փարաւոններուն դիակները , որոնք լեցուած են զանազան անուշանոտ խոսերով ու փաթթուած մետաքսէ լամերով . անոնց դիակնոր հազարաւոր ասրիներ անեղծ մնացեր են այդ բուրգերուն մէջ :

— Բարի , սիրե՛լի թռչնիկ , — ըստ Իշխանը . քու պատմութիւններդ շատ հետաքրքիր են . բայց , ինձի համար աւելի հետաքրքիր է խմանալ մարդոց ցաւերն ու չքաւորութիւնը : Թռի՛ր , սիրելի՛ս , անցի՛ր ամբողջ քաղաքին վրայէն , նայի՛ր ուշաղըութեամբ չորս կողմէ և ինչ որ տեսնես , եկո՛ւր պատմէ՛ ինձի :

## 8

Ծիծենակը ուրախութեամբ կատարեց իշխանին խնդիրը , և թռաւ : Անցաւ քաղաքին վրայէն :

Տեսաւ փառաւոր , չքեզ առւներ՝ որոնց մէջ ուրախ ու անհոգ կասլուին հարուստները . տեսաւ անոնց սեղաններուն

վրայ դրուած զանազան համել կերակուրներն ու ըմպելիները , մինչդեռ անոնց դաներուն առջև կանգնած էին անօթի ու մերկ չքաւորներ , և կը սպասէին վշրանքներուն :

Ծիծենակը թռաւ , անցաւ նեղ ու կեղաստ վորպոցներէն , և հսուտի խրճիթներու տապակիներուն ետեւ տեսաւ գունատ ու նիհար դէմքով , անօթի ու հիւանդ մանկիներ : Տեսաւ շատ շատ տիսուր բաներ :

Ետ դարձաւ և պատմեց բոլորը :

Երջանիկ իշխանը ինկաւ մատմուքի մէջ , և ըստաւ .

— Զիս ծածկեր են ոսկիէ թերթիկներով . ես շատ ուրախ կրպամ , ևթէ զուն վրցնես այդ թերթիկները և բաժնես բոլորը աղքատներուն ու թշուառներուն :

Ծիծենակը կը փրցնէր թերթի ետեւէ ու կը տանէր , կը բաժնէր զգքախաններուն : Հետեւելով անոնց , տեսաւ որ նիհար ու գունատ մանուկները հետզհետէ կը լեցուէին ու կը կարմրէին . կը փայլէին անոնց տիսուր երեսները ուրախութիւնէն : Տեսաւ որ առողջացեր են հիւանդները և կշտացեր են անօթիները :

## 9

Զիւնը ծածկեց գետինը : Սկսաւ սաստիկ ցուրտը : Սառոցէ լիւլէները կախուէր էին տանիքներէն :

Ծիծենակը շատ կը մաէր , բայց չէր ուզեր թողուլ իր սիրելի իշխանը : Սրագ-արագ կը թափահարէր իր թերթը՝ որ տաքնայ , բայց իզմ'ւր . զգաց որ ազես չի կնար ապրիլ և պիսի մեռնի :

Հաւաքեց վերջին ուժը , թափահարեց թերթը , թռաւ երջանիկ իշխանին ուսին վրայ նստաւ և շնչեց . կեցիր բարով . . .


— Երթստ բարով , սիրելի՛ս . զուն ըրիր ամէն բան ին-

ծի համար, հիմա կրնաս երթալ Եղիպտոս։ Համբուրէ՛ զիս  
վերջին անգամ. և քեզ շատ սիրեցի։

— Ես չեմ երթար Եղիպտոս, և կերթամ Մահուան աշ-  
խարհը. — մրմիջեց ծիծնուակը, բայց դուն մի՛ տիրիք, և  
այլեւս չեմ մսիր. քունս կուգայ, և քնանալ կուղեմ։

Հսաւ թռչիկը, և համ-  
բուրելով իշխանը՝ մեռած ին-  
կաւ անոր ուաքերուն առջեւ։

Այդ միջոցին, արձանին  
ներսէն ձայն մը լսուեցաւ. Եր-  
ջանիկ իշխանին պողպատէ սիր-  
ութն էր որ փշուեցաւ վիշտէն։



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԸ

Մեր վարժապետը շատ բարձրահասակ ու չափազանց նի-  
հար մարդ էր, եռեսուն-եռեսունը ութը տարեկամ։

Վաղաժամ ծերացած դէմքը զրիթէ անմազ էր. միայն  
խիստ նուրբ պեխերը քիչ մը կը ծաճկէին վերի շրթունքը։

Ցաւու և ներս ինիած կուրծք ունէր անիկա, և կը քա-  
ւէր՝ միշտ թեթեակի առջեօք ծռած ու թիկունքին թիալները  
դուրս ցցած։ Ցածախ կը հազար՝ չոր ու անախորժ, և ամէն  
անգամ թաշկինակը շրթունքին կը տանէր։

Հարունակ կը ժպտէր մնայի. բնաւ չէր խոժուեր, չէր  
յուղուեր, չէր բարկանար՝ մինչեւ անգամ երբ դասարանին  
աղմուկն ու իրարանցումը կը համնէին ծայր աստիճանի։ Այդ  
ժամանակ— և միայն այդ ժամանակ— քիչ մը կը բարձրացնէր  
իր ձայնը։

— Հանդա՛րտ, տղա՛ք, հանդա՛րտ. լսեցէ՛ք . . .

Սակայն, անմիջապէս անոր ձայնը կը համար կը կա՛ր,  
բռնէր անիրաւ հաղը, ու վարժապետը կը հազար երկա՛ր,  
երկա՛ր . . .

Եւ այդ հաղը կը զսպէր մնալ. երբ կը նայէինք անոր  
մեղմամի պէս գեղին, վտիտ ձեռքին՝ որով կը բռնէր ու  
կը սեղմէր իր խեղճուկ կուրծքը, կը քարանայինք յանցաւորի  
պէս և կը լսէինք։

## 2

Հաղը կը դադրէր. վարժապետը, թաշկինակով բերանը  
անդմած, արմուկը կը դնէր սեղանին վրայ և գլուխը ձեռքին  
մէջ՝ կը մնար տան մը լուռ. կը հանգստանար, ապա կամաց  
բարձրացնելով գլուխը, կը նայէր մնայի և կը շարունակէր դասը.

— Գրիգոր, դո՛ւն կարդա . . .

Այս, սքանչելի վարժապետ, ինչպէս չարչարեցինք քեզ։

Մեր դասարանը կիշխէր գիւղին ու դաշտերուն վրայ։  
Վարժապետը՝ աչքերը ձգած լայնարձակ հորիզոնին, կու տար  
մեզի աշխատանքի դասը։

— «Տեսէ՛ք այն գիւղացին — կըսէր մնայի — , որ ահա-  
զին խոսը չալկած՝ կու գայ դաշտէն։ ինքնին երգ մըն է ան-  
քաղեցէ՛ք ետեէն ու տեսէք թէ ինչպէս անուշ կը տքայ ան։

«Տեսէ՛ք, տեսէ՛ք հնձուորներուն գերանդիները՝ որ կը  
վայլին արեւուն ցոլքերուն տակ. աստ ալ երգ մըն է, մեղմա-  
նուշ երգ է գերանդիներուն կայծկլումը, անոնց քաղցր զընդ-  
զնգոցը։

«Նայեցէ՛ք այն ծուխի ողորին՝ որ կը բարձրանայ բոլոր  
խրճիթներուն վրային, իրրեւ յաւխտենական երգ, ան ալ թո-  
նիրին, կըակին երգն է, ձեր մազլերուն աշխատանքի երգը։

«Դիմեցէ՛ք, ահա սակլ մը կերթայ դաշտերու մեծ ճամբէն՝ վրան խոս բարձուած, ու գեղացի մըն ալ հանդարս կը քշէ դայն...»

— Սակ մեր սա՛լն է, բացազանչեցի ես, ան ալ իմ հայրս է, ես կը ճանչնամ մեր եղները:

— «Զեր սա՞լն է, ան ալ քու հայրծ... շա՛տ լաւ դուն նայե՞ր ես երբեք ձեր եղներուն աչքերուն. ինչպէ՞ս բարի են անո՞նք, որքա՞ն անուշ. աշխատանքը միշտ բարի է, միայն յափշտակիչները, ուրիշներուն վաստակը լափողները չար են. ու անո՞նք են միայն որ երգ չունին: Յեսոյ, հօրդ դէմքը... դիտե՞ր ես երբեք հօրդ դէմքը. հողագոյն է անշուշտ, և աչքերը արեկ գոյն ունին: Աշխատանքի մայրն են հողն ու արեկ. սիրեցէ՛ք հողն ու արեկ...»

«Երբ գուշք ամառնային զիշերները պառկիք խոտերու մէջ, կանաչ, թաւ խոտերու և ծաղկիներու մէջ, կը լսէք թեթև շնչիւն մը. ա՛ն ալ աշխատանքի երգն է. մայր երկիրն է որ այդպէս կերգէ՛ երբ խոտ ու ծաղիկ, ծառ ու մացառ մազմիկ կը բարձրանան իր ծոցէն...»

«Մեծցէ՛ք, զաւակնե՞րս, մեծցէ՛ք. հող ու արեկ, դաշտ ու լեռ ձեզի կը սպասեն. մեծցէ՛ք, ու երբե՞ք, երբե՞ք չե՞մոնաք աշխատանքի Մեծ Երգը...»

Այսպէս կը խօսէր մեր բարի, մեր անման վարժապետը. մէջ ընդ մէջ կը հազար, կուրծքը կը բռնէր. ապա նուրէն կը ժպտէր ու կը սպատմէր մեզի Աշխատանքի երգը: Եւ այդ երգը կը բարձրանար հազար հնչիւններով՝ լայնածառալ, բերրի դաշտերէն, ուր կը գործէր արօրն ու գութանը, բանը ու գերանդին, և հողի գոյնով ու արեկ աչքերով գեղացին...»



## Ք Ո Չ

### 1

Կը ծագի մանուկ արեւը գարնան Կովկաս լեռներու ձիւնի պատճեշէն. կարքնեան մեկ-մեկ լեռներն աննման ձմրան անվրդով բունի մըշուշէն:

Ահա Լաւարի վիրխարի ուսին կը բազմի արփին բարեացած ուժով, սար, ձոր իրարու լառած երեսին. կը ժպտին ուրախ ամսի մշուշով...

Վերջին ձիւներն ալ արդէն հալք ինկան, արտասուեց խակոյն լեռներու հական. ամեն մեկ ձորէ աղբիւր կը հոսի, ամեն մեկ քուփէ պիւպիւլ կը խօսի. քէ՛ դալար հովիտ, քէ՛ ժայռի կուրծեր արձագանգ կուտան նոր գարնան կոչին. ձմրան փոխարեն հովաւական երգեր զեփիւրի քեւով լեռը կը բռչին:

### 2

Ահա գարնան հետ եւ շարոց-շարոց՝ դաշտավայրերէն դեպի զով սարեր կուգայ սալլերու, ուլտերու նրուոց, կը փախչին շոգէն քէ՛ թուրք քէ՛ Հայեր: Կը բնդան ձորէն զանգի հնչիւններ, ձիերու խրխինց, պայտերու դոփիւն.

մեկ մեկու կցուած անվերջ քարւաններ  
կերրան հա՛ կերրան, կերրան զով առտուն.  
որը կը տանէ սեւ, ներմակ մեշան,  
կուժն ու խնոյին, եւ բան ու բացան.  
որն ալ զարդարուած զիր ու փունջերով՝  
կօրօրով, կանցնի լեռան լանջերով.  
բայց նառն ինքնագո՞ն կը քալէ հանդարտ,  
բոժոն ու զանգեր վըզին ու կրծին,  
եւ օրօրելով կապերտներ ու զարդ,  
զեղեցիկ հարսը կը տանէ մեջին:  
թոներ է նամբան մեծ իրարանցում,  
Ժխո՞ր ու աղմուկ, եւ նիշ անդադրում:

## 3

Գիշերը հասաւ. մըին է նամբան.  
շուտով կը դադրի աղմուկը ահա.  
առուակի ափը քարւաններն իշան.  
կը կանչեն՝ «Տըղա՛ք, ապրանք վար չինա՞յ:»  
Զիերու զոլիր, ուղտերու քարւան,  
սայերը խումբ խումբ, տաւար ու տօլուղ՝  
գրտնելով ձորը գիշերն օրեւան,  
կը հանգստանան միւս օրուան համար:  
Կըրակի վրայ, առուակի ափին՝  
տեղ մ'ահա ընթիրի շուտ կը պատրաստեն,  
տեղ մ'ալ կորսուած զառան ու նորբին  
անունը կուտան հովիւններն ամեն.  
ուրիշ տեղ մ'ուրախ շրջան բոլրած՝  
շատեր նաշ կընեն կաք ու խորոված:

Գիշերն ալ սուս-փուս կը լրու ահա,  
յոզնած քոչորին հանգիստ քուն կուտայ.  
միայն կուլ մըն է որ կը բառաչէ  
եւ քունը մոռցած, նորբը կը կանչէ:

## 4

Քարւանին ծայրը լեռները հասաւ,  
հասաւ, ձուլուեցաւ բուխ ամպերու նետ.  
վրան-վրանի ետեւ բուսաւ  
ծաղիկներուն մեջ լեռան խոտաւէս:  
Եկած ու շարուած անվերջ վըրաններ,  
շրջան կազմելով պաղ ակի ափին՝  
ինչպէս ծեր արծուի կարկտնած բոյներ,  
յենուած են մեկ-մեկ բարձր դարափին:  
Գուգարք լեռներու սիզաւէս լանջին  
բազմեր են Հայու, Թուրքի վըրաններ,  
բայց դարձեալ խառն եռջ-եռջի մեջ՝  
անց ու դարձ կընեն ուղտի քարւաններ.  
ձին կը խրխնջէ, զամբոք կը հաջէ,  
բոլորն ալ իրենց եռւրտը կը հանճան.  
կը մայէ անուշ ամիկն ոչխարին.  
սարեր ու ձորեր նորեն կեանք առփն:



## ԿԱՐԿՈՒՏԸ

### 1

Անիշն կը վերադասնայի և կանցնէի հայ գիւղի մը մէջէն։  
Գիշերը սասափիկ անձրեւ էր եկեր, այնքան սասափիկ որ  
շատ պատեր ու խրճիթներ էր վկցուցեր։ Փողոցներէն հեղեղ-  
ներ կը վագէն շառաչելով։ Երկինքը ծածկուած էր միաձող  
կապարագոյն ամպերով։ գարձեալ ատեն-ատեն կանձրեէր։

Հասեր էի գիւղի վերջին խրճիթն, երբ ճանչաց անոր  
դուռը, ականջիս հասան մէկ քանի մանուկներու ճիշերը և  
դուրս ելու առջիս ալեզարդ ծերունի մը՝ բան ուսին։ Վալր  
կեան մը նայեցաւ ինձի, յետոյ ովատերուն տակէն անցք վկնտ-  
ռեց քալելու։ Անոր հնամաշ տրեխներէն ջուրը կը հոսէր  
գուլպաներուն մէջ։ Խոնաւութիւնը կը թափանցէր բաց կուրծ-  
քէն ներս։

Գիւղէն դուրս էինք եկեր։ Մէկիկ մէկիկ աչքէ կանցնէի  
երկու կողմիս արտերը։ Շատերուն միայն մէկ քանի ակօսներն  
էին արուեկը և մէջուղերը լճակներ գոյացեր։ Մէկ քանին  
ողովուեր էին ամբողջովին։ Զրի հոսանքները արմատախիլ  
էին րրեր, քչեր, տարեր ցորենի գալար ծիլերը և հաւաքեր  
ակօսներուն մէջ։

Ցեխ էր գոյացեր խրաքանչիւր վորքը շաւիղի վրայ։  
ողասոր, կարմրագոյն ջուրը լիցուեր էր ամէն մէկ փոսի մէջ,  
և շատ հասկեր կը լողային անոնց երեսը՝ խեղդուածներու  
պէս։

— «Վա՛ս, վա՛ս», — ըստ ծերունին։

Բայց վեսար ընդհանրագոյն շատ ալ մեծ չէր երենար։  
Հողը դիմացեր էր, կը տեսնուէին բոլորովին չվեսասուած ար-



անքամ, ծիլերը դիմացեր էին և հիմա կը սիսէն զուարթ  
կերպով ցցել իրենց գլուխները։

— «Է՛, վա՛սք Ասածու, — ըստ ծերունին՝ տեսնելով  
աստիք, շատ ալ վիաս չէ եղեր»։

— Քու արտդ ալ այսպէս ըլլալու է, ծերունի, — սրտա-  
պնդեցի զինք։

Գլուխն երեցուց անխօս։ Կը կասկածէր և նայուածքը  
միշտ հեռուներն էր։

### 2

Այսպէս, քալելով, մենք հեռացանք գիւղին և յետոյ  
ծոեցանք զէպի լիաները։ Ծուեցանք թէ չէ ծերունին վայր-  
կեան մը կանգ տուաւ և կաշխատեր հեռուէն նշմարիլ իր ար-  
տին վիճակը։

— Ո՞րն է արտդ։

— Է՞ն բարձրինը։

Զրի հեղեղն'ը կը հոսէին անկէ և կը վայլէն ջրա-  
կոյտեր։

Սերունին գունատեցաւ :  
— Տունս քանդուեր է ...  
— Վնասուեր է արտը ...  
— Զեմ գիտեր դեռ, — ըստու խեղուած ձայնով, գուցէ  
աչքերս չեն զատեր . . . ծերացեր եմ . . .

Առաջ գացինք : Կը մօտենացինք : Քալելը աւելի կը  
դժուարանար, վերէն զրեթէ հեղեղ էր որ կիջնէր՝ խառն ծիւ  
լերու և ցօղուններու հետ . . . Կը հետը ծերունին, կարեր եր  
շունչը : Քիչ մէն ալ քալեցինք : Ա՛ւ կանաչ չէր երենար, ցեխի  
հեղեղ և ջուր էր որ կը ահանէինք . աւերիչ, ապականիչ հե-  
ղեղ . . .

Մէկ քանի քայլ յետոյ՝ կանգ տուաւ գեղացին և բահը  
ուսէն վար իջեցուց : Իր արտին քով էր : Թշուա՛ռ արա . . .

Վերը, փոսերուն մէջ գոյացած ջուրերը պատուեր էին  
իրենց թումբերը, ուժգնութեամբ վար հոսեր և զրեթէ սրբեր  
էին արտը : Տեղ-տեղ, ովտախներու պէս մնացեր էին ցորենի  
ծիլի կղզեակներ, և ցոյց կուտացին իրենց մերկ արժաները:  
Երկար, կանաչ չերտեր իրարու վրայ, արժանախիւ, ջարդուած  
և հոգեվարք, սահեր էին ամէն ուղղութեամբ և թաթխուեր  
ցեխով : Հողն ամրով կանչցեր էր անոնց դիակներով . . .

Ինկաւ բահը ծերունին ձեռքէն, մթնեցին աչքերը,  
կթոսեցան ծունկերը և նստեցաւ կեցած տեղը, ու գլուխը  
թաղեց ձեռքերուն մէջ . . .

Քշեցի ձիս : Սիրո չունեցայ միսիթարական բառ մը ան-  
գամ ըսելու : Աւելորդ էր :

Եւ երբ հեռուէն ես նայեցայ, տեսայ թշուառ ծերունին,  
միշտ նոյն դիրքին մէջ, նստած իր աւեր արտին քով, զլուխը  
ձեռքերուն մէջ, և ուկեղարդ մազերը տեղացող անձրեին ատկ . . .



## ԻՆՉՈՒ ԿՈՒԼԱՅ...

### 1

Կառքին մէջ նստած էին փոքրիկ աղջիկ մը և տղայ մը:  
Աղջիկը հինգ տարեկան էր, իսկ տղան վեց : Անոնք քոյր ու  
եղբայր չէին, այլ մօրքքորդիներ : Իրենց մայրերը մնացեր էին  
գիւղը, ուր հիւր էին գայեր, իսկ մանուկները տուն կը  
խրիէին դայեակին հետ :

Ճամբան, ուրիշ գիւղի մը մօտ, կառքին անիւը կոտ-  
րեցաւ և կառավաճան ըստ թէ՝ անկարեկի է առաջ երթալ,  
պէտք է անիւը նորոգել և ինք չուտով կը նորոգէ :

— Աղէ՛կ յարմար ատենին պատահեցաւ, — ըստ դայ-  
եակը . բաւական ժամանակ է որ ճամբան ենք, պղտիկներս  
անօթեցած կըլլան, ես ալ անոնց կաթ կը խմյնեմ ու հաց  
կու տամ, լա՛ւ է որ հետերնիս պաշար ալ են դրեր :

Աշուն էր, դուրս ցուրտ էր ու անձրեւ կու դար: Դայ-  
եակը մանուկներուն հետ մտաւ առաջին պատահած խրճիթը :

Խրճիթը մուլսէն սեցած էր, որովհետեւ տունը ծինելոյդ  
չունէր, ձմեռը որ թոնիր վատէին, պէտք է դուռը բանային  
որպէսզի մուխը դուռը ելէր :

Խեղճ խրճիթ էր, կեղտու ու հին :

Սենեակին մէջ մանուկները ամէնէն առաջ ուշադրու-  
թիւն գարձուցին իրենց հասակակիցներուն, — բոպիկ աղջիկ  
մը՝ կեղտու շապիկ մը հագած, և հաստափոր, զիրուկ տղայ  
մը : Իսկ երրորդը՝ մէկ տարեկան աղջիկ մըն էր, որ պառկած  
մնացեր էր թոնիրին մէկ անկիւնը ու կուլար: Տանտիկինը կը  
լոեցնէր դայն, բայց երբ ներս մտաւ դայեակը՝ մանուկներուն

հետ, թողուց երախան և սկսաւ հիւրերուն համար տեղ պատրաստել՝ պատուաւոր անկիւնը:

Դայեակը կառքին մէջէն ներս բերաւ փայլուն փականքով պարկը: Գեղացի մանուկները զարմացած կը հայէլին և իրարու ցոյց կուտային փականքը:

Դայեակը փոեց մաքուր անձեռոցը, հանեց տաք կաթով լեցուն շին ու հացը, և դրաւ սեղանին վրայ:

— Տէ՛, պղտի'կներ, մօտեցէ՛ք, կերեկ անօթի բլաւու էք:

Բայց մանուկները չէին մօտենար: Սաթենիկ, աչքերը յառեր էր կիսամերկ մանուկներուն, նայուածքը չէր զատեր անոնցմէ և ապշած՝ մերթ կը նայէր մէկուն, մերթ միւսին: Երբեք չէր տեսեր այսքան կեղասու շապիկներ և այսպիսի մերկ մանուկներ, կը զարմանար:

Իսկ Պետրոս երբեմն կը նայէր Սաթենիկն, երբեմն զեղացի մանուկներուն, և չէր գիտեր ինչ ընկլիքը:

Սաթենիկն ուշադրութիւնը զրաւեր էր մօնաւանդ փոքրիկ աղջիկը, որ պառկած՝ կը ճշար բարձրածայն:

— Ինչու կուլայ, — հարցուց Սաթենիկ:

— Ուտելիք կուզէ, — պառասխանեց մայրը:

— Տուէ՛ք, ինչու չէք տար:

— Կուտայի, բայց որ չի կայ:

— Տէ՛, շ'ւա ըրէք, — կը այս դայեակը՝ շարելով հացի կտորները սեղանին վրայ. շ'ւա, շ'ւա:

Մանուկները լսեցին և մօտեցան սեղանին:

## Զ

Դայեակը գաւաթներուն մէջ կաթ լեցուց և տուաւ մէկ մէկ կտոր հաց. բայց, Սաթենիկ չուզեց ուտել և գաւաթը անդին դրաւ առջեւէն:

Անոր հետեւլով՝ նոյնն ըրաւ նաև Պետրոս:

— Իրա՞ւ այդպէս է, — ըստ Սաթենիկ ցոյց տալով մանուկներուն մայրը:

— Ինչը՝ իրաւ է:

— Որ կաթ չունի:

— Ո՞վ զիտէ. ատի մեր զիանալիք բանը չէ, դուք կերէք ձեր նախաճաշը:

— Չե՛մ ուտեր, — ըստ Սաթենիկ:

— Ե՛ս ալ չեմ ուտեր, — ըստ Պետրոս:

— Անո՞ր տուր, — կրկնեց Սաթենիկ, աչքը չեռացնեւ լով փոքր աղջկան վրայէն:

— Հերի'ք է պարապ բաներ խօսիք, — ըստ դայեակը. խմիցէք որ չպաղպի:

— Չե՛մ խմեր, չէ, չեմ խմեր, — յանկարծ պոռաց Սաթենիկ. տունն ալ չեմ խմեր՝ եթէ անոր չտաս:

— Ես ալ չեմ խմեր, ե՞ս ալ, — կրկնեց Պետրոս:

— Պարապ բաներ կը խօսիք . . . . նորէն սասաեց դայեակը: Կարելի՞ բան է բոլոր մարդիկը հաւասարցնել. որու որ Սատուած տուեր է . . . ձեզի, ձեր հայրիկին՝ Աստուած տուեր է:

— Ինչու Աստուած ասոնց չէ տուեր, — հարցուց Սաթենիկ:

— Ատի մեր խելքին բանը չէ, այդպէ՛ս է եղեր Աստուած կամքը, — ըստ դայեակը, և կաթ լեցնելով գաւաթին մէջ, տուաւ դեղացի կնոջը՝ որ խմբնէ մանկան:

Մանուկը խմեց և ձայնը կտրեց. բայց փոքրիկ հիւրերը չէին հանդարտեր. ու Սաթենիկ ոչ ուտել կուզէր, ոչ ալ խմել:

— Աստուած կամքն է, — կը կրկնէր անիկա. բայց ինչու համար այդպէս է անոր կամքը:

— Այդպէս չեն խօսիր, — ըսաւ դայեակը՝ գլուխը շարժելով. լաւ բան չէ, հայրիկին կըսեմ:

— Բա՛, — կրկնեց Սաթենիկ. ես արդէն վճռեր եմ, ամէն բան վճռեր եմ. պէտք չէ ու պէտք չէ:

— Ի՞նչո՞ւ պէտք չէ:

— Այս որ մէկը շաս ունենայ, իսկ միւսը ոչինչ:

— Բայց՝ կարելի է դիտմամբ այդպէս է, — ըսաւ Պետրոս:

— Ո՛չ... ա՛լ ոչ կուտեմ, ոչ կը խմեմ...

Յանկարծ, մուլի անկիւնէն մէկը հազար և խոպոտ ձայնով ըսաւ:

— Ա՛խ, մանուկներ, լաւ մանուկ էք, բայց լաւ չէք խօսիր:

Ու դարձեալ հազար:

## 3

Մանուկներուն աչքերը դարձան ձայնին կողմը, և տեսան որ հոն կերենայ աղեղարդ գլուխ մը ու օրօրուելով կըսէ:

— Աստուած չար չէ, մանուկներ. Աստուած բարի է, մանուկներ. անիկա կը սիրէ ամէնքն ալ: Իսկ եթէ մէկ քանին գաթայ կուտեն, և ուրիշներ հաց ալ չունին. Աստուած ինք չէ որ այդպէս է կարգադրեր, այլ մարդիկ են այդպէս ըրեր:

— Հասպա ի՞նչպէս պէտք է ընել, որ բոլորն ալ ամէն բան ունենան, — հարցուց Սաթենիկ:

— Ի՞նչպէս ընել, — շնչեց ծերուկը. պէտք է ընել այնպէս, ինչպէս պատուիրեր է Աստուած: Աստուած պատուիրեր է ամէն բան կէս ընել:

— Ի՞նչպէս, ինչպէս, — հարցուց Պետրոս:

— Աստուած պատուիրեր է կէս ընել:

— Պատուիրեր է կէ՞՞ ընել, — հարցուց Պետրոս: Որ մեծնամ, այդպէս պիտի ընեմ:

— Ես ալ պիտի ընեմ, — հաստատապէս աւելցուց նաև Սաթենիկ:

— Հերի՞ք է, հերի՞ք է պարապ բաներ խօսիք. խմեցէք, կաթերնիդ կը պաղի, — նորէն սաստեց դայեակը:

— Զե՞նք խմեր, չե՞նք խմեր. ու երբ մեծնանք՝ անպատճառ այդպէս պիտի ընենք, — միաձայն կրկնեցին մանուկները:

— Ապրի՞ք, ապրի՞ք, — ըսաւ ծերուկը և այնպէս մը ժպտեցաւ՝ որ միայն վարի լինտին երկու ակուաները կերենայն: Ես չեմ ապրիր որ տեսնեմ ձեր ըրածը, բայց լաւ էք մտածեր. թող Աստուած օրնէ՛ ձեզ:

Կառապանը ներս եկաւ՝ յայտնելու որ անիւը չինուած է. ու մանուկները գային:

Իսկ թէ մանուկները պիտի բոնե՞ն իրենց խօսքը, կը տեսնենք:



## ԳԵՂՋՈՒԿԸ

Առտուանց կանուխ ադամայ մուրին  
«եր՛ու» կը ճրուճրուալ ձայն մը մեղմապին.  
Երկրագործն է որ մրմունջը բերնին:  
Կը բանայ դուռը իր խարխուլ գոմին:  
Կը շոյէ եզներն իր կոշտ ձեռերով,  
Կը շոյէ անոնց աչքերը, այգուն,  
Եւ մեղմ ու բներով ձայնով դողդոջուն,  
անոնց ականջին կրսէ երգելով.

— Հա՛ իմ սարտարներ, անխոնջ մշակներ,  
դուք երկրագործին աջ ու ձախ ձեռքեր.

դուք աշխատանքի քրտինքի բնկեր,  
ելե՛ք, դաշտն երրանք, առտուն է ծագեր:

Վաղուց հասեր է զարուն կենսաբեր,  
մեր առջեւ բանի, զործի դուռ բացեր.  
գուրանք լծենք, հողը փորփորենք,  
աջ ու ձախ փրուենք մենք անրիւ սերմեր:

Ամառը կուգայ, կը հասնի շատ շուտ,  
վարե՛նք արտերը քարուտ, քարքարուտ.  
պետք է որ հնձեմ, կապեմ ևս խուրձեր,  
որ դուք ալ առնեք առաս վարձք ձեր:

Գե՛ն, ի՞մ եզներ, ելե՛ք շուտ,  
արեն եկաւ, անցաւ մուր:

Ամրան ետեւեն մեծ-մեծ քայլերով  
աղունը կուգայ—տխո՛ւր եղանակ.  
կուգայ ամալ, անձրեւ, մբրրիկ ու հով,  
ցորենն աղալու յարմար ժամանակ:

Աչդ որ քարքես՝ ծիւն ու փորորիկ,  
քամին ու փուէր կը փշեն սաստիկ.  
«Երրանք անտառը, կը պոռան մարդիկ,  
հատեր է փայտը, չունինք վառելիք:»

Ելե՛ք, ի՞մ քաջեր, երրանք դատելու,  
աշխատանքը մեծ օրենքն է Աստծու.  
տարին շուտ կանցնի, կերպայ, կանգ չառներ,  
կը բերէ մեզի դարձեալ նոյն հոգեր:



## ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԷՍ ԳԻՐ ՀՆԱՐԵՑԻՆ

### 1

#### ՆՇԱՆԱԳԻՐ ԵՒ ԳԱՂԱՓԱԾՈՎԱԳԻՐ

Գիտէք որ, աղա՛ք, ասկէ հազարաւոր, հազարաւոր  
տարիներ առաջ՝ մարդիկ մեր հրմակուան գրերուն պէս գրեր  
չունեին: Թիրես երրեք մտածած չեք թէ ինչպէս հնարուեցան  
գրերը և ինչ փոփոխութիւններ կրեցին, մինչև որ եկան,  
մեզի հասան: Պատմիմ ձեզի:

Կար ատեն մը, որ մարդիկ գիր չունեին, գրով իրարու  
միտք հասկցնել չեն գիտեր: Որովհետեւ, այդ ատենները աւ  
նոնք շատ տգէտ են գեռ:

Բայց երբ քիչ քիչ իրենց խելքը բացուեցաւ, մտածեցին  
որ նշաններով ալ կրնան իրարու րան հասկցնել և իրարու հետ  
խօսիլ: Մինչեւ այն ատեն՝ մէկմէկու հետ կը խօսէին կամ  
շարժումնելով, ինչպէս կը նեն համրելու ու մանուկները, կամ  
ձայնով՝ ինչպէս կը խօսինք մինք ամէնքս:

Ե՞նչ ըրին,— սկսան քարի կամ փայտի վրայ գծել  
առարկաներու պատկերները: Երբ կը տեսնէին այդ պատկեր-  
ները՝ կը յիշէին անոնց առարկաները, և այսպէս: մէկ քանի  
առարկաներ իրարու քով շարուած տեսնելով, թէեւ դժուա-  
րութեամբ, բայց վերջապէս կը մրտանէին միաք մը:


Այսպէս, նայեցէք ահա թէ ինչպէս էին առաջին գը-  
րերը, որնց ըսենք նշանագիր:

մարդ	շուտ	ձի	լեռ	լուսին	սրեւ

Տեսանելի և շոշափելի առարկաներու պատկերներ գծելը զիւրին, հասկա ի՞նչպէս պէտք էր հասկցնել այսպիսի գաղափարներ՝ որ անտեսանելի են կամ վերացական. ի՞նչպէս պէտք էր գծել, օրինակի համար, իմաստութիւն, շարժում, վիշտ, հոլ, ուրախութիւն, և դեռ այս տեսակ հաղար ու մէկ գաղափարներ:

Ասոնք ալ հասկցնելու համար, սկսան այսպիսի պատկերներ գծել, որոնք մօտաւորապէս միշեցնէն այդ գաղափարները:

Այսպէս, իմաստութիւնը հասկցնելու համար բաց աչք մը գծեցն, որ ըսել է՝ ամէն բան տեսնող, ամէն բան հասկցող, այսինքն իմաստութիւն. հովը հասկցնելու համար՝ կը գծէին առագաստ մը. շարժումը իմացնելու համար՝ քաղուածքի ձևը, եւալն եալն:



Ասոնք ալ կը կոչուին գաղափարազիք:

## 2

### ԲԵԼԵԱԾԱԳԻՐ ԿԱՄ ՍԵՊԱԳԻՐ

Ուրիշ ազգեր ալ, ի՞նչպէս հին Հայերը, կը գործածէին տարբեր տեսակ նշաններ, որոնք կը նմանէին սեպերու, գամերու. ասոր համար ալ կը կոչուին սեպազիք կամ բելեռազիք:

Սեպազրեր չէին գրեր մագաղագիք կամ թուղթի

վրայ, որովհետեւ այն ատեհնները դեռ ո՛չ մագաղագիք կար,


!	մարդ	ոչ ալ թուղթ։ Զանոնք կը փարագրէին ասլաւամներու վրայ, որոնցմէ շատերը դեռ մինչեւ այսօր ալ Հայաստանի զանաղան մասերուն մէջ անեղծ մնացեր են. օրինակի համար, Բալուի մէջ, Վանի բերդին մէջ և Խարբերդէն քիչ մը հեռու՝ Իզոլի գիւղին մօտերը, Եփրատի ափին վրայ։
▼	աշխարհ	
«»	քագաւոր	
↔	փայտ, ծառ	
↔↔	քոչուն	
▼	կին	Բայց, յայտնի է որ, թէ նշանազրերը, թէ՝ գաղափարազրերը և թէ սեպազրերը շատ դժուար էր գործածել. մարդիկ ի՞նչպէս միտք պիտի պահէին այդքան նշանները և այդքան զրերը։ Հազարաւոր գաղափարներ կան, հետեւաբար ամէն մէկուն համար ալ մէկ մէկ նշան կամ գիր պէտք էր։
▼▶	եզ	
▼▶	մեծ	
▼▼▼	տուն, տանօր	
◀▶▶	ազգ, ժողովուրդ	Պէտք էր զրելու ուրիշ կրպէ մը գտնել։ Եւ Փիւնիլեցիներն եղան՝ որ գտան ամէնէն դիւրին ու ամէնէն ինելացի կերպը։
▼▼	դուռ. (բաղադրի)	
▼▼▼	մարդիկ	

ՓԻՒՆԻԿԵԱՆ ԱՅԲՈՒԹՅԵՆ

Փիւնիկեցիները վաճառական ժողովուրդ էին, ուստի ամէնէն աւելի պէտքը կը զգացին նամակագրութեան, գաղափարագրերով ու նշանագրերով չէին կրնար իրենց պահանջները դուացնել: Անհրաժեշտ էր գանել գրելու այնպիսի եղանակ մը՝ որ ամէն մարդ դիւրութեամբ սորվէր, դիւրութեամբ գործածէր և դիւրութեամբ ալ կարդար:

Փիւնիկեցիները խորհեցան որ լեզուին մէջ գանուած ձայներուն համար մէկ մէկ նշան յօրինեն. և յօրինեցին: Ով որ այդ նշանները տեսնէր՝ անոնց ձայները պիտի հանէր, և ձայները հանելով՝ հետաձ ու բառ մը ըսած պիտի ըլլար: Ճիշտ այնպէս, ինչպէս որ կը սկսենք հիմա մենք:

Փիւնիկեան այբուբենը կը բաղկանար 24 ձայնանշաններէ: ահաւասիկ.



Յետոյ, Փիւնիկեցիներուն այբուբենը առին Յոյները և իրենց լեզուին յարմարցուցին. Յոյներէն ալ հետզհատէ ուրիշ աղգեր ընդօրինակեցին, — և այսպէս, ստեղծուեցան հիմակուան այբուբենները:



ՀԱՅԵՐԵՆ ԳՐԵՐՈՒԻ ԳԻՒՏԸ

Երբ որ Յոյները, Ասորիները, Պարսիկները և Հրեաները Քրիստոնէ հարիւրաւոր տարիներ աւած ալ արգէն յրենց աշխարհուրենը ունէին, Հայերը դեռ գուրդ էին հայերէն այլուրդնել:

Իրաւ է, Հայերը մինչև 400 թուականները ունիին գրքեր, բայց անոնք դրուած էին Յոյներուն կամ Ասորիներուն լեզուով: Եկեղեցին մէջ ալ Ս. Գիրքը կը կարդացուէր այդ լեզուներով, բայց ժողովուրդը բան չէր հասկնար: Անր համար՝ թարգմանիչները կը սկսէին, կարդալէ հաք, անդամ մըն ալ անոնց խմասը հայերէնով բացատրել, որ հասկնայ ժողովուրդը:

Մէկ քանի վանքերու մէջ բացուած էին գորոցներ. բայց հայ աղաքը ստիպուած էին չորչարուիլ՝ յունատէն ու ասորիբէն սորվէլու համար, որովհետեւ ո՛չ հայերէն գրեր կային, ո՛չ ալ հայերէն գրքեր:

Մեր Ս. Մեսրոպ վարդապետը, որ շատ հմաւտ էր յոյն, ասորի ու պարսիկ լեզուներուն՝ կը մասածէր ճար մը գանել և հայերէն գրեր ստեղծել:

Ս. Մեսրոպ առաջ, թագաւորին պալատին մէջ ատենադապէր էր, բայց յետոյ համարկեցաւ պաշտօնէն, վարդապետ ձեռնադրուեցաւ և սկսաւ գեղէ գեղ, քաղաքէ քաղաք պատելով՝ քարոզել ու լուսաւորել



ժողովուրդին միտքը : Շատ մը տեղերէ հաւաքած էր աշա-  
կերաներ և անոնց ալ ուսում կուտար . բայց , կը տեսնէր թէ  
յօն կամ ասորի լեզուներով ուսում առնելը ինչքան դժուար  
բան է՝ հայ աշակերտին համար : Սիրտը կը տանջուէր և գիշեր  
ցորեկ կը մտածէր հայերէն զրեր հնարելու :

Այս ատենուայ Հայոց թագաւորն էր Վուամշապուհ ,  
որ կրթասէր և բարի մարդ էր . իսկ կաթողիկոսն էր Ս . Սա-  
հակ , որ նոյնպէս զիտուն և չատ հմուտ էր :

Մեսրոպ դիմոց Սահակ կաթողիկոսին և ինդրեց որ ճար  
մը գանուի հայերէն զրերու համար . յայտնեց որ ինք չատունց  
կը մամուայ այդ բանին վրայ և որոշած է անպատճառ հնար  
մը զանել :



Սահակ կաթողիկոս չատ ու-  
րախացաւ և Վաղարշապատ քա-  
ղաքին մէջ ժողովի հրաւիրեց  
միր աշխարհի բոլոր զիտնական-  
ները : Այդ ժողովին ներկայ էր  
նաև Վուամշապուհ թագաւորը  
ինք ալ :

Ժողովականները երկար-բա-  
րակ խորհրդացան , խորհրդակցեցան՝  
թէ ի՞նչպէս հնարեն Հայոց լեզ-  
ուին համար հայերէն զրեր : Ժո-  
ղովին մէջ , Վուամշապուհ թագաւորը յայտնեց թէ՝ դէպի Սի-  
ջագեաք իր ճամբորդութեանը միջոցին , Հարէլ անունով քա-  
հանայ մը տեսած էր . այս քահանան յայտնած էր որ Դանիէլ  
անունով ասորի եպիսկոպոսին քով հայերէն զրեր կան : Բայց ,

որովհետեւ թագաւորը այն ատեն չատ զբաղած էր ուրիշ գոր-  
ծերով , չի կրցաւ անձամբ ստուգել :

Ժողովականները չատ ուրախացան այս լուրին վրայ , և  
անմիջապէս Վահրիճ անունով մարդ մը խրկեցին Դանիէլ  
եպիսկոպոսին քով՝ որ երթայ , բիրէ այդ զրերը :

Վահրիճ գնաց և բերաւ զանոնք . բայց , տեսան որ չատ-  
ձայներ պակաս են : Ուստի , Մեսրոպ ինք եղաւ զնաց Դանիէլ  
եպիսկոպոսին քով , որ անոր հետ խորհրդակցելով՝ լրացնէ  
պակասները : Գնաց , բայց մեծ օգուտ մը չի տեսաւ :

Սակայն Մեսրոպ չի յուսահատեցաւ . ճամբայ ինկաւ ,  
գնաց չատ երեւելի յօն լեզուագէսներու քով և անոնց աջակ-  
ցութիւնը իննղրեց : Սիրտը դրեր՝ էր որ անպատճառ համի իր-  
նապատակին . զիշեր-ցորեկ միմիայն այս բանին վրայ կը մտա-  
ծէր , որովհետեւ , Հայաստանի մանուկներուն փրկութիւնը այդ-  
զրերէն կախուած էր :

Վերջապէս , օր մը , երբ աղօթքի ժամանակ յափշտա-  
կուած էր , իրեն այնպէս երեցաւ թէ՝ ձեռք մը գրերու նշան-  
ներ կը զրէ քարի մը վրայ , որոնց ձեւերը խկոյն տպա-  
ւորուեցան իր ժամբին մէջ : Շուտով զրի առաւ այդ ձեւերը , և  
Հռուրանոս յօն լեզուագէտին հետ կարգի զնելով , բերաւ  
Հայաստան :

Ի՞նչ ուրախութիւն , ի՞նչ յնձութիւն Հայաստանի մէջ :

Սահակ ու Մեսրոպ , ձեռք ձեռքի տուած , չուտով բա-  
ցին դպրոցներ , ուր մկան հայ մանուկները հայերէն կարդալ  
ու զրել սորիլի՝ հայ տառերով :

Այդ դպրոցներէն զորս եկան չատ առաջապէմ աշա-  
կերաներ : Սահակ ու Մեսրոպ զանոնք խրկեցին Կ . Պոլիս ,  
Աթէնք և Աղեքսանդրիա , որպէսզի այդ քաղաքներու նշա-

Նաւոր վարժարաններուն մէջ կատարելագործն իրենց  
ուսումը:

Աշակերտները վերադարձուն մեծ ուսումն առած, և իրենց  
երեկի վարպետներուն՝ Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի հետ,  
սկսած յունաբէնէ թարգմանել Աստուածաշունչը և որիշ  
գրքեր:

Ս. Մեսրոպի համրած զրերը կը կոչուին՝ իրենց ձեռվը,  
երկաթագիր.

## ԵՐԳԴԵԶԵԾՈՒԹԻՒԾԿՇՀՂՃ ՄՅԱՇՈՉՊՀԱՄՍՎԱՄՐՅԻՓՔ

Հիմակուան մեր զլիսասառերը այդ երկաթագրերուն  
ձեն ունին: Մեր շատ հին գրքերը այդ զրերով զրուած էին  
մաղաղաթի վրայ. այն ատեն դեռ թուզի չի կար: Յեսոյ,  
ժամանակի ընթացքին, Ս. Մեսրոպի դասած գրերը հետզհետէ  
կոկուեցան, փոփոխութիւններ կրեցին և ստացան հիմակուան  
մէկէ աւելի տեսակ ձևերը:

Մեր ազգին ամէնամեծ բարերաբներն են Ս. Սահակ և  
Ս. Մեսրոպ, որոնք հայ զրերը հնարելով՝ կորուստէ ազատե-  
ցին մեր լեզուն, հիմը զրին մեր զրականութեան և Հայու-  
թիւնը լուսաւորեցին գիտութեան արեգակովը:



## ԳԱՐՈՒՆՆ ԵԿԱԿ

Գարնան շողով,  
անուշ տաղով՝  
ծիծառն եկաւ կարապետ,  
ցողաշաղախ վարդի շնառ,  
տե՛ս, կը ժպտի անոր ჩես:

Գաշտ ու արօտ  
վաղուց կարօտ  
շերմ արեւին կենսատու,  
ալ ու ալւան,  
կանաչ հագան,  
բարեւ տուին իրաբու:

Չոր ու անտառ,  
հովիտ ու սար  
գոյն-գոյն ծաղկով գորդարուն՝  
կերգեն ուրախ  
երգեր ու տաղ.  
«ա՛խ, ինչ սիրուն է գարուն:»



# ՎՐԱՆՏՈՒԱԾԸ

1

Որոշուած էր, պիտի վանտէին զինքը։ Շատունց էր որ դպրոցին մէջ այս տեսակ դէպք չէր պատահած։ բայց, տեսուչ Պ. Կոպելսիկոսը սահամոզման էր և կեր, որ դպրոցը այն տաեն կրնայ ծաղկիլ ու բարգաւաճիլ մլայն՝ երբ Եղառքը Արթինեանը ալես աշակերտ չըլլայ։

Եղուարդ Արթինեան տարօրինակ տղայ էր, պատմութեան նկատմամբ անպատկաս կարծիքներ կը յայտնէր, ըսելով որ՝ մնձ մասով մասցածին է։ Կթէ նոյնիսկ բոլորն ալ ճիշտ ըլլայ, մարդ բան չի կորանյներ՝ Կթէ չգիտնայ թէ ո՛ր տարին ո՛ր թագաւորը գահը բարձրացաւ, և ո՛րու հետ ի՞նչ պատերազմներ բրաւ։

Բայց ուսուցիչներն աւելի կը սիրէին՝ քան թէ կատէին դայն, մանաւանդ Բնագիտութեան դասատուին աչքի լոյն էր. և չարիքին արմատն ալ արդէն ճիշտ հոս էր։

Եղուարդ յաճախ անուշաղիր կը թողուր դասերը, բայց խաղի համար չէր։ Ո՛չ, անիկա իր բոլոր ազատ ժամանակը և զրէթէ իր ձեռքն անցած ամէն դրամ։ կը յատկացնէր այն բանին, որուն ինը «գիտական հետազոտութիւն» կըսէր։

Դպրոցին մէջ «քիմիկոս» էին դրեր իր անունը։ Իր գրասեղանին և գիշերուայ պահարանին արկղները շարունակ լեցուն էին դանաղան փոշիներով, բիւ բեղներով, հեղուկով լիւ սրուակներով և առակիէ գործիքներով, որոնց պիտակներուն վրայ անհասկնալի անուններ զրուած էին։

«Քիմիկոսին փորձերը շատ էին, բայց ամէնքն ալ մի-

և նոյն արդիւնքն ունէին, — անախորժ, գարչելի հոս մը։ Վեցերորդցիները շարունակ կը ծաղրէին զինք, ըսելով թէ՝ Եղուարդ ամէնէն երևելի գարշահոտութիւնը կը պահէ ընդունելութեան օրերուն՝ երբ տեսուչը հիւր ունենայ։

2

Տեսուչը շատ անգամ ուշաղրութիւն չտալու կը զարնէր, բայց վերջապէս իր համբերութեան բաժանին ալ յեցուեցաւ։

Եղուարդ ուղեց նոր, դեռ նմանը չտեսնուած ուժով պայթուցիկ նիւթ մը հնարել, և զայն իր անունով հռչակել։

Երեք օր շարունակ փակուեցաւ դպրոցին ետեի փոքրիկ քիմիական աշխատանոցին մէջ։ Ներաէն գոցեր էր դուռը և կաշխատէր միս մինակ։ Ուսուցիչները չէին զիտեր թէ ի՞նչ կը չինէ, բայց աշակերաներուն մէջ զանազան լուրեր կը պտտէին։

Երրորդ օրը, բոլորն ալ մէկ անգամէն հասկցան թէ ինչով էր զրադած «քիմիկոս»ը, որովհետեւ հետեանքը յայտնի էր։

Նախաճաշի զանգակը նոր էր հնչեր, երբ յանկարծ լսելի եղաւ խլացուցիչ որոստում մը։ Դպրոցը գանուողները՝ բոլորն ալ բակը թափեցան։ Փոքրիկ աշխատանոցը բոլորովին քարու քանդ էր եղեր, իսկ մօտակայ չինքին ապակիները՝ փշուր փշուր։

Տարօրինակ բան, մինակ ինքը՝ գունատ ու զարնուրած «քիմիկոս»ը բան չէր եղեր, մինչդեռ, հետաքրքիր Անդօն, որ ուղեր էր պայթումէն առաջ՝ աշխատանոցին կեղտու պատուհանէն ներս նայիլ, վնասեր էր զլուխն ու ձեռքերը։

Շուտով, բարկութեանէն ու արագ քալելէն չնչակտուր՝ պայթումէն տեղն հասաւ տեսուչը, և հրամայեց հիւանդանոց

փոխադրել վիրաւորը, իսկ Եղուարդն ալ՝ դնել պատժարանը, մինչև որ իր մասին որոշում արուի: Տեսուչը չէր ուզեր իր բորբոքած միջոցին անմիջապէս վճիռ տալ:

## 3

Հետեւեալ օրը առաւօտուն՝ Եղուարդ գեւ պատժարանն էր. իսկ իրկուան դէմ, ճաշէն յետոյ, աշակերտները հաւաքուեցան մեծ սրահը: Փոքրերը ներս կը մանէին՝ իրենց ոտքի ծայրերուն վրայ կոխելով և կը խօսէին ՀՅՈՒԼով: Գիտէին թէ լ'նչ պիտի ըլլար և ամէնքն ալ ախուր էլն:

Տեսուչը կանգնած էր ամպիտնին վրայ, անտեսը համդիսաւոր կերպով ներս բերաւ «Քիմիկոս»ը:

Պ. Կոսկերնիկ, կարծ բայց զգածուած ճառով մը ըստ աշակերտներուն, թէ քսան տարի է՝ կը կառավարէ այս գըտըցը, և առաջին անգամն է որ ստիպուած է այսքան ծանր պարտականութիւն մը կատարել:

Յետոյ, դարձաւ Եղուարդին: Եղուարդ գունաս էր, աշքերուն մէջ արցունք չի կար և իրեն այնպէս կու գար թէ այս տեսածները երազ են: Տեսուչը յիշեցուց որ՝ չատ անգամ զգուշացուցած է զինք, բայց ո՛չ խրախի և ոչ ալ յորդորի ականչ ղրած է ինք, հետեւաբար, հիմա վտանգաւոր է զինք դպրոցին մէջ պահելը, — որովհետեւ իր ներկայութիւնը կը սպառնայ ո՛չ միայն դպրոցին կարգապահութեան, այլ նոյնիսկ իր ընկերներու կեանքին:

Պ. Կոսկերնիկ հրամայեց անտեսին՝ որ տուաշնորդէ Եղուարդը նորէն պատժարան, մինչև որ հետեւեալ օրը ուսուցիչներէն մէկը ամձամբ տանի իր ծնողքին տունը: Մօրն ալ համակով իմաց պիտի արուէր վանտուելուն պատճառը:

## 4

Պատժարանին սենեակը անշարժ նստած էր Եղուարդ, անարցունք ու լաճարաց աչքերով կը նայէր փոքրիկ պատուհանէն դէպի երկինքը, ուր կը խտանային ամպեր: Իրեն համար բերուած գաւ աթէ մը թէյր մնաց այնպէս՝ առանց ձեռք դպած րլուու: Նոյնիսկ մատուցարանը աթոռէն սեղանին վրայ չի դրուեցաւ:

Դպրոցին մէջ կը տիրապետէր անսովոր խաղաղութիւն: Քնանալու ժամը կը մօտենար, բայց կենդանութիւն չէր նկատուեր. թէ՝ ուսուցիչները և թէ աշակերտները համակուած էին տեսակ մը ճնշիչ զգացումով, և չէին կրնար այդ զգացումէն աղասիի:

Եթէ երկու օր առաջ մէկը հարցնէր թէ՝ ո՞վ կը սիրէ «Քիմիկոս»ը, նոյնիսկ անսար դասընկեր հինգերորդցիները ձայն պիտի չհանէին. բայց հիմա, երբ պիտի բաժնուէին անկէ, բոլորն ալ կը զգային որ անոր բացակայութիւնը նկատելի է: Կը յիշէին անոր յաւ արարքները, փոքրիկ ծառայութիւնները: Անիկա իր ժամանակին մեծ մասը մինակ կանցնէր, բայց լաւ բնկեր էր, միշտ պատրաստ իր ձեռքէն եկած օգնութիւնը չինայելու իր բնկերներուն: Չատ բարեհոգի էր ու երբեք չէր բարկանար, թէև միւս աշակերտները յաճախ կը ծաղրէին զինք:

Բոլորն ալ անկեղծօրէն կը ցաւէին որ կը վանտեն զայն: Եղուարդ մէկ քանի տոմսակ ստացաւ, որ ընկերները զինք մխիթարելու և ուրախացնելու բարի նպատակով՝ գրեր և զուն տակէն ձգեր էին անոր սենեակը:

Մէկուն մէջ զրուած էր որ աշակերտները, ամբողջ զա-

սարանով, կուզեն երթալ, բարեխօսել տեսուչին: Բայց, բանարկուած Եղուարդ կարծես կորմացուցեր էր յուսալու ընդունակութիւնը:

## 5

Վերջացաւ տմին ինչ: Յաջողութեան ու փառքի մասին էր փայփայած երազները ցնդեցան ծուխի պէս:

Ի՞նչպէս պիտի նայէր մօրը աչքերուն: Լաւ դիտէր որ իր հօրը մանչն յետոյ, մայրը չնշին կննաթոշակ մը կը ստանար միան, և ի՞նչ զրկանքով էր որ իր դպրոցին թռչակը կը վճարէր. և ահա հիմա ի՞նչպէս կը փոխարինէր ինք մօրը այդ սէրն ու անձնազրութիւնը:

Ժամանակը շատ դանդաղ կանցնէր: Հետզհետէ բոլոր ձայները լսեցին, շարժումները դադրեցան, աշակերտները, ուսուցիչներն ու ծառաները՝ մէկը միւսին ետեն, պառկեցան քննանալու:

Միայն Եղուարդ չէր մասանէր պատկիլ. շարունակ նստեր էր պատուհանին առջև, ջախջախուած և հոգեպէս խորտակուած: Ի՞նչպէս կրնար քննանալ, երբ «վոնտուած» սոսկալի բառը՝ ահարկու ուրուականի մը պէս, կանգնած էր իր աչքերուն դիմաց և կը սեղմէր, կարիւնոտէր իր սիրալ:

Վերջապէս, ուժգին հեկեկոց մը ցնցեց՝ իր ամբողջ մարմնը. կարծես օդը քիչ էր, կը խեղդուէր: Բայցաւ պատուհանը. դուրսը խաղաղ էր, բայց թեթեութիւն չզգաց: Երկու քայլ առաւ գէպի դուռը, սակայն յիշելով որ փակէ, թուլցած ինկաւ մահճակալին վրայ:

Պառկիլ չի կրյաւ, — սաստիկ յուզուած էր: Քանի մը վայրկեան նաքը, սաքի եղաւ և սկսաւ պտակի սեննակին մէջ, մոածելով թէ ի՞նչպէս հանգստացնէ քունքերուն բարա-

խումը և զովագնէ այրող ճակատը: Նորէն դուրս նայեցաւ պատուհանէն և նորէն վազեց գէպի դուռը, զրիթէ անգիտակցարար երերոցը զայն, և յանկարծ, տեսաւ որ փակ չէ:

Եղաւ երկա՛ր ու լուռ միջանցքին մէջ:

## 6

Հոս աւելի զով էր: Եղուարդ առաջ գնաց: Ծանօթ պատերը իրեն կերենային մուալ ու թախծոտ: Շուտով հասաւ միջանցքին միւս ծայրը, ներքնայարկը տանող սանդուխին քով, ուր կապրէն ծառաները:

Այս տեղ օդը ծանը թուեցաւ իրեն: Զգաց որ մուխի հոտ մը կուգայ և զարմացաւ: Իր անզգայութիւնը կամաց կամաց անցաւ, և բոպէապէս հասկցաւ թէ տունը բռնկեր է:

«Հրդեհ»:

Այս սոսկալի բառը ուշաբերեց զինք: Վհատութիւնը, թմրութիւնը և քունը անհետացան: Սթափեցաւ հոգիով ու մարմնով:

Մոռնալով իր վիշտը, արագօրէն վար վազեց՝ տեսնելութէ ուրկէ կուգար մուխը:

Մառաներու սենեակէն դուրս կը ժայթքէր քուլայ-քուլայ տաք ծուխ և խուրձերով կայծ:

— «Ի՞նչպէս ընեմ որ ամէնքն արթնան և դուրս ելլեն», մտածեց սարսափանար՝ յիշելով որ այդ պահուն ահազին շէնքին զանազան մասերուն մէջ, մէկ քանի հարիս հոգի՝ աշակերա, ուսուցիչ ու ծառայ, հանգիտ քնացեր են:

Մէկ ննջարանէն միւսն անցնիլն ու մէկիկ մէկիկ արշմնցները՝ սպարդիւն էր: Յանկարծ, յիշեց մեծ զանզը՝ որ առտուները աշակերտներն իրենց անկողնէն կը հանէր: Զանգակին աշտարակը կը գտնուէր ահագին հին շէնքին աջ մասին

մէջ : Եթէ հնչեցնէր զայն , տամէնքն ալ կը լոելն և կարթէն նային իրենց քունէն :



Մուխի ու բոցի ահոելի լեզուներուն մէջն անցնելով , սկսաւ վաղել դէպի աշտարակը տանող միջանցքէն : Դուռը փակէր , բայց աղէկ որ խախուտէր . յուսահատ պատանին ամբողջ ուժով դարձաւ ու բացադայն : Ահա վերջապէս աշտարակը :

Եղուարդ , հովի պէս , վեր վաղեց հին , փատած աստիճաններէն , բռնց պարանը և հնչեցոց ահազանգը :

## 7

Զանգակին առաջին ձայնէն՝ մանուկները դլուխնին վեր վերցոցին իրենց անկողնին . յետոյ , տանակով որ դեռ չէ լուսցեր՝ աչքերնին շինելով , սկսանի իրարու հարցնել թէ ի՞նչ է պատահեր :

Բայց , չուտով խելայել ծառաներն ու շուարած ուսուշիները լուր բերին թէ ամբողջ շնչքը կը վասի :

Տղաքը , ոմանք հագուած , ոմանք չապիկով , դուրս թափեցան և հաւաքուեցան խաղարանը . անկէ սոսկումով կը դիտէին չենքին ոյրիլք : Աւսուցիները կը համրէին աշակերտները՝ որ համուլուին թէ պատկաս մէկը չի կա՞ :

Դպրոցական հին զանդակին ձանը կը խլացնէր ամբողջ

աղմուկը : Յանկարծ , լուց զանգակը : Այն ատեն բոլորը սկսան հարցնել :

— Հասրա ո՞վ է այս զանգակը զարմողը :

Իսկ տեսուչը՝ ամբողջ մորմիովը դողալով , կը նոյնէր աշակերտներուն երեսը և կը կրկնէր .

— Իսկ ո՞ւր է Եղուարդը :

Այն մէկ քանի լուսկն , երբ Եղուարդ կը քաշէր զանգակը , իրեն թուեցան ժամեր Վերջապէս , ուղեց ստուգել թէ ի՞նչ արդիւնք ունեցաւ զանգակին ձայնը . լսեցին արդեօք զայն , արթնցան : Կերեւի , անզատձառ մէկ քանի հոգի արթնցած կրլան և կու զեն իմանալ այս անսպասելի իրարանցաման պատձառը :

Եղուարդ սկսաւ վար ի՞նել պտուտակածե սանդուխէն . բայց , համակով վերջին աստիճանին՝ տեսաւ որ բոցը եկեր , մտեր է աշտարակը տանող նեղ միջանցքը , և կրակի լեզուները արդէն ագահօրէն կը լզէն հին սանդղամատերը : Ուրիշ ելք չի կար : Վաղրինան մը , լուռ ու քարացած՝ նայեցաւ կրակէ պատին , որ կը կտրէր իր փրկութեան միակ ճամբան . յետոյ նորէն ետ դարձաւ . . . և ազատուածներուն զլիուն վերև դարձնալ հնչեց հին զանգակին հզօր զօղանջը . . .

Հին աշտարակը երկար չի դիմացաւ կրակին յարձակման ու շուտով վիւտ ճարճատաձայն :

## 8

Շէնքի ձախ թեխն մէկ մասը ազատեցաւ , բայց դպրոցն ամբողջ այրեցաւ : Մարդկային զո՞չ չի կար , բայցի մէկէն . . .

Հասցէի պատահական սիսլի մը պատձառով՝ Եղուարդին մայրը չստացաւ այն նամակը , որ կը ծանուցանէր իր տղուն վանտուած լլամլը :

Եւ երբ տեսուչը կը պատմէր իր զաւկին գիւցադշնութիւնը, գժբաղդ մայրը՝ զսպեց աչքերուն մէջ լեցուող արցունքը և ամուր սեղմնլով տեսուչին ձեռքը, քաջութեամբ գուրս եկաւ, որպէս զի, այրի ու անզաւակ, միսմինակը շարունակէ կեանքի կոխւը:

Այն վարժարանէն շատ մարդիկ են եւեր, որոնց անունները փառքով յիշատակուած է. բայց, երբե՛ք, երբե՛ք, նոյն յարկին տակ չէ բարախած Եղուարդի որտէն աւելի արի սիրտ մը:



## ԱՂԱԻՆՈՒ ՎԱՆՔԸ

Լենկրիմօւրն եկաւ, հուրն ու սուրն եկաւ,  
անօրենն եկաւ, եկաւ ու եկաւ.

հաւանեց, ժողվեց մեր ազգը Հայոց,  
փարքեց ու պատեց ինչպէս վիշապ-օձ,  
կեցաւ Սեւանայ ափը հովասուն,  
այնտեղ ուր ուշիքը ու միտն Աստրծուն,  
կեցած է անխախտ, մեռնի՛մ իր զօրքին,  
Օհաննու վանքը ծովի եզերին:

Այն վանքը, Հայոց ազգին պահապան,  
միշտ աղօք կընէր ծերուկ հայր Օհան.  
միշտ աղօք կընէր իր հոգուն համար,  
իր ազգին համար, աշխարհին համար:

Եթք տեսաւ խաղաղ իր վանքին վերէն  
անօրեն մարդու աս զործն անօրեն՝

յուզուեցաւ արդար ծերունուն հոգին. ներմակ մօրուեով, ու ցուպը ձեռքին, դառնացած, դժգո՞ն մարդի ու կեանեն, աղօքը կիսատ՝ դուրս եկաւ վանեն, իշաւ Սեւանայ երեսը կապոյտ ու յրբմնչելով, միամիտ, անփո՛յր, այն վիշտ-վկտ, ծփուն ջուրերուն վրայ ցամաք ոսմերով կը բալէր անա:

Տեսաւ հրբաշը Լենկրիմօւրն ափեն, ու սասանեցաւ սիրտը սարսափեն: Կանչեց, աղաչեց իշխանը բարար.

— Ե՞տ եկուր, ըսաւ, Ե՞տ եկուր, արդա՛ր,  
Ե՞տ եկուր, ըսաւ, դո՛ւն ո՛վ Աստծու մարդ:

Ետ եկաւ մեր հայր Օհանը հանդարտ՝  
ջուրին վըրայեն, իր ցուպը ձեռքին,  
եկաւ ու կեցաւ Թարարին առջին:

— «Ի՞նչ է մուրազդ, ո՞վ սուրբ ալեւոր,  
զա՞նձ, իշխանուրին, քէ կեանք փառաւոր...»:

— Քու փառքդ ու գանձդ ինձ հարկաւոր չէ,

իմ ժողովուրդս կուզեմ ես բեզմի:

Թող տաս իմ ազգիս՝ ուզած տեղն երբայ,  
եւ ինք իր ազատ կեանին տէր դառնայ

աս լայն ու արձակ մէջը աշխարհին...»

Ըսաւ սուրբ մարդը մեծ աւազակին:

— «Ժողովո՞ւրդ կուզես... քո՛ղ ըլլայ այդպէս:

Այս վանքին չափով ժողովուրդ տամ եեզ,  
զինա՛ իմ հոգուս աղօք բրէ, ծե՛ր:»

Ըստ Լենկիմուրն ու տուաւ պատուէր՝  
որ գերի Հայոց ազգը մեկ դռնեն  
և վաներ մտնէ սուբբին ետեւն.  
ինչան ժողովուրդ մտնէ և վաներ,  
անո՞ր կը բաշխէ այնքանին կեաներ:  
  
Հրաման ըրաւ Թարարն իր զօրին  
ու ազատ բողին հայ ազգին գերին:  
Կը մտնէ գերին, կուգայ մեկ ծայրեն,  
անցեր է թիւր հարիւր հազարեն.  
չի լեցուիր սակայն հասարակ մեկ վանք...  
Թարարն է պատեր արման ու զարման:  
  
— «Թուլէ՛, կը կանչէ Թարարն իր զօրին:»  
Եւ յորձամբ կուտայ նորեն հայ գերին:  
Միշտ կերպայ գերին, կը հասնի նորեն,  
անցեր է թիւր հազար հազարեն,  
չի լեցուիր սակայն և վանքը կրկին,  
կանգ չառնէր Հայու հոսանքն ահազին:  
  
Երրորդ անգամ է կը կանչէ զօրին:  
Կուգայ ու կանցնի մեացած գերին:  
Կա՞նցնի միշտ գերին, կա՞նցնի շարեջար.  
ա՞լ մարդ չի մընաց, գընաց ինչ որ կար.  
դաստիք է սակայն վանքը տակաւին...  
Թիմուր զարհուրած կը դառնայ չորս դին.  
— «Արքո՞ւն եմ արդիօք, թէ երազ տեսայ...  
յայտնեցէ՛ ինձ զուտ, ի՞նչ երաշ է սա...:»  
Կերպան, կը տեսմեն մարդիկն իր խրկած.  
մեր հայր Օհանը՝ աղօրին կեցած,

աշերն երկնելին, մօրուն արցունենու,  
ով որ հայ ազգին մըտեր է իր մօս՝  
իր սուրբ աղօրենվ կամով Վերինի,  
փոխեր է խսկոյն, ըրեր աղաւնի,  
բաց պատուհաննեն ամեներ կրկին  
թոցուցեր իրենց լեռները անզին,  
ու մեկը չի կայ վանքին մէջ հիմակ.  
ինքն է որ չուած, կաղօք մինակ:



## ԶԷ՛, ՈՒՐԻՇ ԱՆԳԱՄ...

Գլխու ցաւէ մը կը նեղուէի, ու բժիշկին տունը գացի  
այն իրկունը: Տոքիուը գուրս ելած էր. այցելուներու  
սրահին մէջ կը սպասեմ:

Խնձմէ զատ ուրիշ մարդ չի կայ: Մեքենաբար կը թըզ-  
թառեմ, սրահին մէջտե լը, սեղանի մը վրայ դրուած պատկե-  
րազարդ թերթերն ու լրագիրները:

Յետոյ, ձանձրոյթէս, սպասուհանին քով կերթամ ու  
գուրսը կը դիտեմ: Մուխն սկսած է տիրել ու բան չերեիր:

Թիկնաթուի մը մէջ նետուելով, այդ իրիկնամուտին  
տրամութենէն բռնուած, կը մասածնմ թէ այս ժպտուն ու  
ծիծաղկոտ սենեակին մէջ ինչքան թշուառութիւններ եկած  
անցած են, ինչ համր վիշտեր, մարմինի ու մաքի ինչ անձկու-  
թիւններ: Ու հիմա, ինձի այսպէս կը թուի թէ՝ մարմնական ու  
բարոյական այդ ամէն խօթութիւններէն բան մը, անճիւթական  
ու անշօշափելի բան մը մնացած է սենեակին մէջ, մնացած է

ու այդ զուարթ կահերուն և զուարթ նկարներուն վրայ իր թախծութիւնը տարածած :

Սենեակին զուռը բացուեցաւ յանկարծ և համալ մը , հաղալով հեալով , ներս մտաւ , ու ծանր զանգուածի մը պէս թիվնաթուին մէջ ինկաւ : Գլուխր կուրծքին վրայ կախուած մնաց անշարժ , կոնակը կքած , ձեռքերը որունքներուն մէջ տեղ : Ու այդ լուսութեան մէջ . իր ծանր չնչառութեան խժըլ տուքը կը լսուէր միայն :

Դռան զանգակին ուժգուակի հնչումը՝ կը յայտնէր հիմա բժիշկին գաղուատը : Արագ քալուածք մը զուրսի տախտակաւածին վրայ . դռան մը մնծաշառաչ բացումը , և բարձր ձայնով մէկ քանի հրաժաններ :

Յետոյ , սպասաւորն եկաւ մեր զուռը բացաւ և զիս հրաւիրեց :

Համալը ոտքի ելած էր նոյն պահուն՝ դժուարութեամբ . և աղաչական նախուածքով մը ինծի դառնալով .

— Քե՛ զուրպան , աղա՛ , ճար չունիմ , թող տուր էս անցնիմ տռաչ :

Թող տուի որ անցնի , զուան սեմին մէջ սպասելով :

Սեմէն դէպի սենեակ կը սկսիմ երթեսկեկել , երբ խօսակշութեան ձայներ կը հասնին ականչիս : Դիմացի սենեակին դռան առջև , բժիշկը կեցած է նեղսիրս դէմքով , ու համալին կը հարցնէ .

— Մէծիսիէ բերե՞ր ես մէկանդ . փարասըդ չեմ նայիր , Համալը , թոթովելով՝

— էֆէնսի՛ , խինդ փարա չունիմ վրաս , խերու տէր կըլիս :

— Պօշ լաֆ մտիկ ընելու ժամանակ չունիմ , էլի գնա՛ թո՛րոս , սա մարդը ճամբէ :

Սպասաւորը մօտեցաւ մարդուն , թեէն բռնեց ու կամաց մը հրեց դէպի սանդուղին վար : Կիսաստուերին մէջ , տեսայ իր կքած ուսերուն կամարը՝ որ խոկոյն անհետացաւ , և լսեցի իր հաղին հեծկտուքը՝ որ սանդուղին իւրաքանչիւր աստիճանէն վար իջնելը կը չեշտէր :

Սպածած , կցեցր էի , երբ նոյն միջոցին բժիշկը դէպի այցելուներուն սրահը եկաւ՝ տեսնելու համար թէ ուրիշ յաճախորդ կա՞յ . տեսաւ զիս , և ժպտուն դէմքով մը՝

— Հրամիմեցէ՞ք , ըստաւ : Կեցայ քիչ մը . պատասխանել չուղեցի . յետոյ յանկարծ՝ Զէ՛ , բան մը չունիմ , զլխուս ցաւն անցաւ , ա՛ պէտք չունիմ , ուրիշ անգամ : Բսի , և սանդուղներէն վար իջայ հապճեպով :



## ՀԻՆ ՕՐԼՆՈՒԹԻՒՆ

Կանաչ , վիրխարի լնկուզենուն տակ ,  
իրենց հասակի կարգով ծալպատակ ,  
միասին բազմած , մեկ շրջան կազմած ,  
ենջ կընեին ու կուրախանային

մեր հակայ պապերն ու մեր հայրերը՝  
զիւղի տերերը :


Մենք առոյգ ու ծիր  
զեղուկ մանուկներ՝ երեք դասընկեր ,

անոնց առջեւը զլխաբաց կանգնած,  
ձեռքերնիս խոնարհ կուրծքերնուս դրբած,  
անոնց սեղանին մեր ձայնով մատաղ՝  
մենք կրսէինք տաղ:

Եթք զըուարքաձայն մեր երգը լրռեց,  
մըուայլ քամատան պէխսէրն ոլորեց,  
անօր հետ առին լիմ բաժակները  
բոլոր մեծերը  
ու մեզ օրինեցին. — «Ամանուկնե՛ր, ապրի՛ք,  
բայց մեզ պէս չապրի՛ք:»

Անցաւ ժամանակ, անօնք ալ անցան.  
զըուարք երգերը վրշտալի դարձան:  
Եւ ևս մեր օրը ալ տասուած ատեն՝  
կը լիշեմ միշտ թէ՝ մեր հայրերն ամեն  
ինչո՞ւ օրինելին  
կրսէին մեզի. — «Ամանուկնե՛ր, ապրի՛ք,  
բայց մեզ պէս չապրի՛ք . . . :»

Խաղաղութիւն ձեզ, մե՛ր անբախտ պապեր.  
ձեզ տանջող ցաւը մեզ ալ է պատեր.  
այժմ տիսրուրեան թէ ֆէթի ժամուն՝  
մենք ալ, օրինելով, մեր զաւակներուն  
ձեր խօսքը կրսէնք. — Մանուկնե՛ր, ապրի՛ք,  
բայց մեզ պէս չապրի՛ք:



Հայուն նույն մէջ

## ԻՆՉՊԵՍ ՀՆԱՐՈՒԵՑԱԽ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հին ասենները գրքերը կը գրէին ձեռքով՝ այս պատճառով՝ չատ հաղուազիւտ էին տններ և շատ ալ տուղ՝ Երեւանի աղջիկը թէ ի՞նչ դաւար բան էր՝ որ մէկը նստէր և ամիսներով, շատ անգամ տարիներով մէկ զիրք մր լնդօրինակէր:

Գրքերուն քչութեան պատճառով՝ ուսումն ալ կը զբժռարանար և ամէն տպայ չէր կրնար կրթութիւն տոնել:

Եթաց ահա, 1400 թուականներուն, Գերմանիոյ Մայէնս քաղաքին մէջ ծնաւ Յովհաննելս

Կիւթէմակէրկ: Դիռ փոքր և զած ատենն ալ շատ աշքարաց, հետաքրքիր և աշխատասէր տղայ մըն էր:

Յետոյ, երբ չափահաս եղաւ՝ ճամբարդեց զանազան երկիրներ և սորվեցաւ շատ մը արհեաններ, զիտէր ոսկերչութիւն, հնարեր եր թանկապին քարերը յզկելու միջոց, կը շինէր գեղեցիկ հայելիներ և կը ձուլէր մեաազէ ըրջանակներ:

Ազնաւական սերունդէ էր, բաց զինքը զրկեր էին հօգենական հարստութենէ, և մեացեր էր աղքատ, իր ասպրուսոը կը հանէր իր զիտութեամբ ու ճարտար ձեռքերովը:

Ժաղովարդին մէջ ապրելով և ժողովուրդի մարդոց հնա շփուկավ՝ անսէր էր թէ ի՞նչքան տղէտ ևն անսնք, ի՞նչքան կոշտ ու կոպիտ: Ի՞նչու: Որովհետեւ զրքերը թանկապին էին,



ամէն մարդու ձեռք չէին անցնիր և ուսումը միայն հարուստ  
տղաք կրնալին առնել :

Կիւթէմպէրկ կը մտածէր թէ ի՞նչպէս ընէ որ զրքերը շատ-  
նան, ի՞նչպէս բնէ որ մէկ գրքէն հաղարաւոր օրինակներ կարելի  
ըլլայ ձեռք բերել՝ դիւրութիւնմբ, առանց ձեռքով ընդօրինա-  
կելու: Մէկ խօսքով, ի՞նչպէս բնէ որ սահզծուի տպագրութիւնը:

\* \* \*



Կիւթէմպէրկ, միա  
մինակ, փակուած իր  
սկնեակը, զիչեր ցորեկ  
կաչխատէր ահա՝ որ հնար  
մը գտնէ :

Սա՛պէս մտածեց ա-  
նիկա: «Իթէ ես փայտէ  
կամ մետաղէ շարժական  
գրեր աւնենամ, և այլ  
բնեն զիմի ոմէն մէկ տա-  
ռէն հարիւրաւորներ, ես  
դանոնք իրարու քով բե-  
րելով՝ ու զած բառերս կը  
զրեմ, յետոյ, այդ բառե-  
րուն վրայ մելան կը քսեմ,  
և անոնց վրայ թուղթը  
սեղմելով՝ կունենամ ըն-  
դօրինակութիւնը: մէկ  
անգամ չարուած բառէն  
կլնամ, այսպէս, հարիւրա-  
ւոր, հաղարաւոր օրինակ-  
ներ հանել . . .»

Մտածեց և սկսաւ իրարու հաւասար չափով փայտէ քա-  
ռակուսի ձողիկներ չիներ քսանը չորս հատ, լատինական այ-  
բուբենի զրերուն թուրվը: Այդ ամէն մէկ ձողիկին գլուխը  
գիր մը փորագրեց՝ բարձրաքանդակ և գլխիվար ձեռվ, ծակեց  
ձողիկներուն տակը, շարեց դանոնք քով քովիւ, այբրենական  
կարգով, յետոյ ծակերուն մէջն թել մը անցուց և իրարու  
հետ ամուր մը կապեց: Վերջը, ձողիկներուն գլուխը մելանի  
պէս սև հեղուկի մը մէջ թաթիւնց, առաւ կտոր մը մագա-  
ղաթ, դրաւ անոնց վրայ և ամբողջ ուժովը սեղմեց:

Ի՞նչ տեսնայ որ հաւնիս: Այրուբենը ահա դրոշմուեր  
է մագաղաթին վրայ: Ուրախութենէն սրախն ծաղի՛ կը պատ-  
ռած, կիւթէմպէրկ առաւ ուրիշ մագաղաթի կասր մը և դարձ-  
եալ սեղմեց: ահա անոր վրայ ալ դրոշմուեցան նոյն գրերը.  
երրորդ, չորրորդ, հինգերորդ անգամ, միշտ նոյնը, միշտ  
նոր յնը:

Հիացած, քակեց ձողիկները և այս անգամ բառ մը շա-  
րեց անոնցմով: դրոշմեց մագաղաթին վրայ, և ահա տպուե-  
ցաւ բա՛ռն ալ . . .

Կիւթէմպէրկ երջանի՛կ որ իրականացեր էր  
տարիներու իր փափաքը, տարիներու իր անվերջ, անվերջ  
աշխատանքը: Պիտի կրնար դիւրութեամբ մէկ զրքէն հաղա-  
րաւոր օրինակներ տպագրել և տարածել ժողովուրդին մէջ:

Որքա՞ն դիւրին բան է եղեր տպագրութիւնը, բայց ի՞նչ-  
պէս մինչեւ հիմա չէ կրցեր խորչիլ ու գտնել:

\* \* \*

Անգամ մը միջոցը գանելչ եաք, կիւթէմպէրկ մտածեց  
թէ՝ փայտէն շինուած զրերը լսու չեն, շուտ կը ծոխն, շատ

չեն դիմանար և կը կոտրախն : Պէտք էր ուրիշ բանով մը մի-  
նել՝ որ դիմացկուն և աւելի նպաստակայարմար ըլլար :

Խորհեցաւ որ մետաղէ ձուլէ գրերը, և շննեց արճիմէ :



Պատրաստեց կաղապարներ՝ գրերը մէջը  
շարելու համար, որպէսզի բառեր կաղ-  
մուխն, բառերէն առղեր և տողերէն երես-  
ներ : Եինեց տախտակներ ու շրջանակներ՝  
որպէսզի շարուածքը ամուր սեղմուի ու  
կապուի, և գրերը մէջէն չժափին : Հնար  
գտաւ շարուածքին մէջ սովորած սիսակնե-  
րը ուղղելու : Վերջապէս, զանազան գոյ-  
նով և շուտ չչորցող մեկաններ գտաւ, հնարեց կակուղ բար-  
ձեր՝ որոնցմով մեկանը հաւասար կերպով կը քոէր գրերուն  
վլայ :

Հիմա կը մնար գտնել այնպիսի մեքենայ մը, որ շար-  
ուածքին վրայ երբ թուղթը դնէ ու սեղմէ՝ հաւասարապէս  
ճնշէ և չպատռէ թուղթը : Կը մնար գտնել մասմուլը :

Բայց, մինչեւ հիմա ի՞նչ նեղութիւններ էր քաշեր, ի՞նչ  
թշուառութիւն էր կրեր, որքա՞ն պարտքեր էր ըրեր . ձեռքն  
անցած դրամը պառկեցուցեր էր իր գիւտին :

Վերջապէս, գտաւ ագահ հարուստ մը և անոր հասկցուց  
իր գիւտին կարեորութիւնը : Հարուստը իմացաւ որ մեծ շահ  
կայ այս գործին մէջ, դրամ տուաւ՝ որպէսզի կիւթէմպերկ  
կատարելագործէ իր զրերը, գործիքները և մամուլը .— բայց,  
պայման դրաւ որ շահին մեծ մասը ի՞նք պիտի առնէ :

Կիւթէմպերկ հաւասնեցաւ և գործի պկասւ՝ ուրիշ ճար-  
ապար արհեստաւորի մը հետ : Վերջապէս, 1452 թուականին :

տպագրեց Առառուածաշունչը : Անկէ ետք ալ, սկսաւ ուրիշ  
գրքեր տպագրել ու ծախել :

Գանուած էր տպագրութիւնը : Կիւթէմպերկ մարդկու-  
թեան ըրած էր անգին ու անփոխարինելի բարիք մը :

Գիտէ՞ք որ հայերէն առաջին գիրքը տպագրուած է  
1512 ին Վենետիկի մէջ, Յակով անունով Հայու մը կողմէ .  
այդ գրքին անունն է Պարզատօմար :



## ՀՈՂԱԾԻՆԸ



Մեռաւ ծեր արքան . արեւը բաշխեց  
մեկ հատիկ որդուն : Կինը անոր տեղ  
գահը բարձրացաւ, երկրին իշխեց:  
Զաւակը մեծցաւ անփիշտ ու անմեղ,  
անհոգ ու անփոյք պերն պալատին մէջ:  
Բայց երբ որ եղաւ տասը տարեկան ,  
լացաւ մանուկը, բաւ իր մօրկան .

— Ո՞ւր և հայրիկս, ես հայրիկ չունի՞մ:  
— Հայրիկդ, որդի՞ս, վաղուց մեռեր ե:  
— Հապա, ի՞մ մայրիկ, մեռնին ի՞նչ բան է:  
— Մեռաւ հայրիկդ, տարին զերեզման:  
— Տարին զերեզման, ալ ետ չի գա՞ր ան:  
— Ո՞չ, ո՞չ, ալ երեխ, երբե՞ք ետ չի գար.  
մենք ալ կը մեռնին, կերպան հողին տակ .  
բոլորիս վերջը մանեն է, ի՞մ որդեակ:  
— Զի՞ս ալ կը բադեն, չիմ ուզեր, մայրիկ,

շեմ ուզեր մեռնիլ, հողին տակ քաղուիլ.  
Ես կելամ, կերրամ այնպէս աշխարհի մը՝  
ուր մեռնիլ չըլլայ, մարդը չմեռնի.  
ու Ես շեմ մեռնիր, գետնին տակ քաղուիր,  
Ես չեմ ունենար հող ու զերեզման . . .

Ու բողուց գահը, ու բողուց քազը,  
քագուիի մայրն ու հալլենի երկիր,  
վեր ելաւ, գնաց հեռու, տարագիր:

## 2

Ու կերրար . . . Գնաց . . . գնաց. ու գնաց.  
տարիներն անցան գետի պէս արագ.  
աշխարհի ոսկ քաշեց, տեղ մը չի մնաց  
ուր Ռուսուն անցած չըլլար ու տեսած:  
Ամէն տեղ մարդն էր մահուան ենթակայ,  
մօք ծնածը մայր-հողին կերրար:

Թողուց ու անցաւ մարդ, բընակութիւն,  
կտրեց լեռ ու ձոր, հովիս, անապատ,  
տեսաւ աւագներ անեզր ու անհուն,  
ուր ոչ ծառ, բռչուն, ո՞չ շենիի, ո՞չ պատ:

Ու կերրար . . . Գնաց . . . Տեսաւ եղջերուն  
չոքեր է գետնին՝ գլուխը կախած,  
եղջիւրին ծայրը երկնի ուղղընաւած:  
— Բարեւ ժեզ, Ռուսուն, եղջերուն լսաւ,  
ո՞ւրիէ կուգաս դուն, այսպէս ո՞ւր կերրաս:  
— Ել չեօիկ եղնիկ, լսաւ Ռուսումը,  
Ես կը փնտում այնպէս երկիր մը՝



ուր որ մահ չըլլայ, մարդը չմեռնի,  
Ես անման մնամ, հողը չպառկիմ:  
— Ել ճահիլ ճիւան, եղջերուն լսաւ,  
չի կայ այնպէս անել՝ ուր որ մահ չըլլայ.  
ամէն տեղ մարդն է մահուան ենթակայ,  
ով որ ծներ է, պէտք է որ մեռնի.  
Ես ալ շատ վաղուց մահուան կրսպասեմ,  
կարօս եմ մահուան, բայց մահը չի կայ.  
Երբ իմ եղջիւրներս հասնին երկինքին՝  
հո՞ր վերջ կը տրուի իմ տաղտուկ կեանքին:  
Կեցի՛ր, հո՞ս կեցիր, մահը ուշ կուզայ.  
մահը ուշ կու գայ, կեցի՛ր, ծերացի՛ր,  
կեցի՛ր, ծերացի՛ր — կեանքեն ձանձրացիր:  
— Մեռնիլ ուզէի՝ Ես չեմ բողեր  
քագուիի մայրս, պատիւ, զան ու քազ.  
Ես ապրիլ կուզեմ անվերջ, շարունակ . . .  
լսաւ Ռուսումը, ու անցաւ, գնաց:

## 3

Ու կերար... Գնաց... հեռու ու հեռու,  
վերն արեւը տափ, և անենի անապատ,  
առջեւը լեռներ բարձր ու անարկու,  
լեռներ բարձրուս ու մշուշապատ.  
վերն նայողը տակը չի տեսներ,  
վարն անդունդ խորունկ ու մուր խորխորատ:  
Բարձրացաւ վերը, տէսաւ գազարին  
արծիւն է նատեր մրոայ ու անյոյս.  
արծիւն է նատեր ու իր կտուցով  
կը զարնէ բարին, կը փորէ ժայռը:



— Ե՛ հզօր արծիւ, քառ Ռոստոմը,  
ես կը փնտունմ այնպիսի տեղ մը,  
ուր մեռնի շըլլայ, մարդը չմեռնի,  
ես անմահ մնամ, հողը չմտնեմ...»  
Մտմուաց իհշ մը հսկայ արծիւը.

— Ե՛ նահիլ-նիւան, քառ Ռոստոմին,  
ով որ կը տեսնէ լոյսը արնեկն՝  
պիտի մեռնի ան, վերջը հող դառնայ.  
ես որ արծիւն եմ խիզախ ու հսկայ,  
ես ալ եմ նոյնպէս մահուան ենթակայ.  
բայց զիտե՞ս որ ե՛րք պէսէ է ես մեռնիմ.  
ես պիտի մեռնիմ՝ երբ որ լեցընեմ  
այս անդունդն անհրաժե՞ որ աչք չի կտրեր.  
ու ես լեցնեմ, ան ալ ի՞նչ բանով,  
այն փշուր-փշո՞ւր մանր բարերով  
որ կտուցովս պիտի փրցնեմ  
այս երկարի պէս ամուր ժայրերին.  
եւ փրցուցածս, ըսեմ, օրական՝  
մեկ ընկոյզի չափ բար պէսէ է ըլլայ:  
Հո՞ս կեցիր, Ռոստոմ, մանր ուշ կու գայ.  
մանր ուշ կու գայ, կեցի՛ր, ծերացի՛ր.  
կեցի՛ր, ծերացի՛ր — կեանէն ձանձրացի՛ր:  
— Մեռնի ուզեկի՝ ես չի բոկեր  
բագումի մայրս, պատիւ, գան ու բագ.  
ես ապրիլ կուզեմ անվերջ, զարունակ,  
քառ Ռոստոմը, ելաւ ու զնաց:

## 4

Ու կերար... Գնաց... Տաս տարին անցաւ,  
ալ տեղ չի բողուց ուր ոսք չխաշէր.  
զամսէր հատաւ, հողնեն դուրս ելաւ,  
զընաց ու հասաւ ծովի մը խաղաղ:  
Նովին եր բափանցիկ ու միապարաղ,  
փռուեր, պառկեր եր հեռու ափունեով,

մեղմիկ ծփանքով, փրփուր ալիքով  
կերրար ու կու զար օրօր ու ջորոր.  
Քայց հեռուն, հեռուն, երկինքը ուր որ  
ջուրերուն վրայ կապեր եր կամար,  
կապոյտ հովտին մէջ, լրւեղեն, պայծառ,  
բան մը կը լոդար ու կը շալշալար:  
Ծովն ահա պատեց թերեւ մըշուշ մը,  
ափին մօսեցաւ պալատ մը զմբուխատ  
ու այդ պալատեն լսեց Ռոստոմը.  
— Ե՞նչ կը փնտռես, ե՞յ մարդ հողածին:  
— Հապա դո՞ւն ո՞վ ես, ըստ՝ ի՞նս քէ նին.  
Ես կը փնտռեմ այն աշխարհին անմահ՝  
ուր ո՞չ գերեզման եւ ոչ ալ մահ կայ:  
— Ասէ ուրեմն, ո՞վ մարդու զաւոկ,  
կեանքը իմ մէջս է, մահը ոսքիս տակ:  
Ստեղծագործման առաջին օրէն  
համար հազարներ եկեր, զացեր են,  
Քայց ես կը մնամ միշտ քարմ ու կանաչ,  
միշտ քարմ ու կանաչ, մահուան աննանաչ:  
Գիտե՞ս քէ ո՞վ եմ. Գեղեցկուրինն եմ,  
միշտ զուարքերս ու միշտ ժայռադէմ...  
կեանքը իմ մէջս է, մահը ոսքիս տակ.  
դուն հող ես, ե՞յ մարդ, հողին պարտական,  
Քայց որքան մընաս հովս՝ դուն այնքան  
չես տեսներ մահուան երեսը ցամաք.  
ինձի հետ դուն ալ կը դառնաս անմահ,  
չես քաշեր ախ-վախ, չես ունենար ահ...  
Ապրեցաւ Ռոստոմն այն տեղ նոր կեանքով,

ու կեանքն եր երազ՝ մանեն ապահով,  
օրերն հեքիար, ժամերը ոսկի,  
աշխարհին՝ երկինն, ինք արեւ, արփի:  
Հազար ու հազար անցան տարիներ,  
ու հազար տարին մէկ ակրնքարը եր:  
Քայց ե՞րբ յագեճալ կայ հոգւոյն համար,  
հեղ մոր կարօտցաւ հանգիստ չի կենար:  
Ռոստոմն արքուն շըբեղ երազին  
ու Գեղեցկուրեան ըստ տրտմօրէն.  
— Կարօտ մը ունիմ, սրտամաշ կարօտ,  
որ կը տանջէ զիս գիշեր, առաւու...  
Ես կարօտցեր եմ մայրս անուշիկ,  
ազգականներս, հողս ու հայրենիք.  
ծննդավայրիս օդին ու ջրին.  
ծառին ու ծաղկին, ցողին ու քարին  
կարօտն ունիմ ես, կարօտը լոռին.  
որ կը քաշէ զիս. քո՞ղ տուր որ երքամ՝  
տեսնեմ ես զանոնք ու դարձեալ ետ զամ:  
— Ես լաւ զիտէի ուժը մայր-հողին,  
չէ՞ որ օրէնք է եւ օրէնք շատ հին,  
քէ՝ մարդն է մահուան ու մահը՝ մարդուն.  
հիմա եկեր ես ու կը փախչիս դուն.  
հո՞ղը կը կանչէ, կարօտն է մահուան  
որ ժեզ կը քաշէ դեպի գերեզման.  
զընա՝ ու մեռիր պապերուդ նրման  
հու մայր-հողիդ մէջ հանգիստ ու խաղաղ:  
Քայց կըսէմ՝ հազար տարի է ուրախ,  
որ դուն ապրեցար պալատն այս զըուարը:

— Հազար տարի՞ է . թէ մեկ ակնբարք :

— Կերպաս, իշխանաս: Ես երկու ծաղիկ  
կու տամ ենք նուեր — ալ ու սպիտակ.  
ապրիլ որ ուզես — ալեն նու հաշէ,  
մեռնիլ որ ուզես — ներմակն նոտոտէ.  
Է, երբաս բարով, ենք բարի՛ նամբայ...

## 5

Կարօսն իր սրտին, կարօսն իր մօրը,  
թէւ առած կու գայ դարիս Ռոստոմք.  
սարեր ու ձորեր, անտառ, անապատ  
կը կտրէ, կանցնի ոտին տակ հատ հատ.  
կու գայ կը հասնի արծիւին լեռ :

Վայ, ո՞ւր է անդունդ, ո՞ւր է խորխորատ.  
չի կայ, լեցուած է . լեցուած վարեն վեր,  
ու ժայռին վրայ արծիւն է նստեր,  
արծիւն է նստեր՝ լուռ ու անմոռնչ,  
թէւերը բափած, անշարժ ու անշուն:  
Ռոստոմք դպաւ հսկայ արծիւին,  
ու արծիւն խսկոյն շրջեցաւ անդին,  
չոր փոշի դարձաւ, բափեցաւ գետին :

Եւ կու գար ... Եկաւ ... Մէջսելլը նամբուն՝  
իր դեմք երաւ ծանօթ եղջերուն.  
Երկնի եր հասած եղջիւթերը սուր,  
ու զանկն ալ եղեր եր փշուր-փշուր :

Թախիծը պատեց նամբորդ Ռոստոմք,  
կայլեր իր սիրուր սաստիկ կարօսը.  
օր առաջ կուզեր որ տեսնէ մայրը,

կուզեր որ տեսնէ ծընթեղավայրք :  
Ահա հայրենին հասեր է արագ.  
նոյն հորիզոնն ու դաշտ, նոյն գիւղն ու հաղափ,  
առաջուան պէս ջրառատ գետե՛ր ...  
Քայց մարդն եր փոխուած, հագուստը ան չէր,  
ուրիշ նիստ ու կաց, եւ ուրիշ բարքառ,  
լեզուն անձանօր ու փեր օտար ...  
Եւ կուզար ... Եկաւ ... Եկաւ հետահեն.  
ահա ժայռերը, նոյն ու հարն ամեն՝  
որոնք կը հանցնայ մանուկ օրերեն.  
Քայց ո՞ւր է, ո՞ւր է մօրը հաղափը,  
ո՞ւր է հայրենի շենդ պալատը  
ու այդ պալատին տէրը բագուիի:  
որուն բով երրայ ու գիրկը բնկիի,  
կարօտը առնէ ու այնպէս ապրի:  
Շուրջը աւերակ մամուռը դեղին՝  
երեսն է ծածկեր բարին ու հողին.  
շին չէ հաղափը, հաղափն այն հսկայ.  
թէ կ'ըք է խանդուեր, — զիտցող մը չի կայ:  
վլատակներուն մեկ բարին վրայ  
նստեր է ծեր միք ու կը մատուայ:  
— Լսէ, էյ ծերուկ, Ռոստոմք ըստ,  
ե՞րք է աւերաւեր այս հաղափը շին,  
ո՞ւր է բագուիին, պալատն նոյսաշեն.  
բաէ՛, զո՞ւտ ըսէ, ի՞նչ է պատահեր.  
պալատին տէրը, բագուիին՝ մայրս եր.  
դուն լաւ կը լիշես թէ ի՞նչպէս մեկ օր,  
բողուցի տուն-տեղ, մայրս ալեւոր,

Ելայ ու փախայ մահեն ոխերիմ,  
որ անման ըլլամ, ապրիմ ու ապրիմ,  
երբեք չմեռնիմ, հողը չքաղուիմ:  
— Ինչո՞ր կը խօսիս, եյ դարիս աղբար,  
իմ միտսի երբեք այլպէս բան չի գար.  
ու բածներդ շատ հին բաներ են,  
դարեր են անցեր անոնց վրայէն...:  
Մանուկ ատենս հօրմէս եմ լսեր,  
հիշու է որ այստեղ շատ հին ատեններ,  
մեծ բազուիի մը ապրեր է եղեր.  
անոր մեկ հաստիկ աչքի լոյս որդին  
բողեր է մայրը, գացեր, կորսուեր.  
Եղած բան է աս, բայց շատ հին, շատ հին...:  
— Ալ ինչո՞ւ ապրիմ ու կարօտ բաշիմ...  
արեւն իմ աչքս՝ խաւար, բախսադէմ,  
աշխարհն է օտար, խկ ես՝ ո՞րք անտէր:  
իմ մայրս աստեղ մահով է մեռեր,  
ու ինձի կրսէ «եկո՛ւր իմ մօսս».  
երբամ ու հողեն առնել կարօտս...:  
Ռոստոմը բաւա ու հանց բովին  
ճերմակ ծաղիկը՝ ալին փոխարէն,  
եւ հոսոտեց զայն, ու ինկաւ-մեռաւ:  
Ծերուկն է դոլդոջ իր տեղէն ելաւ,  
գետինը փորեց, բացաւ գերեզման,  
Ռոստոմը քաղեց, հող լեցուց վրան:



Շահոցին առջև, յանկարծ, տափարակ տեղ մը կը բացուի,

մեծ դաշտ մը • չորս կողմը լեռներով պատած՝ աջ ու ձախ սե կերեւնան, և քանի առաջանայ մարդ՝ ամպ ու մառախուղ կը քաշուին, կը պարզուին, ու այս ատեն, կիմանասթէ առջեւդ այնպէս քաղաք մը կը բացուի, որ համար-հազար բնակիչ ունի:

Մարիդ մէջ կրսես թէ աս տեսածդ մեծ, զօրեղ թագաւորի մը մայրաքաղաքն ըլլալու է: Հոս ոսկին ու արծաթը աղբին հնու պէտք է խառն ինկած ըլլան. հոս պէտք է օրը հարիւր քարուան ներս մանէ, ու հարիւր ալ գուրս գայ:

Բայց, անա կը աեւնես որ, ցորեկը, փոշին ու մառախուղը աչքդ կը բռնէ, գիշերն ալ՝ մուժն ու խաւարը կը խարէ քեղ. ինս ու ճինս, մարդ ու մանամուն չերեւնար, միայն, գիշակեր ագռաւները սե կը զարնեն աչքիդ:

Մարդ չի կայ քովդ որ բան մը հարցնես: Մտածման մէջ ինկած, տեսածդ հարազ կը կարծես. որ յանկարծ գլուխդ վեր չե՛մ վերցներ, ա՛խ, սիրելի՛ հայազգի, սիրադ դող կիյնայ, ծոնկերդ կը թունան, ու քեզի այնպէս կուգայ թէ վիշապ մը, կամ հրոսակ մը՝ ճիշտ այդ ժաման, ներս է մտեր, և բոլոր բնակիչները կա՛մ կուլ է տուեր, կա՛մ սուրի քաշեր ու գերի է տարիեր:

Կուզիս որ աշքդ գոցես, ու ես դառնաս:  
Ախ, չէ՛, չէ՛. ես մի՛ դառնար, ծուխն այս տեղէն հազար տարիէն աւելի է որ կտրեր է. կեյի՛ր, մի՛ վախնար. անշունչ քարերն ու եկեղեցիները մարդակեր չեն:



Աւքու բաց սրբատ եղի՛ր, ու զիտուդ վայ տուր:

Այս սրբատաշ տաճարները, ոյս անագին բերդը, այս քարերը՝ քեզի լրանն թէ, դոսող Անին է առ, քու թագաւորները հզօր մոյր քաղաքը, ա՛յնքան իր հարատութիւն ու փառքովը ճախացիր ու փառթամացիր էր անիկու, որ հովհան եկեղեցի կը հներ, խաչնաբածը տրծաթէ պայտով ու կանաչ կօշիկներով կը պատմէ, մուրացկանն անգամ հացի սեղ շաքար, մանր դրամի տեղ՝ արծաթ ու սոկի կը պահանջէր . . . իբր թէ ա՛յնքան էին Աստուած մոռցեր, որ, եկեղեցին մէջ է կարծ վարդապետին առջև բարձր զրակալ կը դնէին: Երկաւ բահասակ եսլիսկոսունին առջև՝ դած զրակալ: որպէս զի կամ իյնան անոնք, կամ ծուխն ու ծունդի զան, և կամ գիրքը չտհանեն և իրենք ծիծաղին, զուարձանան Աստծոյ տաճարին մէջ :

Բայց, Յալհան Երդնիս ցին կատակ չը վերցնիր, բերանն է քայլաւ ու անիծեց: երկիրը ճաթեցաւ, տակն ու վրայ եղաւ, ժողովութել ցրուեցաւ, ո՞րը Դրիմ, ո՞րը Լեհաստան:

Մնացին այս անշունչ քարերը ցից-ցից, մնացին հազար եկեղեցին հինգը միայն չէն:

Տաճարներ, պալատներ, գանձ, հարատութիւն՝ դարձան անէծքի բաժին: հողը մտաւ Հայոց ազգին մնացած փառքն աղ, Հիմա զող ու աւազակ են մէջը բոյն զրեր. Աստուած անոնց բանը կը յաջողէ, անոնք գեանին աակը չեն անցեր. բայց Աստուած իբր թէ իր գութը այնքան պակսեցուց Հայերէն՝ որ ա՛յնքան անմեղ հոգիներ, ա՛յնքան միլիոնաւոր մարդիկ, մէկ ժամուար մէջ, չոչից մէկ սեւազլիսի խօսքով, քանդեց Հայոց տունը, խեց փառքն իր ձեռքէն, որ այսպէս թշուառ ու թափառական մնայ աշխարհիս երեսը:



## ԱՐԿԱՅԾ ՃՐԱԳ

Յաղբանակի գիշերն է այս տօնական.

հա՛րս, եղ լեցուր նըրագին :

Պիտի դառնայ կոհիւն տրդաս յաղբական.  
հա՛րս, բիբը ա՛ռ պատրոյգին:

Սալլ մը կեցաւ դռան առջեւ, նորին բով.

հա՛րս, վառե՛ լոյսը նըրագին :

Տրդաս կուգայ նակատն նըրպարտ դափնիով.  
հա՛րս, բե՛ր նըրագը շեմին :

Բայց... սալլին վրայ արի՞ւն եւ սուզ բեռցեր են...  
հա՛րս, նըրագդ ասդի՞ն երկարէ:

Հերեւ տրդաս հոն զարնուած է սրբան.  
ա՛յս, հա՛րս, նըրագդ մարէ...



## ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿԸ

### 1

Մուրացկան Յովհաննէսը վճռեց տուն դառնալ : «Տուն» կը կոչէր այս քարէ նստարանը՝ որ կը գանուի մեծ քաղաքին մէկ հեռաւոր հրապարակին վրայ : Անոր վրայ էր որ ամբողջ ամիսէ մը ի վեր կը քնանար , զլիսուն վերև ունենալով կաղնիի մը սաղարթախիտ ծիւղերը՝ իրրե վերմակ :

Դեռ տարի մը առաջ , գործաւոր էր ինք . բայց ահա անգործ ինկաւ , վրայ հասաւ իր ծանր հիւանդութիւնը՝ աղեթավութիւնը , և հարկադրուեցաւ դառնալ թափառաշընիկ , մուրացկան :

Կը քալէ հիմա դէպի «տուն» : Շատ յոզնած կերեւի Քանան վարայ , միայն քսան վաշ’րայ անցած է ձեռքը՝ ամբողջ օրուան մէջ , ան ալ օտար դրամ :

— Երկու տամնոց , այս երկու տամնոց՝ որ չեն անցնիր . . . ու ան ալ ո՞վ տայ . . . միլիոնատէ՛ր մը . . .

Բայց , աւելի մեծ ցաւը հոն էր որ դեռ չառ պիտի քաւը՝ մինչեւ իր «տուն» հասնելու համար , հոն էր որ կինար հանգչելու տեղ մը գտնել : Ոստիկանները կը ճանչնային վլնք , կը խղճային և կը ձգէին որ քնանայ այդ քարէ նստարանին վրայ . . .

— Գետինն անցնի այսպէս օրը . . . մըթմըթաց մուրացկանը , երեք շաբաթ է այսօրուան պէս օր չեմ տեսեր . . . չէ՛ , գործերը ալէկ չեն երթար . . .

### 2

Կը քալէր , յուսալով որ կը պատահի բարեգութ մարդու մը կամ առատաձեռն զինովի մը , որ իրեն երկու տաս-

նոց կուտայ , երկու շիտակի տամնոց և իր վորը կը կշտացնէ : — Երկու տամնոց . . . քաւական հարստութիւն է . . . կը- մէր , և յամրաքայլ առաջ կերթար :

Ոտքերը սաստիկ ծանրացած կը զգար . տե՛ս որ՝ իր գար- շելի հիւանդութիւնն աղ այսօր չատ կը նեղէր զինք :

Քաղեց քառորդ ժամ մըն ալ : Բայց ահա , յանկարծ , ոտքը կակուղ բանի մը կը դպնայ . առաջ՝ կարծեց թէ ցիւ է . . . սակայն , յևսոյ , մտածեց թէ չըլլայ որ ուտելիք բան մըն է . իրաւ , քիչ անգամ գետինը ուտելիք գտած էր , բայց , է՛հ , աշխարհն էր , չեղած բան չի կար . . .

— Հեղ մը նայելու է . . . ըստ , և ծոկցաւ որ վերցնէ ոտքին տակ ինկած առարկան :

— Զէ՛ , ուտելու բան չէ աս . . . այսօր բաղդ չունիմ . . . կրկնեց ծերունին տիպութեամբ :

Մօսեցաւ լաստերին , որ տեսնէ թէ ի՞նչ է գտածը : — Թո՛ւ , գետինն անցնիս , ըստ բարձրաձայն . փողոցը նեսելիք բա՞ն . . .

Գանուած իրը արծաթէ անկիւններով քսակ մըն էր : Բացաւ և մէջը նայեցաւ . քսակին մէկ բաժնին մէջ կային մօտ հինգ հարիւր ոսկիի դրամաթղթեր :

— Առ քեզի դիսուած . . . առ քեզի դիսուած . . . ի՞նչ- պէ՞ս մտածես թէ — ըստ , զլուխը շարժելով — աշխարհն մէջ կապրին այնպիսի մարդիկ , որ իրենց գրպանն ունին այս- պիսի քսակներ . . . վիրաւորական չէ աս :

Նայեցաւ քսակին երկրորդ բաժնինը . բան չիկար , ո՛չ այ- ցեսում , ո՛չ նամակ և ոչ ալ լուսանկար՝ որ ցոյց տար թէ ո՞վ էր անոր տէրը :

Աղքատը փակեց քսակլը :

— Առ քեզի վիրաւորանք, — ըստ ինչնիրեն, ա՛ս էր պակաս : Հիմա, պէտք է տանիլ ոստիկանապետին . և ասոր համար ալ, ահադին շրջան մը կատարել, որպէսզի ոստիկանատուն համնիս և իրենց յայտնես թէ գտեր ևս այս քսակը : Իսկ ես այսքան յոգնած եմ . . . Այս', իրա՛ւ որ ձախորդ օր է այսօրը :

## 3

Փողոցը դատարկ էր . ո՛չ մէկ անցորդ, ոչ մէկ ոստիկան : Մուրացկանը ետ դարձաւ ու գնաց ոստիկանատուն :

Ոստիկանները, տեսնելով աղքատը՝ ոտքէն մինչեւ զլուխը ցնցոտիներով ծածկուած, կարծեցին թէ սինկքոր աւաղաւկին մէկն է : Բայց, մարդն ուզեց տեսնել ոստիկանապետը . զինք առաջնորդեցին անոր քոյ :

— Պարո՞ն ոստիկանապետ — ըստ մուրացկանը՝ բարեկով . բա՞ն մը բերած եմ ձեզի, որ փողոցէն դտայ :

— Ի՞նչ է նայինք, — հարցուց ոստիկանապետ :

— Ա՞սա՛, պարո՞ն ոստիկանապետ : — պատասխանեց մուրացկանը, երկնյանելով քսակը :

— Այլպէս . . . կերեկի թէ քսակին մէջ բան մը չի կայ . . .

— Ասուգեցէ՛ք, պարո՞ն ոստիկանապետ :

Ոստիկանապետը բացաւ քսակը, տեսաւ զբամը և համբեց . . . : Զարմանքէն՝ աչքերը տարօրինակ տեսք մը առին :

— Բայց, բայց . . . չէ՞ որ հինգ հարիւր ոսկի կաց այստեղ . . . չէ՞ որ գումար մըն է ասիկա . . . գումար մը . . . ահազին գումար . . . ըստ ոստիկանապետը :

Մուրացկան Յովհաննէս կանգնած էր, առաջուան պէս, հանդարաս :

— Այս', — պատասխանեց անիկա, երբ մտածես թէ մարդիկ կան, որ իրենց քսակին մէջ տամնեալ հաղարճերը ունին . արդեօք վիրաւորական չէ աս . . .

Ոստիկանապետը մալնդհատ կը նայէր մուրացկանին երեսը, և իր աչքերուն մէջ աւելի զարմանք կերեէր՝ քան հիացում . . .

— Եւ այս բանը դո՞ւք դտաք . . . : Սակայն, դուք ազնիւ էք . . . դուք պարկեցած մարդ էք . . . դուք հերո՛ս էք . . . այս', անկատկած, հերոս :

— Սպասեցէ՛ք, պարո՞ն ոստիկանապետ . . .

— Այս', այս', դուք հերոս էք, կըսեմ ձեզի . կատարեալ հերոս : Զէ՞ որ դուք կընայիք . . . մէկ խօսքով, դուք հերոս էք : Այս', ուրիշ կերպ կարելի չէ անուանել . . . դուք պէտք է որ վարձատրուիք : Ի՞նչ է ձեր անունը :

— Յովհաննէս Բովիկեան :

Ոստիկանապետը մտածման մէջ ինկատ :

— Զարմանալի՞ բան : Ի՞նչ է ձեր արհեստը :

— Դժբախտաբար, պատասխանեց թափառաշրջիկը, ես ո՛ և է արհեստ չունիմ . . .

— Ինչպէս թէ ո՛ և է արհեստ չունիք, — ուրեմն մեծ դրամագլուխի տէր էք դուք :

— Ես կապրիմ՝ ողորմութիւն ինդրելով, պարո՞ն ոստիկանապետ :

Ոստիկանապետը մրուզը կախեց և շարունակեց պակամոգեսրուած ձայնով :

— Ուրեմն դուք մուրացկան էք :

— Այս', ինչպէս կը տեսնէք, պարո՞ն ոստիկանապետ :

— Հըմ . . . հըմ . . .

Ոստիկանապետը ինկաւ նորէն մատածման մէջ :

— Իսկ ձեր բնակատեղին, — հարցուց ոստիկանապետը՝ քիչ մը լոելէ յետոյ :

— Ի՞նչ բնակատեղի, — հարցուց մուրացիանը անհանգատութեամբ :

— Դուք բնակատեղի չունիք :

— Դժբախտատրար ո՛չ :

— Ի՞նչպէս թէ չունիք, կատակ կընէք, ի՞նչ :

— Կը հաւասարնեմ ձեզ որ՝ ո՛չ :

— Սուկայն, պէտք է որ դուք բնակատեղի մը ունեցած ըլլաք, այդպէ՛ս կը պահանջէ օրէնքը :

— Իսկ կարօտութիւնը կը պահանջէ որ բան մըն ալ չունենամ . . . ես աշխատանք չունիմ . . . ոչ մէկ միջոց՝ զոյտաթիւնս պահապանելու . . . ասկէ զատ, ես ձեր ու հիւանդունմ . . . կը տառապիս աղեթափութիւնէ . . .

— Աղեթափութիւնն, . . . աղեթափութիւնն . . . այդ բոլորը շատ լաւ . . . սակայն բանն ատոր մէջ չէ . . . դուն կը տառապիս աղեթափութիւնէ . . . դուն բնակատեղի չունիտ . . . դուն թափառաշրջիկ ես . . . հերոս . . . այո՛, անկասկած հերոս ես . . . սակայն, մինոյն ատեն, դուն թափառաշրջիկ ես . . . այո՛, այո՛ . . . հերոսներու համար օրէնք չի կայ, իսկ թափառաշրջիկներու համար՝ կայ . . . և ես օրէնքով պէտք է զեկավարուիմ . . . հաճելի չէ ինծի համար, բայց ի՞նչ կուգայ ձեռքէս . . . որէնք կայ, որ պէտք է իշխէ . . . և ատիկա այս ծերուկին պէտք էր . . . դիպուած է, ի՞նչ պիտի ըսես :

Եւ ասդին անդին կը գարձնէր ձեռքին քսակը :

— Ահա քսակ մը . . . ասիկա, անչուշտ հասկնալի է . . .

Եւ քու վիճակիդ մէջ գանուռդներէն քիչեր այդպէս պիտի վարուելին . . . շատ լաւ գիտեմ . . . ես երբեք չեմ ուղեր ըսել թէ՝ դուն գէշ վարուած ես . ընդհա՛կառակը . . . քու վարմունքը շատ գովելի է, վարձատրութեան արժանի . . . և հարկաւ, քեզի կուտանք 25 զուրուշ, իրու վարձատրութիւն, երբ գտնենք քսակին տէրը, — եթէ երբեք գտնենք, . . . աս այսպէս . բայց դեռ չի նշանակեր որ դուն բնակատեղի ունիս . . . խնդիրը ասո՛ր վրայ է : Լոէ՛, բարեկամս, ոչ մէկ տեղ, ոչ մէկ օրէնքի մէջ չի կայ այնպիսի կէտ մը՝ որ քեզ պարտաւորեցնէ փողոցին մէջ դրամով լեցուն քսակ մը գանել . սակայն, կայ կէտ մը՝ որ քեզ կը պարտաւորցնէ ունենալ բնակատեղի . . . կը հաւատացնեմ քեզ որ աւելի լաւ կընէիր, եթէ քսակին տեղ, բը նակատեղի մը գտնէիր քեզի համար . . .

— Ուրիմն, ի՞նչպէս, հարցուց մուրացկանը :

— Ահա այսպէ՛ս, պատասխանեց ոստիկանապետը, կը տեհոնես . . . դուն այսօր կը գիշերես ոստիկանատունը, ապա կը խրկեմ քեզ բանս :

Եւ հնչեցուց զանգակը : Եկան երկու ոստիկան : Ոստիկանապետը նշան ըրաւ : Երբ մուրացկանը դուրս կը հանէին՝ կը մըթմըթար անիկա .

— Եռ քեզի պատամութիւն . . . ճիշտ կըսէի որ այսօր բանս յաջող չերթար . . . և այդ յիմար հարուստները իրենց գրապանին մէջ կը պահան հարիւր ուկիներով քսակներ . . .

Եւ վիրաւորական չէ արդեօք աս . . .



## ԿՈՂՈՎԱԳՈՐԾԻՆ ԵՐԳԸ

Ոզորի՛ շիւղեր,

Ոզորի՛ շիւղեր, կորացէ՛ք արագ  
կողովագործին ժիր մատներուն տակ:

Դուք պիտի ըլլաք օրրանն ապահով՝  
ուր երկարաշունչ բաղցրիկ հունչերով  
մայրիկը կօրէ մանկիկն իր սիրուն,  
որ շրբունքը քաց՝ կարէն փրփրուն,  
կը նիրնէ անդոյր մահնին մեջ թերեւ,  
ժպիտ մը լանձալ՝ դեմքին լոյս, արեւ:

Ոոզորի՛ շիւղեր,

Ոզորի՛ շիւղեր, կորացէ՛ք արագ  
կողովագործին ժիր մատներուն տակ:

Դուք պիտի ըլլաք տակառն այն աղուոր,  
լեցուն կարմրակ ելակներով, որ  
կերպան խաղելու կրյսեր քեւ քնդ քեւ,  
քաւուտներուն մեջ խալելով քերեւ.  
Եւ երբ տուն դառնան ժպտագին ու քոյլ,  
հասուն միրգերը կը բերեն ծոյլ ծոյլ:

Ոզորի՛ շիւղեր,

Ոզորի՛ շիւղեր, կորացէ՛ք արագ  
կողովագործին ժիր մատներուն տակ:

Պիտի ըլլաք դեռ նգոյին ոզորէ.

որով գեղշկունին ցորեն կը մաղէ,  
մինչդեռ երերուն իր կողերն ի վեր՝

կը բռչին արագ ձիճառի խումբեր,  
կուռելով բամենել հունտերն այն դեղին,  
ինկած ցիր ու ցան երեսը հողին:

Ոզորի՛ շիւղեր,

Ոզորի՛ շիւղեր, կորացէ՛ք արագ  
կողովագործին ժիր մատներուն տակ :



Ու երբոր աշնան այգիներն ամեն՝  
ծիրանի, բոսոր ծածկոյրներ առնեն,  
երբ այգեպաններ զոն այլ յոգնաբեկ,  
վար իջնեն հանգարտ բյուրներէն սկզ,  
պիտի կապէք դուք ծիրեր տակառի,  
ուր զինին կեռայ եւ կը կարմրի :

Ոզորի՛ շիւղեր,

Ոզորի՛ շիւղեր, կորացէ՛ք արագ  
կողովագործին ժիր մատներուն տակ :

Դուք պիտի ըլլաք վանդակն այն ժպտուն՝  
ուր կը դայլայլ բռչնիկը այգուն.

կամ ոզորակը՝ մեծ ու նենգաւոր,  
ուր՝ մինչ ձկնիկը խանդով մանսովոր,  
ջուրը կափսէ իր ճկուն մարմնով,  
յանկարծ կը քալրի խարակներուն բով :

Ոզորի՛ շիւղեր,

Ոզորի՛ շիւղեր, կորացե՛ք արագ  
կողովագործին ժիր մատներուն տակ :

Դեռ պիտի ըլլամ մամինն այն յետին  
դուք՝ մարմնին մեռած կողովագործին,  
որ դագաղին մեջ դնելէ առաջ,  
պիտի զետեղեն հօն լալահառաչ,  
եւ պիտի անցնին, երբ դառնան նորէն,  
ոզորին ծաղկած նել նամբաներէն :

Ոզորի՛ շիւղեր,

Ոզորի՛ շիւղեր, կորացե՛ք արագ  
կողովագործին ժիր մատներուն տակ :



## ԵՐԿՐԱԳՈՐԾ ՄԱԹՕՅԻՆ ԲԵՐԴԸ

— Խելագա՞ր ես, Մա՛թօ. քանի մը հեղ լսեր եմ, նու-  
րէն կըսեմ: Թշնամին անցեր է սահմանը, կոխուը տարածուեր  
է մեր երկրին մէջ, և դեռ զուն այնպէս կը ձեւանաս՝ որ իրը  
թէ բան մըն ալ չես լսեր: Տեղէդ անգամ չես շարժիր, մինչ-  
դեռ կը տեսնես որ մենք ամէնքս կը պատրաստուինք փախչիլ:  
Նոյնիսկ, դիմադրութեան համար ալ բան մը չես լրած:

— Ինչէ՞ն գիտես:

— Ինչպէ՞ս թէ չեմ գիտեր: Զէ՞ որ կը տեսնեմ թէ  
դան մըն ալ չես լներ, այլ միայն կը վարեմ ու կը ցանես,  
որէ զոր նոր վարեկառեզեր կառնես, նոր մարգագետիններ կը  
պատրաստես, ճահիճներ կը չորցնես և նոր ու բարձր ցանկա-  
պատճեր կը շինես կաղուածներուդ շուրջը: Աս ալ բաւական  
չէ, ամսէ ամիս կը շատցնես տաւարդ և կը նորոգես գործիք-  
ներդ: Կամ այն է որ կը կարծես թէ թշնամին չի գար, կամ  
այն է որ՝ չեմ գիտեր թէ ի՞նչ կը մատճես:

— Լա՛ւ, ի՞նչ կուզեիր որ լսէի: Խորհուրդ տուր ինծի,  
սիրելի դրացիս, կարելի է գուն ինծմէ աւելի խելացի ես:

— Դուն ալ ընկըու էիր՝ մնիր ամէնուս ըրածին պէս:  
Ահա տասը տարի է որ ես բան մը չեմ շիներ: Հոզերս կուտա-  
յին, ինչ որ կրնացին աալ՝ առանց մշակուելու: Յետոյ, ես  
ձախեցի աաւարս ու հոգերս, և ինչ որ կրնացի կանխիկ դրամի  
վերածել: Հիմա, ես ամբողջ հարստութիւնս հեռս կը պարտ-  
ցնեմ: Մեկնելէ առաջ՝ պիտի վառեմ տունս ալ, այնպէս որ,  
իրը թշնամին գայ, բան մը չգտնէ . . .

— Ամէն մէկը իր ըրածին կը հաւաի, սիրելի՛ դրացի:  
Դուն կը լիցնես զրպաններդ, իսկ ես հոգին մէջ կը թաղեմ  
իմ ունեցած հարստութիւնս: Ի՞նչ կը կարծես, ո՞րը աւելի  
ասկանով կը մնայ՝ երբ թշնամին մեզ գերի տանէ: Թշնամին  
կրնայ գալ ու աւրել իմ պատրաստած աւուներս: Զէ՛: Ահա  
կը տեսնե՞ս. դուն կը՝ զարմանաս որ նոր հոգեր կը վարեմ,  
նոր մարգագետիններ կը պատրաստեմ: Ի՞նչ, կը կարծես որ  
թշնամին կու գայ և իր հետ կը տանէ իմ գութանիս ակօսը  
և իմ մշակած գաշտե՞րս: Զէ՛: Բնդհակառա՛կը. ինծի այնպէս  
կու գայ որ, սիրելի դրացիս, իմ բացած աւուներս՝ իմ խրա-  
մատներս են, իմ այգիիս ցանկապատը՝ իմ բերդիս պարիսան  
է, իմ արտերս ու մարգագետիններս՝ իմ սահմանիս ամբու-

թիւններն են : Եւ այս բոլորին մէջ՝ ես զիս կը զգամ այնքան  
ապահով , որքան ամբոցի մը մէջ :

— Բայց թշնամին կրնայ մը ջապատել և զրաւել ամբողջը . . . : Ի՞նչ կընես այն ատեն :

— Երբ թշնամին դայ , ես կրսեմ անոր . «Ահա այս տեղ  
են իմ ունեցած ու չունեցածն . . . եթէ կրնա՝ ա՛ռ . . . : Բեր-  
դիս բանալին ըր կուգիս . . . տա՛մ քեզի . . . » և իրեն կերկրն-  
ցնեմ այս բան ու այս ըրիչը :

— Անիկա գերի կառնէ քեզ և կը տանէ օտար երկիր . . .  
ի՞նչ պիտի ընես այն ատեն տունդ ու տեղդ :

— Տունս ու տեղս միշտ պէտք կը լլան ինձի : Վերջա-  
պէս , օր մը չէ օր մը՝ կուրը կը վերջանայ և գերիները կը  
փոխանակուին , ահա այն ատեն , երբ հայրենիք վերադառնամ-  
գոնէ գութանիս խոփր կանցնեմ պատրաստ ակօսի մէջն :

— Իսկ եթէ չվերադառնա՞ս :

— Իմ զաւակս ետ կու գայ :

— Հաստ եթէ զաւակիդ ալ չեկաւ :

— Է՛հ , մէկ ուրիշն զաւակը ետ կուգայ :

— Դուն խելագար ես , Մա՛թօւ Պարագ տեղը դուն  
քեդ կը յոզնեցնես : Աճապարէ՛ , եկո՛ւր մեղի հետ՝ քանի դեռ  
թշնամին զօրով չէ տարեր քեդ : Զե՞ս ուզեր , կեցի՛ր բարալ :

— Բարի՛ ճանապարհ , դրա՛ցի : Ես ժամանակ չունիմ  
կորսնցներու . պիտի շտապեմ՝ գարին ցանեմ , քանի դեռ թըշ-  
նամին չէ եկիր և չէ յափշատկեր իր ձիւրուն համար : Ահա  
արդէն կերկնայ լճին միւս ափը . կը ծուի դէպի մեղ . . .



## ԱՄԷՆԱԿԱՏԱՐԵԱԼԸ

### 1

Յոզնա՞ծ օրուայ աշխատանքէն , ընկողմաննը էր Փրկիչը՝  
հանգատանալու , տերևակիտ ծառին հովանին տակ :

Յոզնած էր , բայց նորէն կրնար ականջ դնել իր աշա-  
կերտներուն խօսակցութեանը :

Աշակերտները կը վիճէին թէ , Տիրոջը ստեղծագործու-  
թիւններուն մէջէն , ո՞րն է ամէնակատարեալ բանը :

Մէկը՝ ամէնակատարեալ կը համարէր ծիածանը , որ կը  
փայլի երկրի բոլոր գոյներովը : Միւսը՝ թանկազին քարերը :  
Երրորդը՝ ամպերը , որոնք կը պարունակեն իրենց մէջ կեան-  
քի գոլոշն , և միշտ կը փոխեն իրենց ձեն ու գոյնը :

Յովհաննէս ամէնէն գեղեցիկ բանը կը գանէր մանկան  
պայծառ ու անմեղ դէմքը :

Ծերունի Պիտոսը ըստու . . . Աշխարհքի մէջ , ի՞նչ բանի  
վրայ ալ որ աղէկ նայիք , կը տեսնէք թէ գեղեցիկ է :

Յուղա իսկարովացին պատասխաննեց , — ծիչտ է որ  
մեր առջեւ գանուած ամէն բան հրաշագեղ է , բայց և այսպէս  
անոնց մէջ տարբերութիւն մը կայ : Արդեօք արմաւենին , իր  
ձկունութեամբ ու գեղեցիկութեամբ , չի՞ գերազանցեր հաստ-  
րակ խոտը , որ ո՛ւ և է պառող չի տար և հազիւ կը բարձրա-  
նայ գետնին երեւն :

### 2

Փրկիչը , նիրհի մէջ , տկանջ կը դներ այս խօսքերուն :

Եւ Յովհաննէս դարձաւ դէպի անոր , ու ըւաւու .

— Ուսուցիչ , ես զիտեմ որ յոզնած ես . բայց քու ա-



շակերտմաներդ կը վիճին սա՛ բանին վրայ թէ՝ կարելի՞ է արդւ-  
հօք մեր Հօր ստեղծագործութենէն մէկը ամէնէն աւելի կա-  
տարեալ համարել :

Յիսուս նայեցաւ անոր ու ըստ .

— Այո՛, կարելի է :

Աշակերտմաները նորէն սկսան վիճիլ թէ՝ Ուսուցիչը ո՛ք  
բանը ամէնակատարեալը կը համարէ :

Անդրէաս ըստ , — Տիրոջը ստեղծագործութիւններուն  
մէջ՝ ամէնակատարեալը ստողալից երկինքն է :

Յիսուս սպատասիանեց . — Երկինքին մէջ մի՛ փնտոեր  
այն բանը՝ որ կրնաս երկրին վրայ գանել : Երկրին վրայ բան  
մը կայ, որ աւելի բարձր է քան ստողերը :

Պետրոս ըստ , — Ես ամէնէն շատ կը զարմանամ լեռնե-  
րուն վրայ : Կա՞յ բան մը որ սպառաժեայ լեռնէն աւելի հզօր  
ու ահաւոր ըլլայ :

Յիսուս սպատասիանեց . — Այն բանը՝ որ դուք կը փըն-  
տոէք, աւելի հզօր է :

Յովաննէսին եղբայրը՝ Յակոբ, ըստ . — Ծովը հզօր է  
քան լեռը : Մըրկալից ալիքները կը փշրեն ապառաժը, մինչ-  
դեռ մէկը չի կայ որ չափէ ծովուն խորութիւնը :

Իսկ Յիսուս սպատասիանեց .

— Այն բանը՝ որ դուք կը փնտոէք, աւելի խոր է  
քան թէ ծովը :

Խօսցաւ Բարթողիմէոսը, Յովաննէս Մկրտչի նախկին  
աշակերտը . — Ծաղիկներէն աւելի գեղեցիկ բան չի կայ աշ-  
խարհիս մէջ . չի կայ բան մը՝ որ աւելի հրաշալի ըլլայ չուշանէն:

Յիսուս սպատասիանեց . — Այն բանը՝ որ կը փնտոէք,  
աւելի գեղեցիկ է :

Այն առեն ըստ . Փիլիպպոս .

— Դուք կը մոռնաք արեք, որ իր ճառագայթներով կը  
լուսաւորէ ամբողջ աշխարհը և կը տաքցնէ երկիրը :

Յիսուս սպատասիանեց .

— Այն բանը, որ դուք կը փնտոէք, աւելի սաք է :

Մնացած աշակերտները նոսեր էին լուս, չնամարձակելով  
յայտնել իրենց կարծիքը :

### 3

Երկար լուսթենէ յետոյ, նորէն խօսեցաւ Յովաննէս .

— Ուսուցի՛չ, անշուշտ չիս փափաքիր որ մնաք խար-  
խափենք անորոշութեան մէջ : Բաէ՛, ո՞րն է այդ ամէնակա-  
տարեալ ստեղծագործութիւնը, զոր մնաք չենք կրնար դանել :

Եւ Յիսուս իր նայուածքը դարձուց դէպի բարձրը և ըստ .

— Սիրտը :



## ՍԱՍՈՒՑԻ ԴԱԻԻԹԻՆ ԿՌԻՒԸ

1

Համբաւը տարին Մըսրայ Մելիքին •  
— «Հապա՞ չես լսե՞ Թաւիրը կրրկին  
հօր վաներ շիներ, իշխան և դարձեր,  
դուն եօրը տարուան խարճը չես առեր:»  
Մելիք գալրացաւ.  
— Եռւս, գացէ՛մ, բաւ,  
Բաղին, Կոզբաղին,  
Սիւդին, Զարխաղին,  
Սասմայ բարն ու հուլ տակ-վըրայ ըրէ՛մ,  
իմ եօրը տարուան խարան բերէ՛մ:  
Քառսուն կոյս աղջիկ բերէ՛մ արմաղան,  
Քառսուն կարն կընիկ՝ որ երկանի աղան,  
Քառսուն ալ երկայն՝ որ ուղտեր բառնան,  
իմ տանս ու դրանս աղախին դառնան:  
Ու Կոզբաղին առաւ գօթեր.  
— «Գրլխուս վրայ, բաւ, ի՞մ տէր,  
Երբամ հիմա բանդեմ Սասուն,  
կընիկ բերեմ Քառսուն-Քառսուն,  
Քառսուն բեռ ալ դեղին ոսկի,  
տեղը ջնջեմ Հայոց ազգի:»  
Ըսաւ, Մըսրայ աղջիկ ու կին  
պար բրոնեցին ու երգեցին.  
— Մեր Կոզբաղինն երբայ Սասուն,  
կընիկ բերէ Քառսուն-Քառսուն,

Քառսուն բեռով ոսկի բերէ,  
մեր նակատին շարոց շարէ,  
բերէ կարմիր կովեր կըրան\*  
զարնան շինենք եղ ու չորրան:  
Ճա՞ն Կոզբաղին, խա՞ջ Կոզբաղին,  
Սասմայ Թաւօն զարկաւ զետին:»  
Ու Կոզբաղին փրկած, ուռած.  
— Շնորհակալ եմ, Տօլե՛ր, պոռաց.  
մինչեւ զալս համբերէցէ՛մ,  
ու ա'յն ատեն պս թ լունեցէ...»

2

Ասպես Երգով,  
գօռով - գրքով՝  
գոռ Կոզբաղին մրտաւ Սասուն:  
Լսեց Օհան, կապուաւ լեզուն:  
Աղ ու նացով,  
լաց ու բացով՝  
առջեւն ելաւ,  
խնդիրք ըրաւ.  
— Ինչ որ կուզես, ա'ն, տա՛ր, ամա՛ձ,  
վարդ աղջիկներ՝ գառան նրման,  
դառն դատած դեղին ոսկին,  
միայն զըրա՛ մեր խեղն ազգին,  
մի՛ կոտորեր, մի՛ տար մահու,  
վերեւ՝ Աստուած, ներեւը՝ դու...»  
Ըսաւ, բերաւ շարան - շարան  
կին ու աղջիկ՝ զառան նման:

Ու Կողբադին կեցաւ, զատեց,  
մարագն ըրաւ, դուռը փակեց,  
հառսուն զոյգ աղջիկ՝ սիրուն արմաղան,  
հառսուն կարճ կրնիկ՝ որ երկանք աղան,  
հառսուն ալ երկայն՝ որ ուղուեր բառնան,  
Մըրայ մելիին աղախին դառնան.  
դեղ-դեղ հաւեց դեղին ոսկին,  
սեւ սուզ պատեց Հայոց ազգին:

## 3

Հեյ, ո՞ւր ես, Դաւիթ, Հայոց պահապան,  
հարը պատուրուի, դուրս եկուր մեյտան:  
Քանդած հօր վանեն որ շինեց նորեն,  
վլար իջաւ Դաւիթ Մարուրայ սարեն,  
ժանգոտած, անկոր շեղիկ մը գտաւ,  
զընաց պառաւին շողգամը մըտաւ:  
Պառաւն եր եկաւ, անէծք, աղաղակ...  
— Վայ, խելա՛ռ Դաւիթ, շողգամի տեղակ  
դուն կրակ ուտես, ցաւ ուտես, ըսաւ.  
աչք աշխարհին մէջ մինակ զի՞ս տեսաւ.  
կորեկս ըրիր գետնին հաւասար,  
աս եր մընացեր ձմեռուան պաշար,  
աս ալ կը կտրես,  
ինչպէս սպրիմ ես:  
Թէ կտրին ես դուն, աղեղդ ա՛ռ, վազէ,  
հօրդ աշխարհին տիրուրիւն ըրէ՛,  
հօրդ գանձը կե՛ր,  
բողեր ես անտէր

որ Մըրայ Սուլքանն եկեր, կը տանի:  
— Ի՞նչ կը բարկանաս դուն վիրաս, նա՛նի,  
ան ինչԵ՞ր կրսես, ես չեմ հասկընար.  
Մըրայ Սուլքանը մեր ինչը կառնէ:  
— Մըրայ Սուլքանը մեր ինչը կառնէ...  
Մըրայ Սուլքանը աչք կը հանէ,  
եյ խեւուկ Դաւիթ. զօք ու հրաման  
եկեր և Սասմայ բաղադին վրան,  
Բադին, Կողբադին.  
Սուլին, Զարխադին  
բալանի կու տան բովանդակ Սասուն.  
հառսուն բեռ ոսկի խարան և կուզեն,  
հառսուն կոյս աղջիկ՝ սիրուն արմաղան,  
հառսուն կարճ կրնիկ՝ որ երկանք աղան,  
հառսուն ալ երկայն՝ որ ուղուեր բառնան,  
Մըրայ Մելիին աղախին դառնան:  
— Ալ ի՞նչ, այ պառաւ, դուն զիս կանիծես.  
ցոյց տուր ինձ տեսնեմ, ո՞ւր և որ կուզեն:  
— Ո՞ւր և որ կուզեն... մահս տանի ենց.  
ան կտրին հօրը զաւակը դո՞ւն ես...  
եկեր ես այստեղ շողգամ կը լափես...  
Կողբադինն ոսկին ձեր տունը համբեց,  
աղջիկներն ալ ձեր մարազը ըրխեց:  
Շողգամը բողուց Դաւիթը, զընաց,  
տեսաւ՝ Կողբադին իրենց տան վերեւ  
կը չափէ ոսկին դիզած իր առջեւ.  
Միւդին, Զարխադին պարկերն են բըռներ,

Զենով Օհանն ալ շրլինքն է ծըռեր,  
կանգներ է հեռուն, ձեռքը ծոյն անձան:  
Տեսաւ, աչերն է արիւն լեցուեցան:  
— Եթի՛ր, Կողբադի՛ն, մեկ կալմ քաշուիր դուն,  
հօրս ոսկին է, ե՞ս պիտի չափեմ»:  
Կողբադինքն ըսաւ. — «Եյ, Զենով Օհան,  
կու տաս՝ տուր խարճը ևս եօրը տարուան,  
թէ չէ ես կերքամ, արե՛ւս վրկայ.  
Մըրայ Մելիքին կը պատմեմ, կու գայ.  
ձեր Սասմայ երկիր քար ու քանդ կընէ,  
տեղը կը վարէ, պոստան կը ցանէ...  
— Կորսըուեցէ՛, զուտ, դուք Մըրայ շուներ,  
որտաց Դափիր, կրսես թէ ամպ էր.  
մեռա՞ծ կը կարծէ՛ դուք մեզ թէ դիակ.  
որ գայ ու Սասուն դընէ՛ խարճի տակ...  
Հասաւ, չափն առաւ եւ վերցուց, նետեց  
ու Կողբադինին զլուխը պատռեց.  
չափին Փշաները պատն անցաւ, գրնաց,  
մինչեւ այս օրս ալ դեռ կերքայ բրուա՞ծ:  
Եւ ելան՝ բափած ոսկին բոլուցին,  
Հայոց աշխարհին փախան ու գացին  
Բաղին, Կողբադին.  
Սիւդին, Զարխադին:



## ՈՒՂՏԸ ԵՒ ԱՍԵՂԸ

### 1

Խորասանի մէջ կապրէր ուղտապան Նազիմը: Նազիմն  
ունէր հինգ ուղտ, հինգ բարձրահասակ, յաղթանդամ ուղտ,  
որոնք շատ կը սիրէր: Եւ ի՞նչպէս չափրէր, երբ Նազիմ շատ  
շատ տինարներ էր ծախսեր՝ այդ կենդանիները գնելու համար:  
Ուղտապանը կը պարծենար մահաւանդ իր ուղտերէն  
մէկովը, որուն անունն էր Նաս:

Նառը դեռ շատ փոքր էր՝ երբ Նազիմ ձեռք էր բերեր  
զայն: Գներ էր 500 ամինարի, ճիշտ այն գինով՝ ինչով որ գներ  
էր միւս չորս ուղտը միասին:

Նառը քարւանսպաշին էր: Ան էր որ միշտ առաջնորդի  
դերը կը կատարէր. ուժեղ էր բոլորն և բարձր էր միւս ուղտ-  
տերէն՝ իր ամրագ գլխովը: Գիշերուայ նման սև էին իր աշ-  
քերը: Իր կարծ ականչները, լայն ճակատը և երկար դունը  
զարդարուած էին 50 հատ բոժոժներով, այդ քան ալ գոյնզգոյն  
թելերէ և փայլուն կտորներէ: Կարուած վինդիկներով: Քարւա-  
նին պղնձակուռ զանդը՝ կապուած յուլունագործ լայն կաշիի  
վրայ, կախուած էր Նասին վիզին:

Նազիմ չէր կշամնար՝ անոր նայելին:

### 2

Նազիմ աղօթասեր էր, չէր մոռնար երբեք իր նա-  
մազը. խստութեամբ կը պահէր բոլոր ծէսերը և Պուրանի  
պատուէրները:

Անգամ մը, երբ արեգակը մարը մասու և իրիկուան  
գովը, աղջամուղջին հետ, պատեց երկիրը, Նազիմ իր ուղ-  
տերուն վրայ բարձաւ թանկազին ապրում ու գիտակ, կա-



տարեց իրիկուան նստմազը, և տեղաւորուելով Նատին փառուկ սապատներուն մէջահեղ, քարւանին հետ ձամբայ ինկաւ աւագուտ անապատին մէջն :

Գիշերն ամբողջ, Նազիմ դնաց անմողաբնակ, լուռ, լայնածաւալ, քնացած ծայրի պէս անշարժ անապատէն : Փայլուն աստղերը կր վառէին մութ-կամոյա երկնակամարին վրայ, և Նազիմին ցոյց կուտային հեռաւոր ուղին :

Եւ Նազիմ փառք կու տար Ալլահին, ու կը զարմանար անոր խմասութեանը վրայ : Քարւանին խրաքանչիր քայլին կը հնչէր Նատին զանդակը խոր բայց ու ժղին աղմուկով պոռ... ում, բօ՛... օմ» :

Կը սահէր գիշերը, կր բացուէր օրը : Կը զունասէին աստղերը և կը մարէին մէկ-մ, կու եսեէ :

Արեւելեան կողմը, ամպերու փարիկ կաորները շառագունեցան սակեգոյն չոպիով :

Նազիմ շինց աչքերը, յօրանչից, կոտքառեցաւ, և նայելով իր դիմացը՝ նշմարեց իջևանին մութ ստուերանկարները և ձիթենիներու մսիրագոյն զլու ինսերը :

— Հօ՛-հօ՛-հօ՛, հօ՛-օ-օ, ու բախ բացականչից Նազիմ իրակուսելով յոզնած ուղտերը :

Նառը հասկյաւ տիրոջը միտքը, արադայուց իր ջղուտ, ծուռ ոտքերը և խոչորյուց քայլերը :

## 3

Յանկարծ, ուղաբերը կանգ առին: Լաեց զանգը: Նազիմ գարմացաւ, բարձրացաւ նստած տեղէն և տեսաւ Նատին դիմաց, հինգ քայլ հեռուն, դեղին աւարդին վրայ ծռած պառաւ կին մը:

— Եյ, պա՛ռաւ, ի՞նչ քարւանիս առջելը կը կտրես. հեռացի՛ր, ճամբա՛յ տուր, — բարկութեամբ պոռաց Նազիմ իր թամբէն, ինչովէս Խան մը իր գահոցքէն:

— Ա՛խ, քարւանձի Նազիմ, — ըստ պառաւը չոքեցո՛ւր ուղտ, վա՛ր իջիր, զնուուէ, ասեղս ևմ կորմացուցեր: Մատներս այնպէ՞ս թուլյեր են՝ որ ասեղը գլորուեցաւ, ինկաւ աւազին մէջ. Ի՞նչ կընեմ, չեմ կընար գանմէ: Ես շատ ծերացեր եմ. Ալլահը զրկեր է զիս աչքի լոյսէ. գուն երիտասարդ ես, քու աչքերդ լաւ կը տեսնեն: Ի՞շ'ր, քարւանձի, գտի՛ր պառաւին մէկ հաստիկ ասեղը. անով շապիկս պիտի կարեմ ուժածկեմ մերկութիւնս:

— Ի-ի՞նչ... քու չնչին ասեղիդ համար իմ լեռայ պէս ուղտս չոքեցնեմ, — պոռաց Նազիմ, չհաւտալով իր ականջներուն: Պառա՛ւ, քու տարիքիդ ծանրութիւնը տկարացուցեր է ո՞չ միայն աչքերդ, այլ և խեղքիդ մնացած մասն ալ:

Հօ՛-հօ՛-հօ՛, — բացականչից Նազիմ, քաշեց սանձը և քշեց Նառը:

Նառը առաջ անցաւ, անոր ետեւէն ալ՝ խօսք լող մանուկներու նման, միւս չորս լնկիրները: Զանցաւ բոպէ մը և կորեցաւ պառաւին թող, աղերասդ ձայնը:

— Բոստ, ժանգոտած ասեղի մը համար՝ ամբողջ քար-

ւանը պիտի կանգնեցնեմ եղեքր, — կը մրթմրթար ճամբան շարսնակ Նազիմ՝ բարկացած պառաւին յանդզնութեանը։ Ես կաճապարեմ որ արեգակը վրայ չամի, իսկ այդ պառաւը իր ասեղով մէջտեղ է ինկեր։

Եւ Նազիմ վար ցատկեց Նառէն՝ իջեանին դռան առջև, ճիշտ այն պահուն՝ երբ շառագոյն արեգակը բարձացուց իր ծայրը հորիզոնին հտևէն։

Նազիմ ուրախ և աշխոյժ, տարաւ ուղտերը քարէ պարիսպով չըջապատուած մեծ բակը, չոքեցուց զանոնք, քակեց պարանները ծանր մնառուիներուն վրայէն, և շտապով վերցուց տոպրակները, վազեց դարման գանելու՝ անօթի ուղտերուն համար։

Երբ բերաւ դարմանով լի տոպրակները, զարմանքով տեսաւ որ Նառը չի կայ։ Նազիմ հանը նայեցաւ, սակայն բակին մէջ բան չի կար։ Վար դրաւ տոպրակը և դուրս վազեց։

Իր առջև կը փոռուէին լուռ անապտին գեղնագոյն աւագուտները. բայց Նառը չի կար ու չի կա՛ր, կարծես չիքէր եղեր։ Նազիմ կորմնցուց զլուխը. սկաւ վազել, բայց ո՞ւր, ինք ալ չէր գիտեր։

#### 4

Շատ վազեց թէ քիչ — չեմ գիտեր։ Իր ճերմակ չալման ինկեր էր ծոծրակին վրայ, իսկ թուլի ճակտին շուրջ կերենային քրամինքի խոշոր կաթինը։

Յանկարծ, կը տեսնայ ճամբուն վրայ նստած սեւաներ, դեռատի աղջիկ մը՝ որ աւազին մէջ բան մը կը փնտոէ։

Նազիմ զլխահակ, մօտեցաւ անոր։

— Քորի՛կ, չի տեսա՞ր արդեօք իմ ուղտս, իմ թանը կազին Նառս, իմ լիռան պէս Նառս, իր յիսուն բոժոժներով, ։

Կրիներանգ թեկերէ և փայլուն կտորներէ կարուած վիճիկներով. անոր վրայ երկու մնառուկ կար՝ ապրչումով և դիպակով լեցուն։

— Ալին ըստ որ եթէ ես այսօր չվերջացնեմ իմ պսակերթերս, ուրիշ նշանած պիտի գանէ, — դառնօրէն պատասխանեց աղջիկը։ Ես ալ, չեմ գիտեր ինչպէս եղաւ, ձեռքէս վար ձգեցի ասեղս, հիմա չեմ կրնար գտնել։ Նազիմ, հեղ մը դուն տես, կրնա՞ս գտնել ասեղս։

— Ես ուղտս կըսիմ, լիռան նման Նառս, թանկազին ապրանքներով Նառս, — կրկնեց Նազիմ՝ աւելի բարձր ձայնով ։ Զե՞ս տեսեր ուղտս։

— Այ, հո՞ս գլորուեցաւ ասեղս, — ցոյց տուաւ աղջիկը՝ իր առջեի աւազուար, ուշաղրութիւն անգամ չզարձնելով Նազիմի խօսքերուն։ Տե՞ս, Նազիմ, կը դանե՞ս ասեղս։

— Աղջի՛կ, — պոռայ Նազիմ, Նա՛սս կըսիմ, Նա՛սս, չի՞ս տեսեր զայն։ Իմ Նառս, ուղտս, որուն 500 տինար եմ տուեր։

— Ի՞նչ քարը տամ գլխուս։ ո՞վ կը պահէ ինծի պէս տունը մնացած աղջիկը՝ եթէ Ալին ալ ետ ըլլայ ինձմէ, — արտասուալից աչքերով խօսեցաւ աղջիկը։ Նազիմ, վնասէ ասեղս։

Նազիմ, տեմնելով որ այդ աղջիկն հասկնալիք բան չունի, ինինդ կարծեց զայն, թողուց ու վազնէվաղ հեռացաւ։

#### 5

Շատ վազեց թէ քիչ — չեմ գիտեր։ Ճերմակ չալման վար ինկաւ զլխուն, և բաց, ինամքով ածիլուած զլխուն վրայէն՝ քրամինքը առատօրէն կը հոսէր երիսն ի վար, կը թըրջէր պիխերը ու կիշնար բերանը։

Յանկարծ, Նազիմ գետ մը կը տեսնէ, անոր ափը ձըկ-

նորս մը , որ նոյնպէս թայ աւազին մէջ բան մը կը փնտռէ :  
Նաղիմ խելակորոյս , մօտեցաւ ձկնորսին :

— Միւլիմա՞ն , կրօնակի՞ց եղբայր , չտեսա՞ր արդեօք իմ  
ուղաս , իմ թանկագին , լեռան նման նառս , իր յիսուն բո-  
ժոժներով , երիսներանդ թելերէ և փայլուն կտորներէ կարուած  
վնջիկներով , և երկու մնառուկ թանկագին ապրանքներով :

Զինորսը պատասխանեց .

— Ա՛խ , քարւա՞նձի Նաղիմ , քրքրուեր է ուռկանս ,  
կուղէր որ կարկանկմ զայն , բայց չգիտմալով՝ վա՞ր ձգեցի ա-  
սեղս աւազին մէջ , և չեմ գտներ . . . իսկ զաւակներս անօթի  
են , ձուկ պիտի որսամ՝ որ կերակրիմ : Հեղ մը տե՛ս , չե՞ս  
գտներ ասեղս :

— Ուստ կըսիմ քեզի , իմ հսկայ Նա՛ռս , ապրշում ու-  
ղիպակի բարձած Նառս , — կրկնեց Նաղիմ , աւելի բարձրացնե-  
լով ձայնը : Զե՞ս անեկը ուղաս :

— Հա՛յ , կարծես այստեղ գլորուեցաւ , ա'սեղս կըսիմ , —  
ցոյց կուտար իր առջև ձկնորսը , չմելով Նաղիմին խօսքերը :  
Տե՛ս , վնտուէ՛ ասեղս , Նաղիմ :

— Գետի՞նն անցնի ասեղդ , — պոռաց Նաղիմ , համբե-  
րանքը կորանցուցած : Նա՛ռս կըսիմ , Նա՛ռս , չե՞ս անեկը Նա-  
ռս , որուն 500 տինար եմ տուեր :

— Ես չեմ կրնար զաւիներուս առջև ելլալ՝ մինչեւ ձուկ  
չի տանիմ . . . Նա՛ռիմ , վնտուէ՛ ասեղս :

Նաղիմ , տեսնելով որ ձկնորսէն խեր չի կայ , իսկով տեղ  
դրաւ զայն , թողուց և վազեց , հեռացաւ :

6

Շատ վաղեց թէ քիչ — չեմ գիտեր : Արեգակը բարձրա-  
ցաւ երկնակամարին վրայ և իր կիզիչ ճառագայթներով կայ-  
քէր Նաղիմը , Նաղիմին ոտքերէն կը թափէին իր տրեխին վեր-

յին կոռոները , և աւազը , կրակի պէս , կայրէր անոր բողիկ  
ոտքերը :

Նաղիմ յանկարծ կը տեսնէ հովիւ մը : Կը վաղէ անոր քով :

— Հովիւ , եղբա՛յս , ըսէ՛ ինծիւ : չի տեսա՞ր արդեօք  
իմ ուղաս , իմ թանկագին Նառս , իմ լեռան նման Նառս ,  
յիսուն բոժոժներով Նառս , երիսներանդ թելերէ և փայլուն կը-  
տորներէ կարուած վնջիկներով , վրան թանկագին ապրանքներ  
բարձած Նառս :

— Ա՛խ , Նաղիմ , — վշտահար ձայնով խօսեցաւ հովիւը ,  
բոնելով իր ստքը : Ոտքս չոր փուշ մըն է մաեր և չի թողուր  
որ երթամ իմ հօտիս ետեէն : Ուղեցի որ ասեղով հանեմ , բայց  
չեմ գիտեր ինչպէս եղաւ , ասեղն ինկաւ ձևոքէս , այ , ճիշտ  
սա՛ աւազին մէջ , ու հիմա չեմ գտներ : Հեղ մը գո՛ւն նայիր ,  
Նաղիմ :

— Ուղաս կըսիմ , իմ լեռան պէս Նառս , թանկագին  
հակեր բարձած ուղաս , էյ միւսլիման , — պոռաց Նաղիմ հո-  
վիւին ականջին : Զե՞ս անեկը ուղաս :

— Եթէ ես ետ մնամ , գալիքը կը յափշտակին ոչխար-  
ներս , կը խեղդեն բոլորը , — կը գանգատէր հովիւը : Նաղիմ ,  
հեղ մը տե՛ս , էյ , ո՞ւր է ինկած ասեղը :

— Յիմա՛ր , խո՛ւլ քեափիր , — պոռած Նաղիմ յուսա-  
հատած , բոնելով հովիւին երկու թիկաւնքներին : Նա՛ռս կըսիմ ,  
Նա՛ռս , չե՞ս անեկը իմ ուղաս՝ որուն 500 տինար եմ տուեր :

— Այ , հոս ձգեցի ասեղը , — ըսաւ հովիւը , մէկ ձեռ-  
քով ցոյց տալով աւազը , իսկ միւսով բանելով փուշ մտած ոտ-  
քը : Եւ չը զգար նոյնիսկ թէ Նաղիմ կը ցնցէր իր ուսը :

Տեսնելով որ հովիւէն սպասելիք բան չի կայ և համարե-  
լով զայն ալ ցնորած , Նաղիմ թողուց , հեռացաւ :

7

Շատ գնաց թէ քիչ—չեմ գիտեր։ Արեգակը բարձրացեր  
և ուղահայեաց դիրք էր ընդուներ, անխնայ կը թափէր իր  
ճառագայթները Նազիմի վրայ և կայրէր զայն՝ ոտքէն մինչեւ  
գլուխը։ Անբախտ ուղտասպանը կը զգար որ՝ վերջին ուժերն  
իսկ կը դաւաճանէին զինք, կը ծալուէին ոտքերը։ Զորցան  
շրթունքները և ճաթրտեցան, տապ օդը կայրէր իր ծանրացած  
կուրծքը։

Յանկարծ, նորէն տեսու պառաւ կին մը։

— Ահ, մայրիկ, պառաւ, խնայի՛, լսէ՛ ինձի. ըսէ՛,  
սիրելիս, չի տեսա՞ր արդեօք իմ ուղտս, իմ թանկագին Նա-  
ուրս, իմ լիւայ պէս Նաուս, յիսուն բոժոժներով, գոյնզգոյն  
թելերէ և փայլուն կտորներէ կարուած վնչիկներով, վրան  
ապրշում ու դիպակ բարձած հակերով. իմ թանկագին Նաուս,  
որուն 500 տինար եմ տուեր։

— Ասե՛զս վնտոէ, որովհետեւ պէտք է կարեմ շապիկս  
և ծածկիմ մերկութիւնս, — ըստ պառաւը։

Նազիմ սարսափ զգաց այդ ձայնէն և դողդզաց ամբողջ  
մարմնով։ Վեր վերցուց բուռնցքները և յուսահատութեամբ  
իջեցոց իր թաց, շոգիի մէջ կորսուած գլխուն, ու ինկաւ ե-  
րիսի վրայ՝ դեղին աւաղին մէջ։

8

Եւ Նազիմին տեսիլք մը երեցաւ։

Կանգնած է իր առջև սիրելի Նաուը՝ թանկագին հակերը  
վրան, կանգնած է շատ մօտ և կը նայի իր արողը՝ սև, խե-  
լացի աչքերով։

Նազիմ կերկնցէ ձեռքերը, կուզէ զրկել անոր երկար,  
փափուկ պարանոցը, բայց, յանկարծ, գեսնէն դուրս կը  
ցատկէ վոքրիկ, ժանգուած տակը մը և կը ծածկէ ուղտը։

Նազիմ կը բոնէ ասելը, կուզէ հանել տեղէն, սակայն  
ասելը խոյս կուտայ, Շուրջը, կանցնին՝ կը դառնան մարդիկ,  
բայց՝ չի կայ մէկը որ ուզէ փրցնել ասելը, Նազիմ կը խընդ-  
րէ, կաղերսէ, կուլայ, բայց բոլորն ալ կանցնին՝ առանց ու-  
շաբդութիւն գարձնելու։

Սակայն, ահա կը մօտենայ իրեն՝ պառաւ մը։ Իր մայն  
է, իր սիրելի մայրը, որուն մարմինը ինք վազուց, շատ վա-  
զուց տարեր է Մէքքէ և յանձներ է հողին։

— Ահ, մայրիկ, — կաղերսէ Նազիմ, Աստուած բար-  
կացեր է զաւկիդ վրալ, և մարդիկ, այս աշխարհի մէջ, լրենց  
երեսը կը գարձնեն ինձմէ։ Ոչ ոք, ոչ ոք չուզեր վնասել իմ  
սիրելի ուղտս, թանկագին բնուներով ուղտս։ ոչ ոք չօգնիր ինձի։

Պառաւը խիստ և անտարբեր նայեցաւ զաւկին, և ըստաւ.

— Դուն ինչպէս մարդոցմէ կը պահանջնո որ, թողած  
իրենց առօրեայ հոգերը, գան քու ուղտ վնասուեն, երբ գուն՝  
անդորր սրաով, գիշերն ալ լաւ հանգստանալէ ետք, չուզեցիւ  
գետնէն վեր վերցնել պառաւէին փոքրիկ ասելը։ Մէծ է քու  
յանցանքդ, որդի՛ս, և արդար է Ս.մէնակարողին դասաստանը։

Նազիմ ինկաւ գետին, փաթթուեցաւ մօրը ոտքերուն և  
դառնապէս լացաւ։

— Մայրիկ, մայրիկ, — կը հեկեկար անիկա, զարնելով  
իր գլուխը գետնին։ Եօթն օր, եօթը զիշեր կազօթնում և կը  
ինդրեմ Ալլահէն՝ որ ներէ իմ ծանր յանցանքս։

— Ո՛չ, չի ներուիր քու մեղքդ, — կը պատասխանէ  
պառաւը։

— Մայր, բապիկ ոտքով, զլուխս ու կործքս բաց՝ կեր-  
թամ սրբազն քաղաքը, և քառասուն օր, քառասուն գիշեր

զիսում մոխիր կը ցանեմ։ Քառասուն գիշեր պահք ու ծոմ կը պահեմ, որ Ալլահը ներէ իմ ծանր մեղքիս։

— Քու աղօթքներդ ու ծոմերդ այնչափ կը թիթեցնեն վիճակդ, որքան դգալ մը անուշ չերպեթը՝ ովկիանոսին դառնութիւնը, — խօստ կերպով պատասխանեց պառաւը։

— Մայր, մայր, — կաղերսէր Նազիմ, և ճանկուտելով երեսն ու կործքը՝ կը պարատէր, ինչ ընեմ, ըսէ՛, ինչո՞վ քաւեմ իմ մեծ մեղքս։

— Աչքի՛ս լոյս, թանկագին որդիս, — լսեց Նազիմ մօրը մեղմ և քնքուշ ձայնը։ Փնտու՛ ուրիշն ասեղը այնպէս՝ ինչպէս քու թանկագին ուղտդ, և կը ներուի քու ծանր յանցանքդ։

Եւ պառաւը չքացաւ օդին մէջ, ինչպէս ամող կէսօրուայ ժամանակ։

## 9

Երբ Նազիմ ուշարերեցաւ և ոտքի ելաւ, արեգակին վերի ծայրը կիրենար արեմուտքին մէջ այնպէս, ինչպէս հեռաւոր մզկիթին պղնձէ կիսալուսինը հորիզոնին վրայ։

Նազիմ կորագլուխ գնաց փնտուելու հովիւը, ձկնորսը և սեահեր աղջիկը բայց, ոչ մէկը գտաւ։ Լուռ, մտախոն անապատը ամայի կը փռուէր իր շուրջը։

Յանկարծ, իրեն այնպէս թուեցաւ թէ՝ կը զօղանջէ քարւանին ղանգը։ Բարձրացուց զլուխը — իր առջեն է իշեանը, և իրիկուան օդին մէջ կը հնչեն սիրելի ու թանկագին ձայները՝ բու . . . ում, բօ . . . օմ . . .

Նազիմ վաղեց ձայնին կողմը, և հազիւ ծոեցաւ քարէ պարիսպին անկիւնէն, տեսաւ իր հսկայ Նառը։ Զիթենիներուն տակ, կենդանին հանգիստ կարածէր տատասկները։


Նազիմ ծունդի եկաւ և բացագանչեց։

— Արդա՛ր է քու դատաստանդ, ո՛վ աշխարհներու Ստեղծագործ, անսահման է քու ողորմութիւնդ։

Եւ նորէն լսեց մեղմ ձայն մը։

— «Փնտու՛ ուրիշն ասեղը այնպէս՝ ինչպէս կը փնտուէիր քու ուղտդ։»

Ծովագոյն աղջամուղջը կը սփռուէր լայնատարած, մըտախոն անապատին վրայ, և աներեսյթ ձեռքեր կը վառէին երկնքի կանթեղները։



Մեղրակեցներու — Տարրական Ա. և Բ., Միջն Ա. և Բ., տարի — պատրաստութեան միջոցին՝ հեղինակը օգտուած է նաև եւրոպական և կովկասահայ հրատարակութիւններէ։



ՀԻՒԹԵՐՈՒ ԸՆԴԱ

1. Երասիկի վրայէն . . . . .	5
2. Աշուն . . . . .	10
3. Պատկերը . . . . .	11
4. Ճերմակ քողը . . . . .	14
5. Տէմիր Ղայա . . . . .	15
6. Խեցգետինը, Ճուկն ու կուրպալը . . . . .	20
7. Աղբեկը . . . . .	21
8. Խնչու ա՛լ ես գողութիւն չըրի .	26
9. Թուջունի մոտածումը . . . . .	32
10. Աւազը . . . . .	33
11. Խօնչ կըսէին եղանիները .	37
12. Նաւազար . . . . .	39
13. Իր մեծ Տօրա պատմութիւնը .	40
14. Աշնան վերջը . . . . .	47
15. Խնչ ընես, առջեղ հոռ գոյ .	50
16. Իշխանին նոր լաթերը .	54
17. Ենունդի տօնը . . . . .	62
18. Պզտիկ ընդօրինակիչը .	65
19. Ամպերու քարուտնը .	73
20. Գիշերապահ Մկօին երազը .	74
21. Կէտադրութիւն . . . . .	77
22. Զիրիդ . . . . .	82
23. Ներկատու կենդանիներ .	83
24. Մեղաւորը . . . . .	88
25. Ապուքամթը . . . . .	90
26. Փոքրիկ պատկերներ . . . . .	92
27. Հօր սուգը . . . . .	94
28. Վերջին ապաւէն . . . . .	96
29. Իշխանն ու Ճիծեռնակը .	97
30. Աշխատանքի երգը . . . . .	106
31. Քոչ . . . . .	109
32. Կարկուտը . . . . .	112
33. Խնչո՞ւ կուլայ . . . . .	115
34. Գեղջուկը . . . . .	119
35. Մարդիկ ինչպէս գիր հնաւրեցին . . . . .	121
36. Հոյերէն գրերու գիւտը .	125
37. Գարունն եկաւ . . . . .	129
38. Վանտառութը . . . . .	130
39. Աղաւնու վանքը . . . . .	139
40. Զէ՛, ուրիշ անգամ . . . . .	141
41. Հին օրհնութիւն . . . . .	143
42. Ի՞նչպէս հնարուեցաւ տըպագորութիւնը . . . . .	145
43. Հողածինը . . . . .	149
44. Անիի աւերակները . . . . .	159
45. Առկայծ ճրագ . . . . .	161
46. Թափառաշրջիկը . . . . .	162
47. Կողովագործին երգը . . . . .	168
48. Երկրագործ Մաթօխն բերգը .	170
49. Ամէնակատարեալը . . . . .	173
50. Սասունցի Դաւիթին կուիւը .	176
51. Ուզու և տսեղը . . . . .	181



2013 3604-3607

«Ազգային գրադարան»



NL0059764

«Ազգային գրադարան»



NL0059763

«Ազգային գրադարան»



NL0059762

«Ազգային գրադարան»



NL0059761

02 - 0

10 - 50

